



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3263





9(47.925)

Կ-99
միջ

ԿՐՊԵ


12019

ԿԱՐՍ ՔԱՂԱՔ

Խ07
31833



448



ՄՈՍԿՈՒ

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԻՆՈՒհԴԱՐԵԱՆԻ

1893


38643 ик.


ЧИТАТЬ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 13 мая 1893 года.

2004
2489-60 8

Типографія Х. Бархударовой, Мясницкая, домъ Ермаковыхъ.





ՅԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԸ ՅՈՎՀԵԱՅՆԵՑՆՅ.

ԱՆ ՄՈՌ ԱՆ ԱԼԻ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱ

ՅՈՎՀԱՆԶԱՆԵԱՆՑԻ

ԹԱՆԳԱԳԻՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն.

Ամբողջացնել այն հատ ու կտոր տեղեկութիւնները՝
որոնք տարիների ընթացքում պարբերաբար հաւաքուել
են ինձ մօտ. մատակարարել ապագայ պատմաբանին հում՝
անմշակ՝ նիւթեր Կարս քաղաքի անցեալ և ներկայ պատ-
մութեան նկատմամբ, երկիս բուն խորհուրդն ու նպա-
տակն է եղել:

Ես ջանացի հայ ընթերցասիրի, կամ, որ աւելի
Ճիշտն է, Կարսի անցեալ ու արդի զրութեամբ հետաքր-
քրուող բանասիրի զրասեղանի վրայ դնել և իմ ունե-
ցած նիւթերի անշուք հաւաքածուն:

Կարս քաղաքի պատմական անցեալի վերաբերու-
թեամբ օգուտ եմ քաղել զեր. Տ. Ղեոնդ վ. Ալիշանի
«Այրարատի» մէջ զետեղուած Կարսի պատմագրութիւնից,
անտարակոյս թերթելով և այն բոլոր պատմական աղ-
բիւրները՝ որոնք առաջնորդել են նրան յիշեալ տեղագրու-
թիւնը կաղմելիս: Իմ աշխատութեանը մեծապէս նպաս-
տել են՝ հին, զբշագիր աւետարանների և ուրիշ զրքերի
յիշատակարանները, մի քանի անտիպ ժամանակագրու-
թիւններ, Կարսի հայոց հոգեոր Կառավարութեան գոր-
ծերը, նախկին առաջնորդական, քաղաքական, կրօնական
և ուրիշ ժողովների արձանագրութեանց տումարները,
ցարդ մեղ հասած աւանդութիւնը և կենդանի պատմու-

թիւնը, որոնք սակայն (ծերունիք) շատ սակաւ առաջ-
նորդեցին ինձ, երբ լուսում էր քարտէզը կամ կարօտում
էր նրանց աջակցութեանը:

Հնարաւոր եղածի չափ ես աշխատել եմ հեռու պա-
հել իմ անձնական հայացքները գործից. չ' շեղուել իրա-
կանութեան ճանապարհից, տալ փաստերի և եղելութեան
իսկական պատճէնները - լուսանկարները — զա եղել է իմ
ուղեցոյցը:

Մթութեան կամ խաւարի մէջ խարխափող մի քանի
խնդիրներ, որոնք լուսաբանել անհնարին կամ ապարդիւն
է համարուել ես թողել եմ նոյն՝ անորոշ դրութեան
մէջ, առանց շօշափելու մթութեան քօղը, կամ մերձենա-
լու լուսի նշոյլներին . . .

Կ Ր Պ է.

Վ Ե Ր Ա.

Դեկտեմբեր, 1892 թ.

Կ Ա Ր Ս Ք Ա Դ Ա Բ.

ՊԱՏՄՈՒԹՅՈՆ ԱՆՑՔԵՐ.

Կարս, Ղարս կամ¹ ըստ հին պատմիչների՝ Կա-
րուց քաղաքը, որ ներկայումն Անդրկովկասեան առաջին
և նշանաւոր բերդաքաղաքն է, գտնւում է Այրարատեան
աշխարհի նախկին Վանանդ գտառում և յայտնի է մեր
պատմութեան մէջ, որպէս իշխանանիստ և արքայանիստ
քաղաք, որպէս անառիկ բերդաքաղաք՝ իւր բնական բարձ-
րաբերձ ու ժայռոտ դիրքովը, ամուր՝ ռազմական հզօր
միջնաբերդովն ու շքապատող բազմաթիւ մարտկոցներով։

Հին քաղաքի կեզրոնում, անդնդախոր բարձրունքնե-
րի ստորոտից լուելեայն հոսում է Սօզանլուխի լեռնա-
շղթաներից իւր սկիզբը ստացող՝ պատմական՝ «Ախու-
րեան» կամ այժմեան՝ «Կարս-չայ» գետը, որը սակայն
յաճախ յիշւում է «Ռահ» անուամբ, որ անտարակոյս
սխալ է¹, որովհետեւ Ռահը Վաղարշապատի մօան էր, ուր

¹ «... Ո՞վ հաւանիմ զ Մեծագետն այն կոչեցեալն մասն Արքա-
չչայի՝ լինել «Ռահ» գետ, որպէս համարեցան ոմանք յարդեացա» : (Հ.
Ղ. գ. Ալիշան, «Այրարատ» երես՝ 5):

Հայոց Վաւամշապուհ թագաւորը, մեծն Սահակի հետ, զիմաւորեց ս. Մեսրոպին Հայկական լեզուի տառերը ընդունելու^{1:}

Մեր պատմիչները ժ—ժԲ գարերում յիշում են Կարսի գետը Ախուրեան անունով և զանազան յիշատակազիրներ ժԶ և ժԷ գարերում նոյն անունով են ձանաչում. «Ղարս քաղաք՝ ի վերայ Ախուրեան գետոյ»: Ասողիկ խօսելով Խաչկայ կաթողիկոսութեան և Արդինայի եկեղեցու շինութեան մասին, Կարուց գետը՝ Ախուրեան է անուանում. «Եւ նորոգեաց (Խաչիկ) զառւնն «կաթողիկոսարանին՝ ի Շիրակ գաւառի՝ ի գիւղաքաղաքին» Արդինայ, յեղերս Ախուրեան գետոյ, ի Հանգստարանի «Տետոն Անանիայի Հայոց Վերապիտողի»^{2:}

Կարսը աւելի հոչակ կամ մեծ նշանակութիւն ստացաւ ներկայ՝ ԺԹ-Դ գարում, արեւելեան կամ որ աւելի Ճիշտն է, Խուս-Ժրբական չորս նշանաւոր պատերազմների շնորհիւ, որոնք խակապէս տեղի ունեցան՝ 1807, 1828, 1853—6 և 1877 թուականներին, որ հուսկ յետոյ՝ նոյնմերի 6-ին, 1877 թ. վերջնականապէս նուաճեցին նրան ուուները և այդ օրից ել համարուեցաւ նու սեպհականութիւն Խուսաց կայսերութեան:

Ստրաբոն և Պատրումոս աշխարհագիրները Խորպինի անունով են Ճանաչում նրան, որի հետ և բովանդակ Վանանդաց աշխարհը, անուանելով ցուրտ և Ճիւնաշատ երկիր Երասխայ ափանց մօտ: Մատթէոս պատմիչը՝ ԺԹ-Դ գարում կոչում է Խարս. իսկ կենդանի տաւանդութիւնը Ճգնում է ապացուցանել «Հարս» կամ Հարսի քաղաք լինել: Թէե վրացիք պնդում են՝ «Կարիս-քաղաք» կոչել որ նշանակում է՝ «Դրան-քաղաք», սակայն այդ ենթա-

գրութիւնը իսպառ տնհիմն է և անհեթեթ, որովհետեւ նրանց տիրապետութիւնից աւելի քան երեք հարիւր տարի առաջ, Հայազդի պատմագիրները յիշում են նրան վերեւում առաջ բերուած անուններով:

Կարսի սկզբնաւորութիւնը համարւում է Դ գարից^{1:} իսկ որպէս աթոռանիստ նախարարական տոհմի՝ Թ դարի կիսից^{2:}

Նախ՝ Աշոտ Բագրատունի իշխանաց իշխանի եղբայր՝ Սմբատ սպարապետը հաստատեց Կարսում իւր իշխանական աթոռը (մինչև 902 թ.) ապա՝ նրան փոխարինեց Սմբատ արքայի երկրորդ որդի՝ Արա (929—953) և անուանեցաւ թագաւոր Կարուց. իսկ երբ սրա անդրանիկ որդին Աշոտ Գ. հաստատեց իւր թագաւորութեան գահը Անիում, կրտսեր որդին (Արասի) Մուշեղ թագիապեց (961—985) և կոչուեցաւ թագաւոր Վանանդայ և Կարսը անուանեցաւ Մայրաքաղաք: Դրան յաջորդեց իւր որդին Արաս (985—1030 թ.), որ 45 տարի թագաւորելուց յետոյ, վախճանեցաւ և Կարուց թագաւորութիւնը անցաւ իւր որդի՝ Գագկայ ձեռք մինչև 1064 թիւը. և այսպէս՝ Կարսի փոքրիկ թագաւորութիւնը տեղ համարեա մի և կէս գար:

Կարսը գտնւում է 5818³ ունաշափ բարձրութեան վրայ ծովի մակերեւութից. Հին քաղաքը զրուած է քարքարոտ զառիվայրերի հետ ամփիթէատրոնի ձեռվ և անկանոն ու անճաշակ շինութիւններով. իսկ այժմեանը՝ նոր կազմուած նախագծի համաձայն՝ ընկնում է գետի աջ ափի հետ, զէպի արեւելք ուղղութեամբ, երբեմն բարձրաւանդակների և երեմն հարթ ու ընդարձակ տա-

¹ Մովսէս Խորենացի: — ² «Աղքարատ» (Երես՝ 75 և 80):

³ Իսկ ամբութիւնների մէջ բոլորից բարձր համարուած՝ «Ոօօպ» մարտկոցը գտնւում է՝ 6992 ունաշափ բարձրութեան վրայ:

¹ Կորիւն պատմից:

² Ասողիկ եր. 185. (Երկրորդ տպագրութիւն):

րածութեան վրայ. լայնկեկ, խճած փողոյներով, որ իրենց ուղղութեամբ ու զիրքով ռազմագիտական նշանակութիւն ունեն և Ճոխացուած են գեղեցիկ ու վայելուչ շինութիւններով: ¹ Ի դէպ՝ սրանից աւելի քան 900 տարի առաջ յիշւում է նոյն բարեշինութիւնն ու Ճոխութիւնը նաև Մուշեղի օրդին՝ Արամի օրով, մի առաւելութեամբ միայն, որ գեղեցիկ շինութիւնների հետ՝ ծաղկեցրել է այդ տեղ նաև վաճառականութիւնն ու արուեստը. «Սա (Ա-« բաս) յառաջ քան զթագաւորելն իւր էր մանուկ փցիթ և կայտառ, և կարծիս տայր տեսողացն՝ անհաղորդ լինել « բարեաց ինչ գործոց հոգեւորաց: Իսկ յորժամ եհաս նա « յաթոռ թագաւորութեանն՝ երեւեցաւ նա, այր շքեղ լի « հանձարով և իմաստուն, ընդ առաջին իմաստունս հա- « մարեալ, և դարձաւ նա յայր այլ»^{1:} Եւ սկսում է նա իւր բարեկարգութիւնները նախ դադարեցնելով Վանանդի աշխարհից աւազակութիւնն ու մարգագաւութիւնը՝ «զոր « ազգն Վանանդայ իբրև զհայրենի ունէին, ըստ ասելոյ « պատմազրին»^{2:} Իսկ Կարսի քայքայումը սկսումէ հէնց իւր (Արամի) օրդին՝ Գագկայ ժամանակից, որ նոյնպէս հօր նման՝ խոհեմ և շինարար է եղել: 1053 թ. մի շարք ուրիշ, հայկական, գաւառների հետ, թուրք Սելչուքները ահարկու զօրութեամբ մօւա գործեցին Վանանդ գաւառը և յանկարծակի խուժեցին Կարս. «Քաղաքս այս ՚ի բա- « զում ժամանակաց հետէ չէր զփորձ չարեաց առեալ, վասն « որոյ յանհոգս և յանկասկածի էին, հարստացեալ բա- « զում ընչեղութեամբ ՚ի ծովէ և ՚ի ցամաքէ ամբարեալ: « Արդ ՚ի գալ մեծի յայտնութեան Տեառն մերոյ, ՚ի զի- « շերին՝ յորում ուրախական ձայնիւ դասք քահանայից « հանդերձ բազմամբոխ ժողովրդովքն զպաշտօն աւուրն կա- « տարէին, յանկարծակի ՚ի վերայ հասին զօրք անօրինացն՝

¹ և ² Ասողիկ. (Երես՝ 196):

« և քանդի առանց զիշերազիտաց էր քաղաքն, մտեալ ՚ի ներքս սուր ՚ի վերայ առն եղեալ անօղորմ կոտորեցին « զամենեսին՝ որ յոյժ ողբոց արժանի է պատմութիւնս: « Քանդի օրէն է քաղաքաց ՚ի տէրունական տօնսն բազում « զարգարանօք վայելչանալ արանց և կանանց, ծերոց և « տղայոց ըստ ոյժոյ և ըստ կարողութեան, ըստ նմանութեան զարնանաբեր ծաղկանոցաց... Մեծահարկի և պատ- « ուական վաճառականը՝ չարաչար մահուամբ սպանեալք, « երիտասարդը և ըմբշամարտք ՚ի փողոցսն սրակուորք. « պատուական ալիք ծերոցն արիւնաշաղախ առ նոքօք ան- « կեալ և այսպիսօրէն գործովք սպառեցաւ քաղաքն յա- « րանց»^{1:}

Այս միջոցին բարձուած էր արդէն Բագրատունեաց թագաւորութիւնը Անիում և այդ՝ ձոխ ու փարթամ, գեղեցիկ ու զարգարուն արեելքի թագուհին՝ (Անին) յայտնի գաւաճանութեան շնորհիւ՝ անցել էր ապերախտ թունաց ձեռու... .

Սելչուքների Տուղրիլ Սուլթանը Կարսի հարստութիւնով ու Ճոխութիւնով հրապուրուած՝ վերջիշեալ անցքի հետեւեալ տարին՝ 1054 թ. վերստին արշաւեց զէպի Կարս, սակայն այս նուազ քաղաքը անպատրաստ և անհոգ չէր, այլ կազմ և պատրաստ զիմազրելու և մարտնչելու, թէև խղճուկ հայ ժողովրդին վիճակուած էր ձակատագրական պարտութիւն ու գառն հալածանք:

Այս պատերազմի մէջ յիշւում է մի նշանաւոր զէպք. քաջամարտիկ Թաթուլ զօրականը հերոսական կոտորածի ժամանակ, սրի ծանր հարուածով վերաւորում է նաև Արսուրանայ պարսից ամիրայի օրդուն, որի համար և ինքն էլ ձերբակալուելով՝ զիխատում է փոքրողի ասպատակից. «...զմի ոմն յազատացն կալեալ, որում ա-

¹ Արիստակէս Լաստիվերտցի. (Երես՝ 61):

« նունն էր Թաթուլ, որ էր այր հզօր և պատերազմասէր,
« զոր առեալ տարան առ Սուլտանն։ Եւ քանզի կարեվէր
« խոցեալ էր զորդի Արսուրանայ պարսից ամիրային, զոր
« իբրև ետես Սուլտանն՝ ատէ. թէ դա ապրի, գքեղ աղա-
« տեմ. ապա թէ մեռանի, գքեղ դմա մատաղ հրամայեմ
« առնել, որ յետ սակաւ աւուր մեռաւ. Իսկ նորա պա-
« տասխանեալ. թէ իմէ զարկածն՝ չէ կենաց, թէ այլում է
« ոչ զիտեմ: Սուլտանն իբրև լուաւ թէ մեռաւ, հրամայեաց
« սպանանել զնա, և զաջ բազուկ նորա հատեալ, ետ տա-
« նել Արսուրանայ՝ ի մսիթարութիւն թէ՝ ի վատ բազկէ
« չէ մեռեալ քո որդին»^{1:}

Իբրև ճաշակ հնարազիտութեան և փարթամութեան
Գագկայ, մեր նախկին պատմիչները տռաջ են բերում
Հետեւեալը՝ Տուղրիլի մահից յետոյ, երբ ասպատակեց նրա
եղբայր՝ Ալփարսլանը, Գագիկ սև տարազ մոտած՝ որպէս
սպաւոր Տուղրիլի մահուան առթիւ, անշուք սենեակի մէջ
փոշու վերայ նստած, կոծում է իւր բազդը, անտարա-
կոյս ներքին նպատակ ունենալով ազատել Վանանդը՝
բարբարոսի աւերածութիւնից ու սրածութիւնից. այդ
երեսյթը սաստիկ զիւր եկաւ և հաճելի տպաւորութիւն
գործեց Ալփարսլանի վերայ, արքայական ծիրանի և ոս-
կեայ թագ ընծայեց խորագէտ Գագիկին և պատուիրեց
թագաւոր մնալ Վանանդայ.՝ ի նշան շնորհագիտութեան
իմաստուն պատանին Ալփարսլանի բանակի համար սե-
զան պատրաստեց ծախսելով հարիւր հաղար գահեկան
ոսկի:

Սյս գէպքից յետոյ, Գագիկ յուսահատելով, որ այլ
ևս անկարող պիտի լինի այդպիսի թշնամիներին միայ-
նակ զիմագրել, իւր երկիրը յանձնեց Յունաց կայսեր,
ստանալով փոխարէն Փոքր հայքում Մամնդաւ և Սերաս-

¹ Արիստակէս Լաստիվերտցի. (Երես՝ 66):

տիոյ երկրի մի մասը¹, ուր և փոխադրեց իւր իշխանու-
թեան տարաբազզ աթոռը: Սրանից յետոյ, յունաց կայ-
սրը վերակացու նշանակեց Կարսին՝ Բագուրանայ որդի՝
Գրիգոր իշխանին, որ նեղուելով Ակիւթացի ասպատակ-
ներից, 1084 թ. յանձնեց քաղաքը Վրացոց Գէորգի թա-
գաւորին, իսկ նա իւր կողմից ոստիկան նշանակեց Զա-
ւախեցի իշխաններից, սակայն այս ևս կարծատե եղաւ,
որովհետեւ Ահմէտ կամ Բուժզուք անունով մի թուրք
զօրավար արշաւելով այս կողմը, տիրեց քաղաքին:

1236 թ. երբ Թաթարները Զարմաղանի առաջնոր-
դութեամբ առան Անի Մայրաքաղաքը և սոսկալի կոտորած
ու աւերումն գործեցին. Կարսիցիք տեսնելով այդ՝ մտածե-
ցին հնարազիտութեամբ ազատուել բռնաւորի հալածան-
քից, ուստի և քաղաքի բանալին յանձնեցին նրան յօժարա-
կամ. ահա թէ ինչպէս է պատմում այդ երեսյթը Կիրա-
կոս վարգապետ Գանձակեցի պատմազիրը. «Սյս քաղաքս
« (Կարս) իբրև ետես որ ինչ գործեաց Թաթարն ընդ բնա-
« կիչս Անուոյ, փութացան և ածապարեալ տարան զբանալի
« քաղաքի ընդ առաջ նոցա, զի թերես խնայեսցեն՝ ի նոսա.
« իսկ նորա քանզի խանձեալ էին աւարաւ, ոչ ումեքէ
« ունէին երկիւղ զնոյն անցս և ընդ նոսա անցուցին, որ-
« պէս ընտանի, յափշտակութեամբ ընչից և ստացուածոց
« և կոտորմամբ ընակչաց, և աւերմամբ քաղաքաց անզար-
« գացուցեալ զվայելութիւն նորա, և գերի վարեալ զենա-
« կիչս, և սակաւ սինլքորս թողեալ զնացին՝ ի բաց... զոր
« յետոյ եկեալ զօրք Սուլտանին հոռոմոց՝ գերծեալուն՝ ի
« Թաթարէն մատնեցին՝ ի գերութիւն և ՚ի սուր անողոր-
« մաբար. ըստ զրեցելումն, թէ ահ, զուր և որոգայթ՝ ՚ի

¹ Իսկ ըստ Սմբատ սպարապետ (Գունտստապլ) պատմագրի
« Զինի սակաւ աւուրց դարձոյց Գագիկ զԿարս ՚ի Ցոյս, և նորա տվին
« նմա զՄամնդաւ և զԼառի և զԽաւատանէքն». (Երես՝ 63):

« վերայ ձեր՝ բնակիչք երկրի, և որ փախիցէ յահէն տնկ-
« ցի ՚ի գուշն, և որ ելանիցէ ՚ի գըէն՝ անկցի որոդայթ. և
« որ փախիցէ յայնմանէ՝ հարցէ զնա օձն, այսպէս եղեւ
« տառապեալ բնակչացն կարուց»:

Դրեթէ մի ամբողջ դար մնաց կարսը Թուրքաց տի-
րապետութեան ներքեւ. ապա՝ երբեմն Վրացիք և երբեմն
Թուրքերը, փոփոխակի կերպով, տիրեցին նրան և յաջոր-
դարար նորոգեցին քայքայուած պարիսպներն ու բրդերը,
ամրացրին ու նորանոր շինութիւններով ձոխացրին նրա
ռազմական զրութիւնը:

Երկրորդ կամ նշանաւոր նորոգութիւնը տեղի ունե-
ցաւ գրեթէ Զաքարիա սպասալարի և իւանէի աթաքա-
կութեան ժամանակ, այն է՝ ԺԲ—ԺԳ-դ դարերում, ինչ-
պէս ցոյց են տալիս բրդերի ու պարիսպների արձանա-
գրութիւնները (Վրաց Թամարայ և Ռուսուգունայ թա-
գուհոյ օրերով):

Հարևանցի կերպով մենք առաջ բերինք արդէն պատ-
մութեան այն կտորները, որոնք վերաբերում էին կարուց
կամ Վանանդայ հարազատ թագաւորութեան կրած հա-
յածանաց ու մզած պատերազմներին. այժմ կարեոր է ասել
նա և այն սոսկալի կոիւներն ու ասպատակութիւնները, որ
տեղի ունեցան օտարների տիրապետութեան ժամանակ:

1394 թուականին Լէնկթէմուր իւր ընդհանուր ար-
շաւանքի ժամանակ Փաքը Սօմիայում, կանգ առաւ նա և
կարուց երկաթագամ դոների առջեւ. քաղաքը մի քանի
շաբաթ մնաց պաշարուած զրութեան մէջ և ամենայն
աջողութեամբ կարողացաւ գիմազբել թշնամու զօրու-
թեանը, որ անկարող զգաց զինու զօրութեամբ զրուել:
Սակայն վերջ ՚ի վերջը Փիրուղպախթ բերդակալը կա-
մաւոր կերպով անձնատուր եղաւ, բայ արեց նրանց առ-
ջեւ հզօր պարիսպների մուտքը և բռնաւորը ներս խուժե-
լով՝ աւերեց բերդը:

ԺԵ-դ դարում մերթ անսիրտ Թուրքման իշխանների
և մերթ Վրացոց ձեռք անցաւ, իւրաքանչիւր անգամ
ծանր կոտորածի և յափշտակութեան մատնուելով: ԺԶ-դ
դարում յաճախակի բռնաբարւում էր նա Պարսիկ և
Օսմանցի ասպատակներից: Այդ ժամանակ Թիւրքաց Սուլ-
թան Սուլէյմանի և Պարսից Թահմասպ Շահի միջև,
ընդհանուր հայաստանի տիրապետութեան նպատակով,
մղուում էր անվերջանալի պատերազմը. երկու կողմից ևս
ասպատակները ամացացնում և աւերեում էին երկիրը կամ՝
որ աւելի Ճիշտն է հայ աղգաբնակութիւնը. . .

1548 թ. Սուլթան Սուլէյման նորոգել և ամրաց-
նել տուեց կարսի միջնաբերդը (Կըղալէ). իսկ 1551 թ.
առնելով Թահմասպ Շահը՝ աւերեց: Երկրորդ անգամ
տիրեց Սուլթան Սուլէյման 1556 թ. և այդ առ ժամա-
նակեայ պատերազմական զինադրուլի միջոցին վերստին
նորոգեց: Շահ. Իսմայիլի որդի՝ Թահմասպ Շահը վերստին
արշաւեց և զրաւեց քաղաքը. բայց այս անգամ կարծիս
յուսահատուած մշանջենական տիրապետութեան նկատ-
մամի, հնարաւոր եղածի չափ աւերելով ու քայքայելով՝
վերաբարձրեց Օսմանցոց, պայման զնելով այլ ևս բնաւ
շամրացնել: Սակայն 1579 թ. Սուլթան Մուրատի հրա-
մանով Լալա-Մուստաֆա փաշան ոչ միայն վերանորոգու-
թիւններ արեց, այլ և չորս հատ նոր մարտկոցներ շինեց
և խորունկ խրամով շրջապատեց բերդաբազաքը արևել-
եան կողմից¹, ինչպէս որ վկայում է Հարաւային կամ
միջին դրան Ճակատի տաճկերէն արձանը:

¹ Խօսելով այս մասին Հ. Պ. Ալիշան Հ'զիտեմ թէ ինչ աղ-
քիւրից է առաջ՝ առաջ է բերում իւր «Ալբարատի» մէջ՝ «ի պեղածի
և անդ, ասեն, գտաւ վէճ՝ յորում արձանս գրեալ էր յառաջ քան զամս
և 500 նդեալ շինութիւն բերդին, և ագուցին զալն ՚ի վերալ հարաւային
«դրան քաղաքին, որ եթէ ստոյգ իցէ՝ ժամանակաց Գաղկայ վերջնոյ
«թագաւորի ՚ի դէպ գալ»: (Երես՝ 85 և 86):

1603 թուականին Շահ-Աբաս պաշարեց, բայց անկարելի եղաւ նրան այդ՝ նորանոր մարտկոցներով և ռազմական անօթներով ճոխացուած բերդաքաղաքը առնել:

1735 թուին Թահմադ-Ղուլի-Խանը ցանկալով վրէժինգիր լինել Օսմանցիներից, որ նրանք Կարսի նահանգապետ՝ Արքի-Ահմետ-փաշի Հրամանատարութեամբ՝ 1724 թ. տիրեցին Երևան քաղաքին և սոսկալի կոտորածի ու աւարառութեան ենթարկեցին, առաջին անգամ արշաւեց գէպի Կարս, բայց չկարողացաւ առնել. իսկ 1745 թ. նա արշաւեց Երկրորդ անգամ ահազին զօրութեամբ և պաշարեց քաղաքը. Անկարով լինելով զինու զօրութեամբ տիրանալ բերդին, գետի հոսանքը արհեստական միջոցով կարել տուեց և 70 օր առանց մի կաթիլ ջրի թողեց ժողովրդին¹: Գետի մէջ գանուուած այժմեան բոլոր փոսերն ու հորերը, կենդանի աւանդութիւնը այդ հանդամանքին է վերագրում. մարդիկ ստիպուած էին ցամաքած գետի տեղում խորունկ հորեր փորելով՝ ջուր որոնել...

Հետեւեալ՝ 1746 թ. Օսմանցիք վերջնականատէս հարձելով պարսկական զօրութիւնը այս կողմերից, Ղարավաղիր կուսակալի Հրամանատարութեամբ ասպատակեցին գէպի Երևան Թահմադպահանի վրայ, որին չկարողանալով յաղթել, բաւականին զօրք կորսնելուց յետոյ, սպանուեցաւ նաև ինքը՝ Ղարա-Վաղիրը²:

1769 թ. Օսմանցոց Մուստաֆա-փաշայի սէրասկերութեան (կուսակալ կամ Հրամանատար զօրաց) ժամանակ ռուսները առաջին անգամ արշաւեցին գէպի Կարս, սակայն այդ արշաւանքը ռուսաց համար յուսացուած արդիւնքը չունեցաւ:

Իսկ ներկայ՝ Ժմանակ Կարսը համարուեցաւ

¹ և ² Զեռագիր լիշտակարան Կարսեցի Յովհաննէս քահանայի Տէր-Գարբիէլեանց:—³ «Ջամբռ» (Երևան՝ 42) և այլք:

մի տեսակ կռուածաղիկ երկու մեծ պետութիւնների՝ Ռուսաց և Օսմանցոց միջև: 1807 թ. յունիս ամիսին յայտնուեցաւ պատերազմը և ռուսաց զօրքը գեներալ-մայիսը Նեսվետայկի Հրամանատարութեամբ մուտ գործեց Կարսոց փաշալիկութեան մէջ¹, միաժամանակ զրաֆ. Գուղովիչն էլ արշաւեց գէպի Ախալցխա քաղաքը: Օսմանցոց զօրաց Հրամանատարն էր Էրզրումի (Կարնոյ) սէրասկէր՝ Խւսուֆ-փաշան: Պատերազմը երկարատև չեղաւ և ռուսները վերագրածան ձեռնունայն խաղաղութեան դաշն կապելով նոյն Խւսուֆ-փաշի հետ սեպտեմբերի 2-ին (1807 թ.), այնուհետև՝ ռուսները զարձնելով իրենց զէնքը Պարսից գէմ, պաշարեցին Երևանը և առան Նախիջևան քաղաքը 1808 թ.:

1828 թ. ապրիլի 14-ին յայտնելով պատերազմ Օսմանցոց զէմ, ռուսների զրաֆ-Պատկեհի Հրամանատարութեամբ մուտ գործեցին Տաճկական երկիրը և յունիսի

¹ Օսմանցիք այդ պատերազմին՝ ինչպէս և 1855 թ.՝ առաջ շարժուեցին և Գիւմրի գիւղի հանդէպ, Ախուրեան գետի աջ ափում դրին իրենց 30 հազարի շափ բնանկը, որի մասին այսպէս է խօսում իւր լիշտակարանի կամ ժամանակագրութեան մէջ Կարսեցի Մեծ Տէր Անտիս Վարպետը (Վարժապետ). «ԹՄԾԶ (1807) յունիս ամսոյն և նրեք անգամ օսմանցոց ասկեարն ուռուակ վերայ գնացին Գիւմրի գիւղն չի կարացին ախմեր էին կոտր ընկան շատ մարդ զայ եղեւ. յունիսի ամսուն Մուտարիսի տղայ Շարիֆ աղէն օրդին չաղրի մէջը գիշերը պարկած տեղը դուրսուուն դիպաւ ծմաւ, բերին հոս (Կարս) հորեցին... ՈւՄԾԶ (1807) յունիսի 18-ին օրն չորեքշաբթի Ղարսայ Մամադ փաշէն, Ղարաբագն, Ղարիա Ալօ փաշէն, Բողչալին, Փաշայ օղակին, Դալին, քրդի ասկեարը միատեղ օրդին դուռմիշ էին արեր Գիւմրի գիւղի զիմացը: Ուռուակ օրդին Գիւմրի գիւղն էր, յունիսի 18-ի բարիլուսի ժամանակը ուռուակ երիշ էրած օսմանցոց վերայ, մինչև վեց սընաթ պատերազմութիւն եղեւ, վերջը օսմանցոց կոտր ընկան. օսմանցիք փախուստ առին հւսուփ-փաշէն տեսաւ որ հնար չի կար, իւրեան կողմը ախմերվան, ուռուակ զուեց, շատ դալի սպանեցին, շատ

23-ին առան կարսը. ահա թէ ինչպէս է նկարագրում այդ կոիւը ժամանակակից յիշատակագիրը՝ կարսեցի Յովհաննէս քահանայ Տէր-Գաբրիէլեանցը՝ «'ի թուոջս ՌՄՀէ « (1828) յամսեանն յունիսի 15. էկաւ ըռումն... և շա- « բաթ օրն էր, Տրդատ թագաւոր տօնն, էկաւ Խալիֆ-Օղի « զիւղն և կիրակի օրն էկաւ Վաղի զիւղն. երկուշաբթի « օրն էկաւ անցաւ Ազատ կամ Ղանի զիւղն նստաւ. ե- « րեքշաբթի օրն էկան պատերազմեցան միմեանց հետ Աս- « տուծոյ յաջողութեամբ օսմանցոց կոտորեց, Դ. կամ Ե. « բայրախ և զալին ամենն սաղ բոնից տարաւ մէկ քանի « մարդ Էլ սպանեց, ոմանք ասին թէ Ժէ մարդ էր երկրէս. « չորեքշաբթի կամ Հինդշաբթի կամ ուրբաթ ասոնք ըռու- « սին թօփ կը ձգէին, ձգած թօփերն անոնց քոմի չէր հաս- « նիր, ուրբաթ զիշեր լուս շաբաթ օրն, յունիսի 22-ին « տօն Էր երկոտասամն առաքելոցն Պօղոսի, սոյին բարեխօ- « սութեամբն երիշ քաշեց, ոմանք Բայրամ փաշի դոնէն, « ոմանք միջի դռնէն, ոմանք թէղսարաբու, ոմանք Ղալից

« մարդ թալաֆ արին, որը ջարդեցին, որը եսիր արին, փախնող փախ- « նողի եղե. օրդին դաղլմիշ էրին. հասուփ փաշէն յետ փախուստ առաւ. « Էլ չատր, էլ սիլահ, էլ բրինձ, էլ եղ, էլ չամիչ, էլ շաքեար, երկու « տուն հաց, մումպաղ, փռուն, այնպէս դուռուլի թողին. 20—30 հա- « զար մարդու օրդի էր, ամենայն ինչ զատն էլ գտն! Էր կը. որը բերին, « որը մնաց օրդին ուռուսը զավթեց. այն օրին օսմանցին էկան թափան « քաղաքը, մուրքի, հայի վերայ մուսափիր տուին: Գ. անգամ օսմանցին « ուռուփի վերայ երիշ արած ցի կարաց. մէկ անգամ ուռուաը օսմանցոց « վրայ եկաւ այսչափ խախկութիւնն էրած. այսպէս բօղուն տեսնուած « չէր, կամ լսած. շատ մարդ վրալի արէն, չուփէն կամ սիլահը վար « ծգեց ծանապարհին իւրեան ջանը պրծուց ընկաւ քաղաքը. այսպէս մա- « լում լինի լսողաց. ես քիչ գրեցի, դուք շատ իմացէք.. Կէս աւուր « ուռուաը Մաղղբերդն առաւ. մտաւ բերդը մէջը շէնլիք կար. 30 կամ « 40 թուփանքի կար զէմ չառան բերդը 7 թօփ. ջերախանա շատ, թիւ- « քանք շատ, զախիրայ շատ, բրինձ, եղ, զիւղացոց աղլիս կար, ուռուաը « դամթ էրած»:

« վար թափան Զուխուր մաշլէն. անտից անցան ժամի « մաշլէն պալապանն առաջնին երիշ տարան բերդի դրւուն « մէկ քանի սալիքատ զարկուան, անտից յետ քաշուան « թօփերին կապեցին բերդի մէջն. Աստուած փրկէ ու ա- « զատէ կրակ թափեցին. մէկ քանի թօփ Էլ Հայոց մաշ- « լէն ընկան. երկուսն Օհանջաննեց երդիկն, մէկն Ղու- « յումչի Շաքեարոյենց սեամարը, մէկն մեր չետուլմէն, « մէկն Էլ Զօթոռոյենց Յովանէսի տունն փլուց Աստ- « ուած տուեց բան չեղաւ. մէկն ալ Մահտեսի Աւոյենց « օճախն քանցեց, մէկն Էլ յօտէն ծակեց, Աստուած « տուեց մէկ զիան չէրաւ. մէկ Էլ Աստուած հեռու ա- « բասցէ Օհաննեց այվանի փանջարեցէն մտաւ, երկաթն « ջարթեց միսոնդարէն ծակեց Օհանի ոտացն զիպաւ սաղ- « թեց, ոտքն կտրեցին ձղեցին: Անտից յետև ըռիա տուին « բերդի դրւուն բացին ըռուսն լցուաւ մէջը թալանեցին, « փոքր ինչ միջի դրւուն թալանեցին, Վարդան-Օղլու մաշ- « լէն թալանեցին, մէկ քանի տուն Զուխուր մաշլէն, մէկ « երկու տուն ժամի մաշլէն, այդքան թալանից ետև էմին « փաշէն, քէհէն և խաղնատարն և մէհտիւր պաշին և զա- « րիպ օլան ասկեարն ամէնն եսիր արին տարին չատրներն, « երկը աւուրից ետև ամենն Ան հարիւր (1500) մարդ « էին, երկու հարիւր սալդառվ տարան Թիւլիդ քաղաքն. « այսքան եղեւ»:

1829 թ. ուռուները խաղաղութեան դաշն կապելով Օսմանցոց հետ, Կարսը վերագարձրին նրանց:

1855 թուականին անզղիացի Ուիլիկմս սպարապետ նշանակուելով՝ ամրացրեց բերդաքաղաքը նորանոր մարտ-կոցներով: Գրեթէ երկամեայ պատերազմից յետոյ (1853—5) գններալ Մուրավեկի հրամանատարութեամբ հազիւթէ յաջողեցաւ ուռուներին մերձնեալ Կարսի ամրութիւններին: Բաւականին նշանաւոր ընդհարութիւններից ու արիւն-չեղութիւններից յետոյ, յունիսի կիսից մինչև նոյեմբերի

վերջը պաշարեցին նրանք քաղաքը. որ վերջապէս անհարին քաղածութիւնից ու հիւանդութիւններից կոտորուելով ու սաստիկ նեղուելով՝ վարչութիւնն ու ժողովուրդը սահմուեցան անձնատուր լինել. (28 նյեմբերի 1855 թ.)¹. Ռուսները վերստին յանձնեցին Կարսը Օսմանցոց օգոստոսի 6-ին 1856 թ.:

(31833)
21489-60


¹ Խլղարաբիլիսեցի Պետրոս վարժապետը՝ ի միջի այլոց նկարգում է (իւր ծեռագիր յիշատակարանում) նաև 1855 թ. Կարս քաղաքի պաշարումն ու առումը այսպէս՝ «Յորժամ եկն գարունն ցըն-« ծալի հրամայեաց կուսակալն (Մուրավկ) գալ և ժողովիլ ամենայն « գորաց իւրոց, որը էին հեծեալը և հետևակը՝ 65 հազարք և մնդանօթք, « 120 և այլ մեքենալք բազումք և խաղացուցեալ զրանակն և անցեալ « ընդ Արփաշայ՝ և հզօր գետն Ալսուրեան՝ ի հնդետասան աւուր յամ-« սեանն Մալիսի. յայլ և այլ տեղիս գոլով մերծ ի քաղաքին Կարսայ « և հարեալ մեծ բանակն իւր ՚ի զիւղն Ղանի կոչեցեալ, հուա առ հուա « նմին քաղաքի ընդ կողմն հարաւու առ յերի զոլով գետոյն Ախուրենոյ, « և քամանեալ զբազմութիւն գորաց իւրոց ՚ի չորս բանակն և հրամայեաց « զեներալաց և այլոց զօրագարաց ՚ի չորից կուսէ ամենայն զգուշու-« թեամբ սաստկապէս պաշարել զբաղաքն և ՚ի նեղ արկանել զրանկիչման « և զօրսն Օսմանեան, նաև փակել զամենայն ծանապարհն նոցա, զի « մի որ ՚ի զօրաց նոցա և ՚ի յայլոց ելցեն յարտաքս, որպէս զի նորք « վշտացեալք ՚ի սովու և յայլ տեսակ-տեսակ պակասութեանց՝ փումով « թարց պատերազմի անձնատուր լինիցին և զբաղաքն մատնեցին նմա, « քայլ Օսմանեանք ընդհակառակն, սկսեալ յամենայն զօրութենէ իւրեանց « ամրացուցանել զբաղաքն. նոր ՚ի նորու կանգնէին ամրագոյն մեծամեծ « աշտարակն և զրգունս նեղեալ ՚ի նոսա բազմութիւն մնդանօթք և « մերենայից և լցեալ զայնոսիկ բազմութեամբ գորաց և զօրագարաց. այլ « և ամրացուցեալ զըորեքկողմն, և հատեալ խորագոյն խրամս շուրջա-« նակի քաղաքին, և յարտաքու քան զիւրամսն բիւրաւոր նորս խորա-« գոյնս եռանկիւնած փորէին. ևս այլ ընդ այլոց մեքենաւս սահմանեալ « և լցեալ փառօթս ՚ի նոսա ղնէին ՚ի մէջ ականաց, գրեթէ այսպէս տե-« սակ-տեսակ յորոգայթիք ամրացուցին, որ յոլժ անմատչելի և անառիկ « թուէր ՚ի յաջս նոցա, արդարեն նոլնպէս էր: իսկ Մուրայկ կուսակալն « արձակեալ զբազում հատուածս ՚ի զօրաց իւրոց, գունտ առ զունտ առ « այն տեղիս, ուր որ գուշակէին թէ գտանին ամրաքը ցորենոյ՝ հարւոյ.

1877 թ. ապրիլի 12-ից սկսուելով նոր՝ Ռուս-Տաճ-կական պատերազմը¹ Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչի ընդհանուր հրամանատարութեամբ և Հայազգի Միքայել Դանիէլեան Լոռու-Մելիքեանի սպարապետութեամբ՝ նոյեմբերի 6-ին ռուսներին յաջողեցաւ զինու գօրութեամբ առնեւ 18 հզօր մարտկոյններով² և աւելի քան 300 թնդանօթներով պաշտպանուած անառիկ բերդաբաղաքը:

¹ Նախ քան յիշեալ պատերազմի սկսուելը, այն է՝ փետրվար ամսին Օսմանեան զօրաց հրամանատար՝ Հածի-Լիւա-Ահմէտ փաշան առաջարկում է Կարսի հայ ազգաբնակութեանը կամաւոր զինուր տալ, բնիկ օսմանցի յօժարակամների հետ ի միասին՝ ՚ի պաշտպանութիւն հայրենեաց և յապահովութիւն կենաց և ստացուածոց». ցանկացողների թիւը հասնում է միմիայն 11-ի, որոնք սակայն չեն մասնակցում պատերազմական գործին, որովհետև թիւրք կառավարութիւնն էլ չի հրաւիրում . . .

² Դրանք կոչում էին՝ հՀ-գալէ (Միջնարերդ), Ղարաղաղ, Ղարապաթլաղ, Ահալի, Ղոլմուղ, Զիմ, Թահմազ, Սուվարի, Հաֆիզ-Փաշա, Արար, Մուլիս, Վալի-Փաշա, Ղանլի, Զախմախ, Ինզիլիզ, Քօրմուկ, Թիբ-Թիքիսիք և Ալ-Թապիհ: Ներկայումս դրանցից մի քանիսը իրք առանձին ամրութիւն գոյութիւն չունեն. հսկ մնացեալները կոչում են նոր անուններով՝ Մեծ-Իշխան Միխայիլ (Միջնարերդը), Ալէքսանդր Բ. (Նախկին Զախմախը), Լազարէ, Ռօօպ, Ռիդզմակի, Ֆադէս, իշխան Ս. Միրսկի, Բուլզիկի, իշխ. Մելիքով, զրափ Լոփս-Մելիքով, Կօխանով, Ալիխաղով, իշխ. Զավշավաղդէ և Պավլով:

« կամ մեղեր և այլ իմն պիտանի կալից, զոր բերէին զօրքն Օսմանեան « յափշտակել զայնոսիկ ՚ի ծեռաց նոցա՝ զինեալալսն կոտորել՝ և թէ որ- « քան կարողացեն բերցեն ՚ի բանակն իւր. և զմնացեալս այլել՝ ՚ի « հոր և կամ թափել ՚ի ջուր զի մի դարձեալ տիրեսցեն մահմետականքն, « որ և գտեալ ՚ի բազում տեղիս և արարին ըստ հրամանի նորին. այս- « պէս յամենայն ուստերէ պաշտեալ և ՚ի դառն նեղութիւնս արկեալ « էր զնոսա, ուստի ոչ գոյր օգնութիւն նոցա. վան որոյ անկաւ ՚ի մէջ « քաղաքին և զօրաց նոցա սով, և բազումք սովալլուկ մեռանէին և ենէ. « ումանք ՚ի ծարահատեալ աղքատաց կամ ՚ի թուրքաց գաղթագողի ելեալ « ՚ի քաղաքէն և անկանէին ՚ի քաղաքս... Մեծաւ զօրութեամբ իսաղացին (ոռուք) զնացին և մերձեցան մեծի աշտարակին ընդ յարկմուտս



1876—7թ. Օսմանյոց պատճառած նեղութիւնների մասին աշակերտ ինչպէս է խօսում Կարուց վիճակի առաջնորդական տեղապահ՝ Գրիգոր վարդապետ Աղուան-իւնցը իւր պաշտօնական գրութեան մէջ (1877 թ. մարտի 19-ին թ. 21) Կ. Պօլսի Պատրիարքին ուղղած «Ներ-« կայ քաղաքական տագնապի երեսէն գաւառիս ժողովը»

«Կուսէ քաղաքին որ կոչիւր Խնձիկ-Թաքէի, և էր մէջ գիշեր. յայն-« ժամ արթնացեալ Օսմանեան գօրաց և պահապանաց, բացծրացուցեալ « զգալնս, զօրքն ոռւստաց հեղան զեղան խրախուսելով և յելեալ ընդ « աշտարակս կալեալ զբազումս 'ի պահապանաց սրախողխող արարին և « համարաւ յիսոն և երեք մնանոթքն, որք կալին 'ի յաշտարակի անդ « զամենեցուն, զկրակարանս սևեռեալ բևեռեցին. վասն այն՝ զի ոչ կա-« րացեն նշամիք կրկին առեալ զեղին 'ի վերայ իւրեանց. իսկ յոր-« ժամ լուան և տեսին Օսմանեանք զաղաղակն և զառումն աշտարակին, « այլ և լուան մերծ եղեալ զօրք նոցա, 'ի յաշտարակէ անտի և 'ի ար-« տաքոյ գումարեալ իբրև զբազմութիւն մարախոյ դիմեալ 'ի վերայ « զօրաց ոռւստաց՝ որպէս զգազան կատաղի փողոտէին զմանեանս և պա-« տահեալ քաջք ընդ քաջաց, զբազում արեանց հեղումն գործէին և զմի-« մեանս դիամաւալ յերկիր կործանէին, այնպէս սաստիկ զօրանալը « մարտն. Էր՝ որ երբեմն ոռւսքն յահմահարէին զմանետականս և էր՝ « որ երբեմն նոքա զուսան մերժէին, բայց 'ի յախն վալրի, արի և « քաջ սպառագէն զեներալ Բակլանովս, որպէս զիուր Թափանցիկ, փալ-« լատակեալ զսուրն իւր, ընդ յաջ և ընդ յահեակ, որպէս գեղէզն կո-« տորեալ 'ի վերայ թափէր զբազմութիւն զօրաց Օսմանեանց, և կամ « ոտորեալ 'ի վերայ թափէր զբազմութիւն զօրաց Օսմանեանց, և կամ « տորեալ զբազմութիւն զօրաց Օսմանեանց, և կամ « մեաց որպէս գէտ փալլակն, որ փալլատակեալ ելանէ 'ի յամբոյ, իսկ « ի սոյն խուռն պատերազմի վիրաւորեալ մեռանի ամենազովեստից « արժանի՝ քաջ դեներալ Կավալերսկին, նա և արդէն մեռանին բա-« զումը 'ի զօրափարաց ոռւստաց: Աղլ և վիրաւորեալ անդ մեծ կնեազ « (իշխան) դեներալ Գագարինն, 'ի ցախն վալրի տեսեալ Մուրալևի « զգալուստն ոտրին ինքնին յելեալ 'ի կառս իւր գայ ընդ յառաջ վի-« րաւորելոյն, որպէս զի նստուցեալ զնա տարցէ 'ի տեղի իւր. իսկ « արին Գագարին անպատիւ արարեալ զկուսակալն և ոչ յելանէ 'ի « կառս նորին, քանզի 'ի յախն խուռն և սաստիկ պատերազմին սպա-« կառս նորին, քանզի 'ի յախն խուռն և սաստիկ պատերազմին սպա-

« դեան այս տարուան կրած նեղութիւն անտանելի է. զի « տեղս գտնուած 25—30 վաշտ արքունի զօրաց բոլոր ու-« տեստներ տեղական ժողովրդենէն իբրև 'ի գնց առնելով՝ « փոխարէն ընկալազիրներ տրուեցան ապա վճարդրամ հա-« տուցանելու կամ յարքունիս հատուցանելի տրոցն հաշ-« ուելու, բայց ժողովրդեան մառան ո՞չչափ գարակեցաւ

« ոնցան վառոմք և ըոմբաքարք զօրաց ոռւստաց և խնդրեցին 'ի կու-« սակալէն ալլ ևս զօրս և վառոմք փումացուցեալ յօգնութիւն առաքել « նոցա, բայց նա ընդհակառակն՝ հարամայէ հարկանել զփողն յաղագս « յետ դառնալոյ և ոչ պատերազմելոյ. իսկ 'ի հարկանիլ փողոյն ոմն « 'ի բոշշնից յազգէն անգիտացոց գորով 'ի մէջ զօրաց մահմետականաց, « ծանուցեալ զեղանակ դարձի փողոյն. իսկոյն բարձրագոյ ծայնիւ ա-« ղաղակէ առ զօրս յաշտարակէ անտի այսպէս՝ ով միսլիմանք, մի « այլայլիք, մի սրկնչիք, այլ զօրացարուք, բաջարուք և լերնոք ալր, « վասն զի հարաւ յետս դառնալոյ ոռւստաց. ահաւասիկ դարձեալ են « և ոչ կամին կոռուել ընդ Զեզ, ուրեմն անկերութ զէնք նոցա և որքան « կարող էք առէք զգրէժն մեր. իբրև տեսին զդառնալն ոռւստաց, « յայնժամ 'ի յաշտարակէն, 'ի պարսպաց և 'ի պատնէշաց, սուսերա-« մերկ անկեալ 'ի վերայ զօրացն ոռւստաց անհնայ և անողորմաբար « կոտորէին, քանզի երկարեալ էք մարտն իբրև 'ի ժամա եօմն, նա և « սպառեալ էք մերենալը նոցին. 'ի յայս անօգնական և խարդախեալ « պատերազմի անկան 'ի զօրաց Քրիստոնէից արք իբրև ինն հազարը « չորեք հարիւր, վասն զի զօրքն ալլազգեաց տասնապատիկ աւելի « էին քան զգօրսն ոռւստաց... Դարձեալ յետ այսք կորագլուխ լինե-« լոյն կուսակալի, արդէն հրամայէ ամենալն զօրաց չունել 'ի տեղուցէ « անտի և զնալ 'ի մարգագետին տեղիս, անդ մերծ ընդ յեզերօք հզօր « գետոյն Ախորենոյ շինել ինքեանց տեղի բնակութեան, այլ և հրա-« մայէ ևս քան զես սաստկացուցանել զպաշարումն քաղաքին իբրև « ամիսս երիս և զկնի անցանել սոյն ամսոց առաքէ Մուրայն իբրու « զեսպան զոմն յազգէն Յունաց՝ Աբէլով անուն 'ի քաղաքն Կարս, առ « Քէրիմ փաշայն, վասն տեղեկանալոյ և լրտեսելոյ զնոսա, իսկ 'ի « զաղոտնի ոմն 'ի հարիւրապետացն մահմետականաց գալ առ Աբէ-« լովն և ասէ ցնա՝ զիտնս զի 'ի սոյն առաջակայ ուրբաթու տալոց « են զբաղաքն ցծեզ, վասն զի ես իսկ և իսկ զիտակ եմ խորհրդոց « մերայնոց. 'ի լսելն զայս բան 'ի հարիւրապետէ անտի, յելեալ 'ի

«որ հազլեւ մինչև յառաջեկայ Մայիսն ուտելիք մնացած է,
«շատերուն սերմանելի սերմն անդամ չ'մնաց, կ'վախցուի,
«որ ձմեռն անցնելուն պէս՝ ժողովուրդ ցիր ու ցան լինի
«գուշակելի սովին երկիւղէն։ Ժողովուրդ հետևեալ ու-
«տեսուներ վճարեց տէրութեան։ 15 Հազար սոմառ ար-
«մտիք, տեղոյս մի սոմառն մի մարդու տարեկան ուտելիք

«քաղաքէն և եկեալ պատմէ Լօրիս-Մելիքով պոլկովնիկի և նորա
«առեալ զնա գնացեալ 'ի վրանն կուսակալի պատմել նմա, զորս լու-
«եալ էր... Եւ իբրև եկն ժամադրեալ օրն ուրբաթու, յանժամ եկեալ
«երկրորդն Միշուրի բթէշին այն անդիացի և բերեալ զամենայն
«ստորագրութիւնս 'ի Միշուրէն ցիետին զօրավարս և մատոյց նմա
«և նա ետուր ընթեռուլ ետես՝ որ առ հասարակ զօրավարք և զօրք,
«նա և բովանդակ բնակիչք քաղաքին բարեհածեալ են տալ զքաղաքն
«և ինքեանց յանձնատուր լինել նմա, այսու զաշամբ, որ աներկիւդ
«լինիցին 'ի սպանմանէ և 'ի կողոպտելոյ զինչս իւրեանց. հածեալ
«կուսակալին դաշանց նոցա, հրամայէ այնպէս լինել... Եւ ընդ առա-
«ւոտն եկն աւետարեր թէ՝ ահա ամենայն զօրքն թուրքաց դրօշակօք
«և զինուք, եկեալ 'ի քաղաքէ անտի և զան դէպի բանակս մեր, յան-
«ժամ փութանակի հրամայեաց կուսակալին ամենայն դեներալից, զնդա-
«պետաց, զօրագլխոց և զօրավարաց, նա և առ հասարակ հետևակ և
«ծիաւոր զօրաց զգենուլ զպատուական հանդերծս և ածել 'ի վերայ կրծից
«իւրեանց ամենայն զպարգևեալ նշանս 'ի նորին Կայսեր ական
«Մեծութենէ, այլ և ունելով զամենայն զէնս 'ի ծեռս իւրեանց և
«իւաղալ՝ զալ զաս առ դաս, յարդարեալ կարգաւորութեամբ, հարկանելով
«զբամբիոս՝ և փշելով զամենայն զփողս, և զբնարս արուեստականս
«և երգել զերգս՝ ըստ օրինի քաջամարտիկ զօրաց, յորժամ ելանեն
«'ի մըցմուս թշնամեաց՝ և կամ 'ի դառնալն նոցին 'ի հզօր պատե-
«րազմէ յաղթանակող երևեալ՝ նոյնպէս և դուք արարէք զի ահարկու
«և զարհութելի երևեսջիք յաշս մահմետականաց, որ 'ի տեսանելն
«նոցա զծեգ իսպառ զարհութեալ 'ի սպառազինութենէ ծերմէ միջա-
«բեկեալ և սրտաթափեալ մաշեսցեն... Արդ՝ իբրև մերձեցան զօրքն
«թուրքաց յայնժամ հնչեաց ամենայն բանակն Քրիստոնէից և 'ի բազ-
«մութենէ ծայնից արանց, և քնարաց և ամենայն երգոց արուեստա-
«կանաց համարեն թէ հնչէր զայրն այն և մերձակալ լերինք և թուրք
«ընդ նոսա, աստ էր տեսարան սքանչելի և թէատրոն զարմանալի,

«Է. 15 Հազար օխկայ եղ 3 Հազար ոչխար, 5 Հազար մայր
«փայտ վառելու, 40 Հազար օխկայ ձաւար, 20 Հազար
«մայր փայտ ալ նորէն պիտի կարուի և 'ի քաղաքս փո-
«խալքուի, քանի մը հարիւր հազար օխկայ աղը կաղուզ
«վանէն տեղս փոխադրեց ժողովուրդ՝ իբրու թէ վարձով,

«որ լեզուօք մարդկան ոչ երբէք պատմի և մի ըստ միոցէ 'ի զիր
«քարդենի հց անկանի այլ միայն աշաց և եթ է տեսանելի... Արդ՝
«աստանօր ելեալ Մուրալիկ ընդ յառաջ Միշուրի և զօրաց նորա,
«ողջունէ զնոսա և ապա հրամայէ ամենայն զօրաց Օսմանեանց 'ի մի
«վայր ընկենուլ զամենայն հրացանս և զգէնս իւրեանց, և դարձեալ
«ընդ զօրս իւր հրամայէ առնուլ զամենայն զրօշակս նոցա 'ի ծեռաց
«նոցա և հաւաքել 'ի միում տեղուց, որ և արարին իսկ. այլ և զինի
«հրամայեաց զզօրսն Օսմանեանց դաս առ դաս բաժանեալ և նստու-
«ցանել 'ի վերայ դալար խոտոյ, և կերակրել զնոսա պատրաստեալ
«կերակրօք, որ և կերակրեալ զսովցեալ և 'ի սովու ծալկացեալ
«զօրքն, շունչ առին սակաւ իբրև կերին և յագեցան 'ի զեր մսեղէն
«կերակրոց և ըմպեցին զառնորակ զուրն, անկան բազումք 'ի նոցանէ
«ընդ իսալ ցաւօք և բազումք մեռան 'ի նոցանէ 'ի յաքսորանս և 'ի
«ծանապարհի, յորժամ իբրև զզերի վարեցին զբազմութիւնս նոցա 'ի
«մայրաքաղաքն Տփիսի... ապա 'ի նմին աւուր մտին 'ի բաղարն
«Կարս ամենայն զօրքն ուսւստաց բագում ուրախութեամբ և ցնծու-
«մեամբ և նստեալ 'ի քաղաքն որպէս զբազապետ՝ Լօրիս-Մէլիքով
«Պոլկովնիկն և իշխնէր 'ի վերայ բնակչաց քաղաքին և այլոց նահան-
«գաց Կարուց. և Մուրայն կուսակալին երբեմն զայր և մտանէր 'ի
«քաղաքն և շըշէր ընդ ամենայն տեղիս քաղաքին և յոյժ զարմանալը
«այնքան ամրութեան բերդից, աշտարակաց, մահարձանաց, ամրոցաց,
«բրգաց, պատնէշաց և կրկնակի պարսպաց, նաև ակնարկելով այնքան
«խորութեամբ իրամոց և հատեալ ականց, զորս լցեալ էին վառութովք.
«Թէ հրակս ալսքան ամուր քաղաքն ետուն 'ի ծեռս իւր. ևս հրամա-
«ցաց Լօրիս-Մէլիքովի որքան թնդանօմք, հրացանք և այլ տեսակ
«տեսակ մերենալք նա և զամենայն կալս և կարասիս պատկանեալս
«տէրութեանն, յուղարկել հետզինտէ շարունակաբար 'ի ք. Ալէքսանդ-
«րապօլ, նա և հրամայեաց զմիջնաբերդն ական հատանել, լնուլ վա-
«ութ և քանդել զամրութիւնն նորին, որ և արարին ըստ հրամանի
«նորին»:

« որ ապառիկ մնայ: 10 հազար սոմառ արմտիք ալ նորէն
 « պիտի ժողովուի իբրև կանխիկ տտակով, բայց ոչ առաջ-
 « նոյն պէս իւրաքանչիւր տան հաս բաժին ընելով, այլ
 « այս անգամին վաճառականաց ամբարներ, տասանորդողնե-
 « րուն և զիւղական երեւլեաց ամբարներ կնքելով: Մի սո-
 « մառն 160 դաշեկանի կ'ծախուի: Խոկ պատերազմի պի-
 « տոյքներ և թնդանօթներ քաղաքէ քաղաք փոխազրելու
 « համար, օրական 40—50 լուծք եղանց և 20—30 ալ
 « սայլը տալով հոգինին բերանին հասաւ, լքել և յուսա-
 « հատ են: Զմեռուան մէջ հետզհետէ եկած զօրաց բնակու-
 « թեան համար ժողովրդեան տներ պարպեցին, սառնամանի
 « ողերու խիստ դառն ժամտնակին: Զէքքեղներու հասու-
 « ցած չարիքներն ալ շատ և շատ եղան: Այս ամեն վշտե-
 « րու վրայ ամսուս ծին էւելցաւ և քաղաքիս եկեղեցւոյ
 « կողոպատմն, որ խսպառ մերկացուցին ու տարան...»

Այդ ժամանակ Կարսի բերդապահն էր՝ Շիւսէյին-
 Ամելի-փաշան. խոկ պատերազմող զօրաց ընդհանուր հրա-
 մանատարն էր՝ Ղազի (յազթող) Մուխթար-փաշան: Յի-
 շեալ ձակատամարտի կամ՝ որ տւելի ճիշտն է՝ արձակ-
 ման մէջ ուռմներից ընկան՝ 500 սպանուած և 1800
 վիրաւոր. խոկ թուրքերը կորսրին տւելի քան՝ 6 հազար
 հոգի, գերի տուին 17 հազար զինւոր, 800 սպայ և 5
 փաշայ, 350 թնդանօթով:

ՔԱՂԱՔԻ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ.

Հնումը՝ Կարս քաղաքը քառակուսի զիրք ուներ.
 Կրկնակի, ամօւր և բարձրաբերձ պարսպներով ու լայնիեկ
 խրամակ, որոնք, սկսեալ 1885 թ. կամ, տւելի սայդ,
 վերջին պատերազմից անմիջապէս յետոյ համարուելով
 տւելորդ և անպէտք շինութիւններ, խոկապէս անմաքրու-
 թեան և ապականութեան բոյն, անցան մասնաւոր ան-
 ձանց ձեռ, որ կործանելով՝ նրանց քարերը վաճառեցին
 ուրիշ շինութիւնների վրայ գործազրելու: Ներկայումն
 կանգուն կան արեւելեան և արեւմեան պարսպների ան-
 նշան մասերը, բարձրազագաթ աշտարակների կամ բրդերի
 բեկորները միայն և երկու գռներ՝ «Բերդի-դուռ» կամ
 ըստ տաճկայ՝ «Գալա-գալու» և «Միջին-դուռ» կամ՝ «Օր-
 թա-գալու». խոկ մնացեալ՝ «Սու-գալու» և «Պայրամ-փաշա-
 գալու» գռները, այժմ կիսաքանդ են և սրբատաշ քարե-
 րից համարեա խսպառ մերկացած, կմախքի նման՝ միմիայն
 կրեայշազախ լիցքերի բեկորներն են երեւմ, իրենց հետ
 վախճան գնելով հինաւուրց մեծութեանն ու փառաւորու-
 թեանը... այդ աշարակները հալուստ են խաչաքանդ
 արձաններով և ուռուցիկ ու քանդակաւն հայկական յի-
 շատակարաններով, որոնք, ըստ մեծի մասին, պատկանում
 են՝ Զաքարէ սպասալարի և իւանէի աթապակութեան
 ժամանակներին, որոշ աշխարհաշէն ձեռը Բաղրատունի՝
 հարազատ տիրապետներից անմիջապէս յետոյ, տարածուել
 է և այս տեղի վերայ...

Հստ երեւութին, քաղաքը ունեցել է հստումը ոչ թէ չորս՝ այլ երկու դաներ միայն՝ արևելեան և արևմտեան կողմերից, որոնք կոչում էին. արևելեանը՝ «Անւոյ-դուռ», իսկ արևմտեանը՝ «Խախտեաց-դուռ»։ Չհաշուելով գետնափոր անցքը, որ իջնում էր միջնաբերդի բարձրունքներից մինչև Ախուրեանի տիր, արևմտահիւսիսային կողմում։

Սյու ստորերկրեայ անցքը, որ իսկապէս ջրի ձանապարհ է եղել բերդի պաշարման ժամանակ և այն անտարակյս մեր հարազատ նախնիների ձեռագործ, զրկթէ տակաւին պահպանում է իւր հազարամեայ գոյութիւնը։ այսօր էլ երեւում են քարեղէն կամարները, որոց միջով մի ժամանակ բարձրանում էր անցորդը մինչև գաղաթ...

Արևելեան կամ Անւոյ դրան ճակատին մինչև 1885 թ. երեւում էին՝ միմեանց հանդէպ կանգնած առիւծի և վագրի մեծապիր արձանները, նման Անիի վեթխարի առիւծին, որոց միջև եղել է մի այլ արձան, երկար ժամանակներից ՚ի վեր փշուած և համարեա բոլորվին անհետ եղած։

Հարաւային դրան ճակատին տաճկական ուռուցիկ տառերով գրուած է մի յիշատակարտն որ, ասում են՝ Սուլթան-Մուրատ Օսմաննեան ինքնակալի հրամանով՝ Լալա-Մուստաֆա-փաշայի արած նորոգութիւնների ամփոփ նկարագիրը լինի (1578—9 թ.): Սրա աջակողմեան որմը ամբողջապէս ծածկուած է գողարիկ քանդակուն քարերով և եղծուած ու մաշոււած խաչարձաններով։ Սյու տեղ տեսնուում է նա և Տէրունական արձան, որ ներկայացնում է աշխարհի Փրկչին Գահի վրայ բազմած, որի սպասին կանգնած է մի այլ մարդ, երկար վերարկուով, թերեւս և, Գրիգոր Լուսաւորիչ... դրանց բարձրում երեւում է քանդակուած մի գեղեցիկ սիրամարդ Հայաստանի կամ արևելքի այնքան փայփայուած ու սիրուած, բաղ-

մերանգ ու բազմագոյն փետուրներով նախշուած՝ թշունը. նոյնպիսի քանդակուն թռչունների ուրիշ օրինակներ յածախ պատահում է տեսնել գլխաւորապէս Անիի աւերակներում, թերեւս միւնոյն քանդակագործի ձգանց արտադրութիւն։ Սիրամարդի բարձրում մի առանձին քարի վրայ կարգացւում է.

«Հալալ արգեանց

զկուզպակն որ ի

բազալոյն է

և զաներ պահէզի

կէսն. զբէկմամր.

անախս ով որ խաբանէն

զովեալ եղիցի այ

Ա.մէն»։

Նոյն որմի վերայ, մոխրագոյն կարծը վիսի ճակատին, ուռուցիկ տառերրով զրոշմուած է։

Ի:ՈՒԳ:ԹՎԻՍ ՇԻՆԵՑԱՒԲՈՒ ՐԶՆՍ:

Սյու քարերի անկանոն դասաւորութիւնը, մանաւանդ որ նրանք զետեղուած են աղիւմների մէջ, հաստատում են վերջին ժամանակների զործ լինել, թերեւս Հափիլ-Մուստաֆա-փաշայից՝ 1772 թ. վերանորոգուած, որ անստարակյս պարսպի զանազան մասերից թափուած յիշեալ քանդակուն քարերը սյոսեղ փոխազրելով՝ կաղմել են այդ որմը։ Միջնաբերդի արևելեան կողմում, հին բրդերից մէկի վերայ քանդակուն փոքրիկ խաչարձանի ներքեւ կարգացւում է տակաւին։

«Ծնորհիւն այ և ողորմութեամբ թագաւորին Մերոյ ըռուսուտանայ մեք կարուց քրիստոնայք»

Մէջ եւ փոքր շինեցաք զբրջներս ի յիշատակ
Մէլ եւ պատրոնին մերոց»:
Արևելեան աշտարակներից մէկի վերայ քանդակուածէ՝
«Թվիս: ՈՉԴ: ՚ի թագաւորութեանն կոռուգանայ
յաթապէկութեանն իվանէի մեք կարուց Քրիստոնէքս
շինեցաք զբրջներս ՚ի հալալ արգեանց մերոց»:

Մի ուրիշ բրգի վերայ՝ «ՈՉԴ (1234) Տէր ած զաւ-
րացո... զթագաւորն մեր... լեր այլ ազգեց կատարեցաւ
բրջներս ձեռամբ ընձկանն Գաղնին եւ Ոլտնին»:

Նոյն կողմը մի այլ տեղ՝ «Շինեցաւ բուրջ... ի թէ
ասան... ա ի ար... ցելում սպասալար Թաղիատին ձա...
ոդ... յաղաւթս»:

Մի ուրիշ արձանագիր՝

«ՈՉԵ (1236) որ... բրջներս
Երկրորդ... հրամանաւ... իս ամիր մուշ-
րիւ Աբրէմայ... ից արքային ինքնակալ
Ըստ... յն որ ագավի թագաւորի որ
այսմ ամին... (թա) գաւորութիւն իւր:

Սիմիթար զրիչ և նկարիչ»:

Եյդ պարսպները կամ շատերը բրգերից կրում են
իրենց ձակատին համառօտ յիշատակարաններ. Հարուստ
են խաչերով ու զանազան քանդակած արձաններով. սա-
կայն է՝ որ կործանող ձեռքեր աշխատել են մի վայրկեան
առաջ չայ ազգի մեծութեան այդ խօսուն վկաներն ե-
րնածինջ անել զրոբել զերեղման... և է՝ որ՝ ժամանակի
հոսանքն է մաշել ու քայքայել:

Պարիսպները շինուած են Բագրատունիների տիրա-
պետութեան ժամանակ, բայց նախ քան երկրորդ նորո-
գումը. ԺԲ դարը՝ ոչ մի յիշատակարան չի երեսում:
Դրանք բոլորն ել որձաքարից են շինուած, տեղ-տեղ
միայն սրբատաշ:

Կարսի պարսպները թէկ արտաքին գեղեցկութեամբ
չեն կարող նմանիլ Բագրատունեաց տան անդամներից
հաստատուած մնացեալ բերգերին ու աշտարակներին, սա-
կայն անհամեմատ ամուր են, թանձր և անառիկ:

ՀԻՆ ՅՈՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Թէ հնումը՝ Կարսի բաղդաւոր և բազմահայ ժա-
մանակ, որքան եկեղեցիներ են եղել այդ մասին պատմու-
թիւնը զրեթէ լուսմէ, սակայն կենդանի աւանդութիւնը
շօշափելի փաստերով հաւասարիացնում է 12 լինել: Խա-
լացի (Վենետիկցի) մի պատմագիր, որ 1578—9 թ. ա-
կանատես է եղել Կարսի նորոգութիւններին, հաշւում է
60 եկեղեցի, անտարակցոյ Խալամական մզկիթները. չ' չո-
կելով Քրիստոնէական տաճարներից¹:

Ներկայումն կան մի քանիսը հայկական հին
տաճարներից և տեսնեում են եկեղեցիների կիսաքանդ
մնացորդներ, որոնք են՝

1. Արասաշէն ս. Առաքելոց եկեղեցի. Երբեմն «Գում-
բէթ-ջամի» տաճկաց. . .

2. Սուրբ Նշան (Թիւրքաց ժամանակ՝ «Թաս-ջամի») լեռնես Սուաքելոց եկեղեցուն ժամանակակից. առանց սեան.
միջակ մեծութեամբ և հնումը՝ գմբէթաւոր, նման Խծկո-
նից ս. Կարապետին: Դա նորոգուեցաւ հայոց ձեռ անց-
նելուց անմիջապէս յետոյ, այն է՝ 1883 թ. ուր և լի-
նում է ժամանացութիւն: «Սուրբ Նշան» կոչուեցաւ
իսկապէս այն պատճառով՝ որ փոքր ինչ հեռու գտնուող
յարդանոցի զրան հետ զրուած վիմի ձակատին զրոշ-
մուած էր՝ «Սուրբ Նշան» բառերը:

¹ «Այրարատ» Հ. Ղ. գ. Ալիշան (Երես՝ 82):

3. Սուրբ Նշանից սակաւինչ հեռու, այժմեան Յունաց եկեղեցին, սագաշէն, կամարակապ, առանց գմբէթի: Դա Օսմանցոց տիրապետութեան ժամանակ կոչելիս է եղել՝ «Պէշիկ-ջամի»¹ և երկար տարիներ եղել է Խոլամական ազօթատուն: Արտաքուստ, արևելիան որմի վերայ, մանր խաչքանդակների հետ, նեղ և փոքրիկ պատուհանի բարձրում քանդակուած է 8 տող հայերէն, այժմ համարեա անվերծանելի, արձանագրութիւն, որ սկսում է այսպէս՝ «Տէր ած ողորմեա...» այնուհետև նկատելի է «թվ. հայոց ՈԶ.»: 1880 թ. տրուեցաւ Պէշիկ-ջամին յոյն ազգաբնակութեան:

4. Սուրբ Փրկիչ կամ ամենափրկիչ եկեղեցի, որ գտանում էր միջնաբերդի ներքեւ, նրա արևելուա-հարաւային կողմում, բարձրաւանդակի կրծքին դրուած: Դրանք զյու գմբէթաւոր մատուռներ էին, զանազան մանր շինութիւններով շրջապատուած: Այդ շինութիւնը 1883 թ. վաճառուեցաւ հրապարակական աճրդախօսութեամբ. քարերը փոխադրելու պայմանով՝ գնեցին մասնաւոր անձնով 30 ըուբլու և իսպառ քայքայուեցաւ 1887 թ.: Մասնաւորապէս ս. Փրկչի գյուղաւան մատին վկայում է նաև Ալեքսանդրապոլի ս. Աստուածածնի եկեղեցում գտնւող զբաղիր «Այսմաւուբքի» 1713 թ. պրուած յիշատակաբանը:

5. Սուրբ Գրիգոր (ըստ աւանդութեան), որ եղել է «Օրթա-գաբու» թաղի մէջ, այժմեան Յունաց նարաշէն եկեղեցու տեղում: Էջմիածնի Տաճարի ուրուագծով կառուցուած. — գմբէթաւոր և հոյակապ: Այդ տաճարի բեկորները երևում էին մինչև 1885 թ. որոց վերայ (Հմբի) հաստատեցին յոյները իրենց եկեղեցու շինքը... իւր ժամանակ ցանկացողներ եղան այդ իսկ վայրում վերահիմ-

¹ Կենդանի աւանդութիւնը կոչում է դրան՝ «Սուրբ Գէորգ»:

նել Հայկական եկեղեցին, սակայն պատէհ գէաքրից օգուտ քաղել անցարմար գտաւ վիճակին հոգեոր գործերի սրբազն կառավարիչը. . .

6. Այժմեան ս. Աստուածածին եկեղեցու տեղում եղել է հին' ս. Աստուածածնի մատուռը, որ մի քանի անգամ քայքայուել ու վերսալին նորոգուել է:

7. Առաքելոց եկեղեցու մօտ, նրա արևելա-հարաւային կողմում, կար մի ուրիշ՝ գմբէթածկ շինութիւն կամ մատուռ, որի յատակը ծածկուած էր քարեղէն կամարով և տանգութեամբ պատմում է թէ զորանում հանգչում ևն Հայոց Սմբատ արքայի որդի՝ Արաս Ա. թագաւորի ածիւնները. և իրոք, 1889 թ. գլեթէ նոյն տեղի վերայ, այժմեան պահապանաց բնակարանի հիմքը փորելիս՝ յայտնուեցաւ նշանաւոր քանակութեամբ մարդկային ոսկորներ ու գանգեր¹. ինքս անձամբ ականատես եղայ Աբասեան գերեզմանը բանալիս, որը սակայն բացուած էր մի անգամ ևս 1884 թ. և. . .

Այդ շինքը երբեմն տաճկաց ձեռ յարգանոց և երբեմն անմաքրութեան տեղի էր, որ վերջ ի վերջ հաւասարեցաւ զեանի հետ (խառնուեցաւ եկեղեցու հրապարակին) և 1891 թ. իսպառ անհետ եղաւ:

8. Այժմեան տաճկաց «Էվլիա-ջամին», ուր գտնվում է և ս. Մինաս անունով նահատակի դամբարանը և որը ուխտատեղի է թէ՝ Քրիստոնեայ և թէ՝ Խոլամագդաբնակութիւնների համար:

9. Միջնաբերդի մէջ գտնւող՝ ս. Մարգիս անունով մատուռը, որ թուրքերը քայքայեցին 1873 թուականին:

10. Եկեղեցու հիմք յայնուեցաւ 1890 թ. այժմեան՝ նահանգապետի փողոցում, խճուղին բանալիս:

¹ Հաւանական է ենթադրել թէ՝ այդ մատուռը Թագաւորական ընտանիքի հանգստարանն է եղել Կարսում:

11. «Պէշեկ-ջամուց» (այժմ Յունաց եկեղեցի) ոչ
այնքան հեռու, դէպի արևելք, զրեթէ պարապին կից,
Անւոյ դրան մօտ, գտանւում է մի այլ հայկական եկեղեցու
մնացորդ, որի ձախակողմեան տւանդատունը ամբողջապէս՝
և հարաւային ու արևելեան որմերը կիսով չափ՝ կան-
դուն կան տակաւին:

12. Ա. Նշանից ոչ այնքան հեռու, դէպի հարաւ,
տառում հն՝ եղել է մի ուրիշ եկեղեցի, որի խաչարձան-
ներից մէկի պատուանդանն է այն քանդակուն վէմը՝ որ
ինչպէս յիշեցինք իւր տեղում, դրուած էր յարդանոցի
դրան հետ և որի վերայ փորագրուած է՝

— «Ես Մելիքս որ կանգեցի սուրբ Նշանս ինձ և
«Ճնողաց իմոց Միմիթարա և Սիմին:»

ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅ ԵԿԵՂԵՑԻ.

Սմբատ արքայի որդի՝ Աբաս Ա. 930 թուին հիմ-
նեց այստեղ Երկուասան Առաքեալների անունով Աստ-
ուածային տաճարի շինութիւնը և տւարաեց 12 տար-
ւայ ընթացքում, այն է՝ 942 թ.:

Խօսելով Աբխազաց Բեր կամ Թեղաս թագաւորի
ամբարտաւան մտագրութեան և արշաւանքի մասին՝ ա-
ռաջ է բերում Ասողիկ՝ «Եինեալ թաղաւորին զկաթու-
«զիկէն սուրբ՝ ի քաղաքին Կարուց վիմարդեան արձանօք,
«որձաքար պողովատատաշ վիմօք, բոլորապէս զմբէթա-
«ւորեալ պայծառ զարդուք երկնանման խորան»¹:

Եյդ եկեղեցին ցարդ պահպանում է իւր ըստ պատ-
մազին՝ «գեղեցիկ յօրինուածի» պատկերը: Արտաքուստ
զրեթէ բոլորշի՝ ութանկիւնի՝ ձեւ ունի, իսկ ներքուստ

¹ Ասողիկ. (Երես՝ 172):

խաչաձեւ է: Գորշ կամ բաց-թխադցյն կարծր՝ տեղական
որձաքարից՝ կոփածոյ:

Գմբէթը բարձրանում է ներսից առանց սեան և
բաժանում է դրսից՝ 12 անկիւնների, որոց իւրաքան-
չիւրի հետ, կրկնակի սիւների վրայով բոլորում են
քանդակուն կամարները, իրենց բարձրում պահելով 12
առաքեալների, ոչ այնքան կոկ և ձարտարարուեստ, կան-
գուն արձանները: 'Ի դէպ՝ պէտք է նկատել որ մեր նախ-
նիքը և առ հասարակ ժամանակակից ճարտարապետու-
թիւնը կամ, որ տւելի ծիշտն է, քանդակագործ-քար-
տաշը բաւականին անվարժ և անընդունակ է եղել ներ-
կայացնել մորով այնպիսի կերպարանքով ու ձեռվ, ինչ-
պէս որ է՝ նու իւր իսկականութեամբ... զննենք մի քա-
նիսը դրանցից. Տիկոռու ո. Երրորդութիւն վանքի արևե-
մուեան պատի ձակատին երեսում է, ուռուցիկ, շինող
նախարարի՝ Սահակ Կամարադականի կիսարձանը. Մրէնու
Կաթողիկէի հիւսիսային զրան ձակատին քանդակուած է
Դաւիթ Սահառունին իւր թամբած ձիով և սպասաւոր-
ներով. Հասկմի վանքի վերայ երեսում են վեղարանման
պիսարկներով, վանքի մակարդակը ձեռքերին բռնած՝ Զո-
քարէ սպասաւարը և իւնակ Աթարակը և 'ի վերջոյ՝ Ան-
ւայ մէջ 1892 թ. ուսուցչապետ (պլոֆեսոր) պ. Մառի
գտած եկեղեցում, շինողի կիսարձանը. այդ բոլորը բաւա-
կան կոշտ են, անտաշ և անձաշակ. սակայն ընդհակա-
ռակը՝ վեր առէք դուք միւս քանդակները, խաչարձան-
ները, որոնք հիւսուած են ծառերի, ծաղիկների, խաղողի
ողկոյզների և ուրիշ զանազան բոյսերի ու կենդանիների
պատկերներով. նայեցէք անման սիրամարգին ու աղաւ-
նիներին, որքան հրաշալի են զրանք իրենց տեսքով որ-
պէս ամենանուրբ և հաղուազիւտ քանդակներ, մանուածք-
ներ ու հիւսուածքներ... զննեցէք նու և հազարամեայ
մանրաշար մողայիքները և սքանչայէք, որովհետեւ ան-

Հաւտոտալիք է թւում թէ մարդկային ծգանց ու երկաթեայ գործիքների արտադրութիւն լինին դրանք... և այն՝ հայկական միջնադարեան ժամանակներում:

Գրիգորի վերին մասը եղերուած է քանդակում, գորնիզներով ինչպէս և ստորինը, որի հետ ձգուած էն կիսաբոլոր և բազմութալ շերտերը, որոնք սակայն նախ քան՝ 1879 թ. ծածկուած էին գեղին ու կանաչ ժանդով ու խիտ մամուռով, տեղ - տեղ էլ մերկացել էին սրբատաշ քարերից ու թռչունների տպաստանարան գարձել:

Հաւաստիացնում են, որ Օսմանցոյ տիրապետութեան ժամանակ ունեցել է իւր վերին մասում մի շարք հայկական արձանագրեր, սակայն թէ ինչու վրիպել է դա հետաքնին աչքերի տեսութիւնից, անլուծանելի է, գուցէ Յաճկական երկիւղը անմատչելի է կացուցել Քրիստոնեայ զննողին... իսկ ներքուստ՝ հաստատապէս վկայում են՝ հայկական յիշատակարանի գոյութիւնը, որ այժմ ծածկուած է ծեփով:

Հարաւային որմի վերայ, դրան ձախ կամ արևելեան կողմում, փոքրիկ պատուհանի ներքե, քանդակուած կայ, Անիի առիւծի նման, բայց փոքրադիր, մի առիւծ, որ անտարակոյս Բագրատուննեաց իշխանութեան զինազրոշմ պէտք է համարել:

Մօտաւորապէս 1000 տարի առաջ Ասֆիխազայ Բեր թագաւորը, լսելով այդ նորաշն տաճարի այնքան փառաւոր և վայելուչ շինութեան մասին, չար նախանձից կուրացած՝ գեսպան է ուղարկում Սբասի մօտ յայտնու, որ հայոց դաւանութեամբ չօրհնէ եկեղեցին, այլ սպասէ իւր գալստեան, որովհետեւ կամենում է կատարել երկեղեցու օրհնութիւնը Քաղկեդոնական ծէսով: Եւ հազգին զօրութեամբ հասնում է Կուր գետի ափերը: Սբասիւր այրուձիով աճապարում է փշտել ամբարտաւանի եղջերները՝ դէմ է գնում պատերազմելու. «Եւ հայոց

« զօրացն քաջապինդ զօրութեամբ հետամօւտ եղեալ՝ սրոյ ամրակ տայլին զամենեսան, առեալ յաւարի զըանակս նոցա, և ձերբակալ արարեալ զամբարտաւանն Բէր՝ ածին 'ի քաղաքն Կարուց: Ասելով յնա թագաւորին՝ «Տեսց զեղեցիկաշն եկեղեցիդ, զի այլ ոչ ես տեսանելոց. և «Հրամայեաց փորել զաչս նորա: Խոկ զիսաւարեալ պատուի կերն արձաթով գնեցին ազդ նորա և ուխտ խաղաղութեան ընդ հայաստանեացս հաստատեցին երզմամբ՝ մի այլ լինել պատերազմ 'ի մէջ նոցա»¹:

Թէ և Կարսը փոփոխակի կերպով անցել է Վրացոց, Յունաց, Պարսից և Հաղպարացոց ձեռ, սակայն յիշեալ եկեղեցին մինչև 1746 թ. հայոց սեպհականութիւն էր և Ճանաչչում էր «Մայր եկեղեց» անուամբ. վերոգրեալ թւականից նա դարձաւ Խոյամական աղօթատուն և կոչում էր «Գումբէթ-ջամի»:

1829 թ. ոռուների նուածումից անմիջապէս յետոյ, հայերը տիրացան եկեղեցուն. այդ տեղ (Ասպէլոց եկեղեցում) մի անգամ ևս կատարուեցաւ ջրօրհնեաց հանգէսը և զատկական տօնը... այնուհետև, երբ վերստին յանձնուում է Կարսը Տաճկաց ձեռ, հայերն էլ բնականաբար թողնում են «Գումբէթ-ջամին» և կամովին շատանում են «Ժամանան» և «Չուխուր» թաղերի եկեղեցիներով... Տաճիկները խղճահարութիւն են համարում այդ տեղ վերստին ազօթել Խոյամի Աստծուն, ուստի և վերոգրեալ ժամանակից զառնում է նա երբեմն զօրաց համար հացահատիկի շաեմարան և երբեմն ռազմամթերանոց...

¹ Ասողիկ. (Երես՝ 172 և 173):

որմը բաւական առաջ է տարւում սակայն այդ փոփոխութիւնն ևս ոչ գոհացուցիչ լինելով՝ 1864 թ. Յովհաննէս արքեպիսկոպոս Խշունու առաջնորդութեան ժամանակ, մի առանձին հոգաբարձութեան նախաձեռնութեամբ, հմբից վերանորոգում է: Շինութեան հոգաբարձուք եղել են՝ զազաղ Պօղոս Մելքոնեանց և Յովհաննէս Մարտոյեանց:

Չեռնարկութեան սկզբում, բացի բաւականաչափ նիւթից (մթերքից), եկեղեցին ունեցել է՝ 33 հազար դուռուշ¹ պատրաստի դրամ: Համարեա նոյն թուտկանին վերջանում է կառուցման դործը, ծախսելով 90 հազար դուռուշ: աւելորդը հայթհայթում է բնիկ ժողովուրդը իւր ջերմեռանդ տուլքով:

Եկեղեցին՝ իւր նախկին կամ սկզբնական անուամբ՝ կոչւում է սուրբ Աստուածածին: Քառակուսի զիրք ունի, փայտեայ ծածկով, ներքուստ փայտեղէն սիւների վերայ ձեղունը հաստատուած: Ունի զոյտ դռներ, 6 հատ քառակուսի մեծ և 8 հատ մանր, բոլորչի պատուհաններով և մի փայտաշէն անձաշակ զանգակատնով: Մանր է տաել որ եկեղեցին թէ՝ ներքուստ և թէ՝ արտաքուստ բաւական անշուք է և անպահցած...

Ներքուստ, ծախսկողմեան խորանի ձակատին քանդակուած է հետեւեալ արձանը.

«Շնորհի եկ ուղործութեամբ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՈ-
«ՐՈԳԵՑԱՒ ՚Ի ՀԻՄԱՆՑ ԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾԻՆ
«ԵԿԵՂԵՑԻՍ ԱՄԻ ՏԵԱՌՆ 1864 ԵԿ ՀԱՅՈՑ ՈՅՖԻ. ԱՐԴ-
«ԵԱՄԲՔ ԺՈՂՈՎՐԴՈՑ Ք. ԿԱՐՈՒՑ ՎԵՐԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ
«ՂԱԶԱԶ ՊՈՂՈՍԻ ՄԵԼՔՈՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՄԱՐՏՈ-
«ՅԵԱՆ, ԶՈՐԱԲԱԲԻԿ ՔԱՇԱՆԱՑ ՂՈԼԱՆՃԵԱՆՑ

գրեցի:»

¹ 100 դուռուշը հաւասար է 1 «մէծիտիա» ուկու, կամ այժմեան ոռոսաց դրամով՝ իւրաքանչիւր դուռուշը արժէ՝ 8—9 կոպէկ:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ:

1662 թուականի Յարութեան տօնին, մի շարք ուրիշ քաղաքների հետ, Օսմանցիք, Մեծ-Վէզիր՝ Ահմէտ փաշա Քէօփրիւլեւ օղու թելագրութեամբ ու հրամանով, կործանեցին Կարսում գտնուած հայկական մատուռն ևս և յցցեր արին կոտորելու Քրիստոնեայ տղգաբնակութիւնը Օսմանեան կայսերութեան մէջ¹... յիշեալ մատուռը դրուած է եղել միջնաբերդի ներքեւ, ժայռոտ բարձրաւանդակի լանջին, հէնց այժմեան ս. Աստուածածին եկեղեցու տեղը: Դա եղել է ս. Նշանի նման մի փոքրիկ գմբէթաւոր վանք, վայելուչ շինութեամբ:

Այդ ընդհանուր հալածանքից 29 տարի յետոյ, այն է՝ 1691 թ. երբ մատուռը իսպառ քայքայուած է եղել, տեղական հայազգի ժողովրդեան ջանքով նորոգուել է², բայց այս անդամ դրէթէ բոլորովին անշուք և անպահցանման գիւղական եկեղեցու, առանց գմբէթի, փայտածածկ: Այսուհետեւ՝ 1851 թ.³ փոքր համարուելով զետեղել իւր մէջ եկեղեցասէր ժողովրդեան բազմութիւնը, արևմտեան

¹ Աղեքսանդր Երիցեանց. Տաճկաստանի Հայոց իրաւոնքները, «Փորձ» 1876 թ. № 1. (Եր.՝ 371) —² Ժամանակակից յիշատակագրեր (անտիպ): ³—Այդ հանգամանքը ապացուցում է նաև Յովհաննէս ք. Սահառունու արձանագրութիւնից (նոյն եկեղեցու արևմտեան պատի վերաբ):

Արտաքուստ, արևմտեան զբան կիսաբոլոր քարեղէն
ՀՐՃԱՆԱԿԻ մէջ, սպիտակ մարմարիօնի վերայ, քանդակ-
ուած խաչի թեւերի հետ, ուռուցիկ տառերով գրուած է՝



Նոյն խաչի պատուանդանի ներքեւ՝ ուռուցիկ տառե-
րով՝ «Սուրբ խաչ կերտեալ եւ օծեալ ի Գրիգոր վար-
« պատետէ պատրիարքէ սրբոյ Քաղաքին Երուսաղէմի շնոր-
« հեցի վասն փրկութեան հոգւոյ Ղարսեցի Մահտեսի Պա-
« պատանին եւ ծնողացն եւ եղարցն եւ ամենայն զարմիցն
« ի թ. ՌՃՂԴ» (1744):

Նոյն դրան բարձրում, խաչածե պատուհանի վերայ՝



1864 — Յնիս:

Նոյն դրան ձակատին, փաքրիկ խաչարձանի ներքեւ՝
« Սուրբ խաչ յիշատակ է Վանեցի Նաղարեանց Թումա-
« եան Յովհաննէսին և ընտանիացն թվին ՌՅԴ» (1854):

Նոյն որմի վերայ, դրան ձախակողմեան պատուհանի
բարձրում քանդակուած է՝

« ի ՌՅ: թվիս հայոց նորոգեցաւ սուրբ Աստուա-
« ծածնայ եկեղեցիս հայոց քարամբք ննջեցելոցն գերեզմա-
« նատան: Գրիչ քահանայ Օշաննէս Մահառունեանց: Յա-
« կովին Կարսեցի»:

Եկեղեցին ունի մի հին զրչագիր աւետարան. «Կար-
միր աւետարան» անունով, որ զրուած է միջակ հաս-
տութեամբ, զունատ-դեղին, մումած (յղկած) թղթի վե-
րայ, հայկական՝ ՌԽԸ (1599) թուականին և զոխաց-

ուած է 31 հատ ընտիր Տէրունական, խորանապատկեր-
ներով և չորս աւետարանիների գունաւոր նկարներով.
Երկսիւն և բոլորագիր: Դրուած է հին, ականակուռ, ար-
ծաթապատ կազմի մէջ և համարւում է հրաշագործ:

Գրել է Մոկացի Մելքիոսեղեկ քահանան՝ «ի քաղաքն
« Մոկաց ընդ հովանեաւ նր. Գ. խորանայն տմենասուրբ
« Աստուածածնին և սուրբ Յովհաննու Մկրտչին և սրբոյն
« Սաեփաննոսի Նախավկային: ՚ի կաթողիկոսութեան Աղ-
« թամարայ Տն Գրիգորի և ս. Էջմիածնայ Տն Տէր Դաւթիո:
Նոյն յիշատակարանի մէջ երեսում է մի երկրորդ
անձն՝ ծրանցի Խաչատուր քահանայ, որպէս սուրբ աւե-
տարանի զարդարող՝ «Ոսկով և լազվարտով և այլ ե-
« րանգ-երանգ գունով» Թէոգոսովիս կամ էրզրում քաղա-
քում, դարձեալ նոյն՝ 1599 թ. աւետարանը գրել է
տուել պարոն Խօջայ Խաչատուր՝ «այրն գովելի յիշատակ
« բարի և բարեխօս առ Քրիստոս հոգւոյ իւրոյ»:

Ժամանակակից յիշատակագրները վկայում են, որ
1774 թ. ս. Էջմիածնից բերել են Կարս ս. Գեղարդը, իսկ
1790 թուականին Փրկչական Խաչափայտի մասը, սուրբ
Արիստակէսի տջը, ս. Գէորգի գագաթը և ս. Ամենափր-
կիչը, որոնք անտարակցոյ վերագալքը են Մայր-Աթոռը՝
Կարիքը վերջանալուց յետոյ, սակայն այդ վերջին հանդա-
մանքը չի յիշատակում:

1826 թ. բերել են այստեղ ուրիշ մասունքներ, ո-
րոց մասին ասում է մի յիշատակագիր՝ «ի թուոջս
« ՌՄՀԵ. յամսեանն հոկտեմբերի 6, օրն շաբաթ, տօն էր
« սրբոց հր (72) աշակերտացն Քնի, սըհամենութ զնա-
« ցինք մինչի Բօստններն սուրբ Յակոբայ տջին և նր Գե-
« ղարգայ զաստարակին քահանայիւք և ժողովրդք շարա-
« կանօք բերինք սուրբ եկեղեցին աղօթիւք և արտասկօք:
« Սուրբ աջն և գաստարակ բերողն էր Արդվինեցի Գրիգոր
« արք-եպիսկոպոսն և նորին փոքրաւոր Գէորգ վարդապետն»:

Նորանուած՝ Կարուց նահանգի եկեղեցիները, դրանց թւում և քաղաքի ս. Աստուածածին եկեղեցին, Հոգեռոր Կառավարութեան բացմամբ, այն է՝ 1887 թ. Ենթարկուեցին վարչական նոր կազմակերպութեան... ամենուրեք ընտրուեցին և հաստատուեցան նոր երեսփոխաններ:

Ս. Աստուածածինը ունի, միջին հաշուով, զուտ արդիւնք տարեկան՝ 800 րուբլի: 1888/90 թուականների արդիւնքով կառուցուեցան այժմեան երեք նորաշէն կրոպակները, որոնցից տարեկան վարձադրամ ստացւում է՝ 375 ր. այժմ (1892 թ.) եկեղեցին դրամագլուխ չունի, միայն կայ 3 հազար րուբլու չափ ապառիկ:

Կայուածներն են՝ 3 նորաշէն կրոպակներ, որոնց արդիւնքը, Հոգեռոր Բարձրագոյն Խշանութեան տնօրէնութեամբ յատկացուած է տեղական եկեղեցական երկսեռ դպրոցներին: 106 զեսեատին տարածութեամբ հող քաղաքիս «Սուտ-խլի-դիւզ» անուաննեալ դաշտավայրում, որ ստացուեց 1888 թուին, Կարսի նախկին փոխանորդ՝ Տ. Յուսիկ վարդապետ Մովսիսեանի յատուկ ջանքովն ու միջնորդութեամբը... նպատակով դրա արդիւնքը գործադրել Կարսում կառուցանելի Հայկական եկեղեցու շինութեանը, սակայն ս. Մինօդի տնօրինութիւնով 1893 թուից սկսեալ վարձադրամներից 200 ր. տրուելու է նպաստ յիշեալ դպրոցներին և մնացեալ՝ 47 ր. յօգուտ կառուցանելի եկեղեցուն: ¹ Յաջորդարանը, Հոգեռոր Կառավարութեան դիւանատունն ու մի քանի ուրիշ շինութիւններ, որոնք առանձին և ոչ ինչ արդիւնք չեն բերում:

Ս. Աստուածածին եկեղեցին, յայտնի է, որ վերջին ժամանակներում երեք անգամ մատնուել է կողոպտման՝ 1874, 1876 և 1877 թ. մարտի 5-ին:

¹ Յիշեալ հողը տրուած է կապալով 1889 թ. վեց տարի ժամանակով, տարեկան՝ 247 ր.:

Հին և նոր ս. Աստուածածին եկեղեցիներում, կամ ընդհանրապէս Կարս քաղաքի մէջ պաշտօնակատար քահանայք յիշում են՝

1094 թ. Մատթէոս երէց, որ Սուքման - ամիրայի ստիպմամբ ուրացաւ Քրիստոսին:
նախ քան՝ 1165 թիւր՝ Խաչատուր քահանայ (յետոյ եպիսկոպոս).

1638 թ. Ստեփաննոս քահանայ.

1639—80 Յովհաննէս քահ. (Կիրակոսի որդի).
1689 Կարապետ քահանայ Հալապցի.

1690—1725² Ներսէս քահանայ (Տէր-Յովհաննէս Կիրակոսեանի որդին).

— Թորոս աւագ երէց.

— Երեմիա քահանայ.

— Եսայի »

— Մեսրոպ »

— Զաքար »

1750 Յովհաննէս »

1796 Մարգիս » (Նահատակ).

1798 Յարութիւն » Քեանդարեան.

1805 Յակովը »

1806 Մէծ Տէր Աւետիս քահանայ վարպետ (վարժապետ).

— Դաւիթ աւագ երէց.

¹ «Սուքման անուն ամիրայ եկեալ՝ ի Կարս, և երկու արս՝ ի գլխաւորաց քաղաքին նահատակեաց հրով, և զեպիսկոպոսն և երէց՝ մի Մատթէոս անուն եղ՝ ի բանտի, և սպանայր չարաչար տանջնել՝ զնոսա և սպանանել եթէ ոչ ուրանան գՔրիստոս, յորմէ զանգիտեալ՝ ուրացան գՔրիստոս՝ եպիսկոպոսն և երէցն Մատթէոս...» Յայսմաւրք, արեգի հԲ. (Մարտի 30):—² Կարսում գրուած մի յիշատակարան յիշում է նա և Սահակ, Ղազար և Առաքել քահանաներ, բայց նոյն քաղաքի մէջ թէ մի այլ տեղ՝ անորոշ է, ուրեմն և կասկածելի:

1807—10 Գաբրիէլ քահ. Տէր-Յովհաննիսեան
(վախճանեալ 1810 թ. փետր. 21-ին)։

1816 Յարութիւն քահանայ Տէր-Գաբրիէլեան։

1820 Արբահամ։

1821 Յովհաննէս » Տէր-Գաբրիէլեան¹։

1816—30 Աւետիս » Ղաւուխճեանց.
Խաչառուր » Տէր-Սարգսեան (նա-
շատակի որդին)։

Սիմեօն »

Պօղոս »

Կիրակոս » Շէկանեանց.

¹ Տէր Երեմիա քահանալի մոռան որդի՝ Յովհաննէս քահանան
ծնուել էր՝ 1785 թ. Կարս քաղաքում. Նրա հայրը կոչւում էր՝ Գաբ-
րիէլ քահանայ Տէր Յովհաննիսեան. սկզբնական անոնը լինում է Պապ:
Տարբական կրթութիւն ստանալով իւր ծնողի և ժամանակակից ման-
կավարժ՝ Մեծ Տէր Աւետիքի մօտ, սկսում է պարապիլ ոսկերչութեամբ
(հմուտ է եղել նա և ժամանակութեան և կազմաքարութեան արհեստ-
ներին): 34 տարեկան հասակում պատահում է նրա հետ հետևեալ,
ուշադրութեան անժամի, եղերերգական դէմքը. Պապի աներ՝ Մահտեսի
Գէյրդ աղա Զալթիկնանցը, որ տեղական Նահանգապետի գանձապահն
է լինում, փաշալից զաղունի հեռանում է ռուսների նոր նուածած՝
իւղարաքիւսա աւանը: Փաշան (Նահանգապանուր) լսելով այդ և կա-
մենալով յագեցնել իւր վրիժառութեան ծարաւը, հրամայում է ծերբա-
կալել նրա բոլոր ազգականներին, որոնց մուս և Պապին (որպէս Ս.
Գէյրդ աղայի փեսալին): Երիտասարդ տղան լսելով փաշալի հրաւէրը,
հագնում է իւր նոր, կարմիր սանդալները, կարծելով շնորհարաշխու-
թեան արժանանալ... սակայն ամուռ կապանքների մէջ դրում է մթին
զնդանում, սպասելով հետևեալ չարաբաստիկ աւուր, որ պէտք է մեռ-
նէր կախաղանի սեան վերալ: Պապի բարեկամները եղելութեան մա-
սին անմիջապէս հաղորդում են նրա եղբայր՝ Ռափայէլին, որը այդ
ժամանակ լինում է մերձաւոր գիտերից մինում: Հենց նոյն ժամին, երբ
արինարբու հանձնը պատրաստում է անպարտ կալանաւորներին կա-
խաղան բարձրացնել, Ռափայէլը ժամանում է Կարս և, որպէս փաշալի
սիրելի ժամագործ՝ համարձակում է նրա ողորմութիւնը հայցել.

Նոյն 1830 թ. լնդհանուր գաղթականութեան ժա-
մանակ յիշւում են Կարսում ծխատէր քահանայք, ո-
րոնք իրենց բանաւոր հօտի հետ գաղթել են, Կումայրի
(Ալէքսանդրապոլ) և այնտեղ էլ կնքել են իրենց մաշ-
կանացուն.

Մարկոս քահանայ Տէր-Կարտպետեան.

Յարութիւն » (Մոստ).

Կիրակոս.

Մանուկէլ.

Գրիգոր Ծաղիկեանց.

Աւետիս (Լօխման).

Սիմեօն Տէր-Սարգսեանց.

Մարկոս Մալխատեանց.

փաշան՝ այդ մարմնացած բրնձակալութիւնը՝ հապիւ թէ, զիշանում է մեղ-
մացնել իւր դատատանը, մահուան վծիոր փիխում է 500-ական փալ-
տի հարուածի և նոյնքան «քիսալ» տուգանաղրամի: Պապը կախաղանի
երկիւղից թէ ծանր հարուածների ցաւից ստանում է զիխի ջղակին ցըն-
ցումն, որ անբուժելի մնաց ցմահ: Կախաղանի՝ սեան առաջ նա ուխ-
տում է, իւր հայրերի նման, ամրոջ կնանքը դոնել Աստուածային
Ցածարի սպասաւորութեանը, և թէ հրաշըրջ յաջողիք նրան կնդանի
մնալ: Ալինչեր՝ Փայտի, անտանելի հարուածների տակ խղճալի
Պապը իւր իրանը ծկած՝ տանջում և լաց է լինում դանապէս, նրա
նորատի ամուսինը իւղձահարուած, որ իւր պատճառով մահուան է զա-
տապարտում Պապը, լուսահատ որ բաց աչքով և երեսով չի կարող
ալ ևս երևալ ամուսին հարազատներին, գնում է գետի վերայ և աշ-
խատում է սահոնցը կոտրելով՝ խորասուցել իրեն ջրի մէջ, նկատելով
այդ, օտար մարդիկ օգնութեան են համառում և աղատում են խեղուե-
լուց: Պապը՝ փրկուելով կախաղանից՝ կատարում է իւր ուխտը և 1821
թ. փետրվարի 25-ին Աւետիսը արք-եպիսկոպոսից ծեռնադրում է քա-
հանայ (Նօղպանրում): 1827 թ. վարուժ է Կարսի նոր բացուած դրա-
բոցում ուսուցի պաշտօն, իսկ 1830 թ. գաղթելով Ալէքսանդրապոլ,
այնտեղ ևս վարուժ է ուսուցի, հոգեւոր կառավարութեան անդամի,
բարեկարգչի և այլ պաշտօնների և վախճանում է 1870 թ. յունուարի
14 - ին:

- Մարգար քահանայ
Մատթէսս » Տէր-Յակոբեանց.
Դաւիթ » Տէր-Սիմէօնեանց (Նկարիչ և
տօմարագէտ),
Յովհաննէս » Ստեփանեանց,
Սահակ » Սահրատեանց (Ղօշավանք-
յի),
1850 Յովհաննէս » Սահառունեանց:
Գաղթականութիւնից անմիջապէս յետոյ, որովհետեւ
դատարկուեցաւ քաղաքը հայ ազգաբնակութիւնից (այդ
ժամանակ՝ 1830 թ. Կարսում մնացին 8 տուն միայն),
ուստի թէ՛ քահանաները և թէ՛ եկեղեցական բոլոր զար-
դերն ու անօթները փոխադրուեցին Կումայրի կամ այժ-
մեան Ալէքսանդրապոլ քաղաքը: Մինչև 1853 թ. պա-
տերազմի ժամանակ Կարսի հայազգի ժողովրդեան հոգեոր
պէտքերը մատակարարում էին եկեղեց կամ պատահական
քահանաները. զլիաւորապէս Զերմալի գիւղի Տէր-Մափա-
յէլ քահանան: Այնուհետև, որպէս սեպհական ծխատէր,
Կարսի 80 տուն հայ ժողովրդեան վերայ ձեռնադրուեցին՝
Ղուկաս քահանայ Տէր-Ստեփանեանց (այժմ Արծրունի)
1852 թ. և Զօրաբարէլ քահանայ Դպիր-Ղօլանձեանցը՝
1858 թ.:

Այժմեան միաբանութիւնը կազմուած է չորս քա-
հանաներից, որոնք են՝

Ղուկաս աւագ քահանայ Արծրունի.

Զօրաբարէլ քահանայ Ղօլանձեանց.

Եկեղեններ Ալէքսանդրապոլու վիճակից. Մինաս քահանայ
Տէր-Պետրոսեանց (Հոռոմ գիւղացի) և Մելքիսեդեկ քա-
հանայ Մանուկեանց (Բայանդուր գիւղեց): Ունի՛ երկու
գպիր և երկու ժամանու Կիւրակէ և տօն օրերին եր-
գում է զպրոցական երգեցիկ խումբը՝ ուսուցիչ պ. Սար-
դիս Քօթանձեանցի գպրապետութեամբ:

- Երեսփոխաններ յիշւում են՝
1705 թ. Յարութիւն.
1725 » Սարուխան }
— » Մուրատ } եղբայրներ¹.
1856 » Յակոբ Գղիրեանց.
1858—9 ղազաղ Պողոս Մելքոնեանց.
1859—61 Յովհաննէս Գղիրեանց.
1861—4 Յակոբ Նահապետեանց:

1864 թուից սկսեալ եկեղեցական և դպրոցական
գործերը կառավարուել են «Թաղական խորհրդի» ձեռօք
տեղական առաջնորդի նախագահութեամբ, ինչպէս որ
տրամադրում է 1863 թուից Տաճկաստանում գործա-
դրուող «Սահմանադրութիւնը»:

Թաղական խորհրդի անդամներ եղել են՝
1864—7 ղազաղ Պողոս Մելքոնեանց.
Յովհաննէս Գղիրեանց.

Գրիգոր Կարապետեանց և
Մահտեսի Կարապետ Յակովեանց:
1867— Սարգիս Մահտեսի Գրիգորեանց.
Մինաս Ղազարեանց.
Աւետիս Կորիսմազեանց:

1872—4 Կարապետ Գրիգորեանց.
Արսէն Խանամիրեանց.
Մահտեսի Սարգիս Փալանձեանց.
Սարգիս Մահտեսի Գրիգորեանց.
Խաչատուր Ղուկասեանց և
Պետրոս Յարութիւնեան (Շեխեանց):
1874—7 Խաչատուր Էօքսիւզեանց.
Մկրտիչ Մատղաշեանց և

¹ Յիշատակարան «Մեռելլարուց» գրչագիր աւետարանի:
(Ալէքսանդրապոլի և Աստուածածին եկեղեցում):

- 1877— Սիմէօն Աւետիսեանց:
 Պետրոս Յարութիւնեան (Շեխեանց).
 Կարապետ Գրիգորեանց.
 Նազարէթ Խւսուֆկեանց.
 Մինաս Հազարեանց և
 Սարգիս Մահատեսի Գրիգորեանց, սրանք թէ և
 հաստատուած են եղել, սակայն զանազան պատճառաբա-
 նութիւններով չեն կամեցել պաշտօն վարել մինչև որո-
 շեալ 3 տարւայ աւարաը, և երեսփոխանութիւնը մնա-
 ցել է բացառապէս նախկին թաղական՝ Մկրտիչ Մատ-
 դաշեանցի վերայ:
- 1878— Մելքոն Յարութիւնեան (Շեխեանց).
 Կարապետ Գորջեանց և
 Սարգիս Մահատեսի Գրիգորեանց:
- 1878—80 Մահատեսի Յովհաննէս Գոխիկեանց.
 Ստեփան Սաղաթիկեանց.
 Առաքել Սաղաթիկեանց և
 Յակով Պալեանց:
- 1880—3 Մարգար Օլթեցեանց.
 Հաճիբէդ Բաշմաճեանց.
 Մելքիսեդէկ Գորջեանց.
 Աղէքսանդր Մարգսեանց.
 Մկրտիչ Նալբանտեանց.
 Յակով Պալեանց.
 Նիկողայոս Վարդպատրիկեանց (վերջինիս՝ իւր
 հրաժարականի պատճառով փոխարինումէ Յարութիւն
 Շտհաբասեանցը, իսկ Մելքիսեդէկ Գորյոյեանցին՝ Պետրոս
 Մալաւերեանցը կամ, որ աւելի ձիշտն է, սա միայնակ
 վարում է երեսփոխանտեսի պաշտօն 1882 թ. սեպտեմ-
 բերի 28-ից, երբ արդէն լուծուած է լինում յիշեալ թա-
 զական խորհուրդը):

1883 թ. օգոստոսի 19-ին ընտրուում են երեսփոխա-
 նական պաշտօնի մէջ.

Սիմէօն Աւետիսեան.

Յովհաննէս Աղյոյեան և

Յովհաննէս Մահատեսի Պապյեան, սակայն
 զրաժարական հրաժարական պաշտօնավարութիւնից և զեկ-
 տեմբերի 12-ին աղջային-պատղամաւորական ժողովը ընտ-
 րում է նոյն պաշտօնի մէջ, հետեւեալ անձանց.

1883—6 Մելքոն Յարութիւնեան (Շեխեանց) երեսփո-
 խան.

Յովհաննէս Աղյոյեանց
 Սիմէօն Աւետիսեանց } օգնականներ:

1886—7 Կարապետ Զիլինկարեանց.
 Մկրտիչ Մանուսածեանց:

1887 թ. Հոգեւոր կառավարութեան բայցմամբ, ինչ-
 պէս ասայինք արդէն, վերանում է նա և թաղական խոր-
 հրգի գոյութիւնը և ընտրում են երեսփոխան երեք տարի
 ժամանակով.

1887—90 Պետրոս Մալաւերեանց.

1890—3 Անդրաք Գրիգորեանց.

Եկեղեցին ունեցել է զուտ արդիւնք (յօգուտ աղ-
 քատաց հանգանակած զրամներով հանդերձ): 1886 թ.
 մարտի 7-ից մինչև օգոստոսի 1-ը 1887 թ. 669 ր. 99 կ.
 (Բացի աղքատների համար հանգանակած զրամները)

1888 թ. 806 ր. 40 կ.

1889 » 873 » 62 »

1890 » 815 » 24 »

1891 » 787 » 32 »

1892 » 1599 » 49 »

առաջարկը սրբազնը երկրորդել է ազգային-քաղաքական ժողովի որոշմամբ 1882 թ. բայց այս անգամ խընդրելով շնորհել մէկը քաղաքի յարմարաւոր ջամփներից հայոց եկեղեցի գարձնելու. իսկ «Հաճի-սէյիդ» ջամփն վաճառել դպրոցական շինութեան վերածելու: Նոյն՝ 1882 թ. երբ ժամանում է Կարս Գլխաւոր կառավարչապետ՝ իշխան Դօնդուկով՝ Կորսակովը, ձաշի վերայ արծարձում է հայոց եկեղեցու խնդիրը և նորին պայծառափայլութիւնը պատուիրում է Նահանգապետին յանձնել «Հաճի-սէյիդ» հայ ազգաբնակութեան:

Եյնուհետեւ խնդիրը դարձեալ ձգձգում է և հոգեոր դործոց Գեր. Կառավարիչը փետրվարի 13-ին, 1883 թ. գրութեամբ յիշեցնում է Զինւորական պ. Նահանգապետին, որը իւր հերթում տնօրինում է «Յանձնել «Հաճի-սէյիդ» ջամփն հայոց, բայց որովհետեւ դորանում ամ «բարուած է ռազմական մթերքներ, ուստի մինչև հաճի-սէյիդի դատարկուելը՝ տալ Թաս-ջամփն»¹:

Մի տարի ևս անցնելուց յետոյ, Կարսի բերդապահը գրութիւնով՝ 5 յուլիսի 1884 թ. № 1829, զիմում է նորին Գերապատութեան խնդրելով, որ մի քահանայ նշանակէ, արդէն դատարկուած և հայերին տուած «Հաճի-սէյիդ» ջամփն ընդունելու տեղական օրտիկանապետից, որին և յաղորդուած է անյապաղ յանձնել: Մեղ համար միանգամայն անբացատրելի պատճառով իւր ժամանակ չի ստացւում ջամփն և 1885 թ. նոյեմբերի 15-ին տեղի է ունենում Նահանգապետի գրութիւնը (№ 11272), որով վերստին ծանուցանում է իւր նախկին խոստումը՝ յանձնել ջամփն, երբ որ դաղարի զօրաց մթերանոց լինելուց. . .

¹ Գրութիւն Զինւորական պ. Նահանգապետին Կարուց՝ 18 փետրվարի 1883 թ. № 1014:

ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Երկրորդ եկեղեցին է՝ սուրբ Նշան վանքը, որ գտանում է «Բերդ» անուանած թաղում հնաշէն պարիսպների մօտ, միջնաբերդի արևելեան ծայրում, որ ինչպէս ասացինք, իւր տեղում՝ հաւանական է Յուաքելոց եկեղեցու ժամանակակից համարել:

Օր ըստ օրէ ընդարձակուելով քաղաքի դրութիւնը և ս. Աստուածածին եկեղեցին իւր փոքրութեամբ ու հեռաւորութիւնով անյարմար լինելով ժողովրդեան հոգեոր պէտքերին բաւարարութիւն տալու, մանաւանդ որ «Բայրամ-փաշա» և «Բերդ» քաղաքամասերի բնակիչները թախանձում են տեղական հայոց հոգեոր գործերի կառավարչին միջնորդ հանդիսանալ ուր որ պէտք է, քաղաքի այդ հեռաւոր մասերում ևս առանձին եկեղեցի ունենալ, վերածելով տաճկական բազմաթիւ ջամփներից մէկը Քրիստոնէական տաճարի:

1881 թ. օգոստոսի 13-ին սրբազնն Աղուանեանցը զիմում է տեղական Նահանգապետին՝ շնորհել մէկը յիշեալ աղօթատներից՝ «Որովհետեւ ազգը առ այժմ կա» «բողոքութիւն չունի մի ուրիշ նոր եկեղեցի շինելու, — «զրում է նա—վասն որոյ ինը լուսում ենք Ձեր Բարձր Գե» «բազանցութիւնից, շնորհ անել անօրէնութիւն անելու, «քաղաքի Հաճի-սէյիդ թաղի մէջ դանուած Հաճի-սէյիդ «անուն առանց մինարէի ձամփն ազգիս շնորհել...» նոյն

Հայ-ազգաբնակութեան շնորհուած ս. Նշանը արտաքուստ և ներքուստ շինուած է սրբատաշկարմիր, դորշութուխ քարերով: Ձեղունը բարձրանեռում է ներսից չորս որմնասեանց վրայով և տալիս է եկեղեցուն քառակուսի կամ խաչաձև զիրք. ունի երկու հատ մանրիկ, երկյարկանի խորաններ, մի հատ պատարազի, կիսաբոլոր սեղանով: Այժմ արևմտեան կողմից մի դուռ ունի. ունիցել է հնումը և երկրորդը հարաւային կողմից: Ունի նաև մի քանի նեղկակ պատուհաններ զանազան կողմերից:

Հայկական այդ սրբավայրը Թիւրքաց տիրապետութեան ժամանակ եղել է երբեմն իսլամական աղօթատուն «Թաս-ջամի» անուամբ, այդ անունը յարմարցնելով իւր արտաքին նմանութեան, որովհետեւ հին գմբեթի փոխարէն, թերես վերջին ժամանակներում՝ տանիքը ծածկել են մի տեսակ՝ «թասի» ձեռվ, յար և նման այս կողմերի բաղանիների ծածկերին և երբեմն՝ ցորենի և գարու շտեմարան կամ ռազմամթերքի ամբարանոց:

Պէտք է յիշել և այն՝ որ առաջնորդական տեղապահ Տ. Աղուանեանցը իւր զրութեամբ, 14 դեկտեմբերի 1877 թ. № 23, յայնում է Կարսի Նահանգապետին որ՝ «Թաս-ջամին» իսկապէս Յունաց եկեղեցի է եղել՝ «Մեր հաւաքած հին տեղեկութիւններէն վերահասու լի- « նելով, — զրում է Նորին Բարձրապատռութիւնը — « կ'ծանուցանեմք թէ՝ Յշնք արդէն եկեղեցին ունին քա- « զաքիս մէջ, զօր թուրքեր «Թաս-ջամի» կանուաննեն, « զայն Յունաց աղօթանոց նշանակել խիստ օրինաւոր « կ'թուի մեզ. . . »

Ս. Նշանում նորոգութիւններ կամ կարկատաններ արել են 1883 թ. ապա, որպէս եկեղեցի, զարդարուել է նա 1885 թ. Մովսէս Բէդ Տէր-Սարգսեանցի ջանքով, որ իւր գէպի աստուածային տաճարը տաճած անհուն ջերմեռանգութեամբն ու հաւատարմութեամբը միանդամայն

օրինակելի կամ հաղուազիւտ երեսփոխան էր. . . Եւ վերջերում՝ 1891—2 թ. Ղազար Ղազարեանցի շնորհիւ, ծախիքը հայթհայթեց տեղական հայազգի ժողովրդական-ներից, յատուկ հանգանակութեամբ:

Այդ եկեղեցին, մանաւանդ վերջին տարիներում, ոչ ինչ նիւթական արդիւնք չի տալիս: Դրամագլուխ չունի. չունի և ոչ մի նշանաւոր կալուած, բացի երկյարկանի մի փոքրիկ բնակարանից (եկեղեցու հանդէպ գտնուած), որից ստացւում է տարեկան՝ 40—50 ր. վարձադրամ:

Ունի երկու քահանայ, երկու զպիր և մի ժամակոչ: Միաբան քահանայքն են՝ Յակովը քահանայ Կիրակոսեանց, փոխադրուած Ալէքսանդրապօլու վիճակի Սարիբաշ զիւղից և Խորէն քահանայ Ստամբուլցեանց (նորընձայ), Ալէքսանդրապօլիցի, յատկապէս այս եկեղեցու ծխականներից մի մասի վերայ ձեռնադրուած:

Երեսփոխանական պաշտօն վարել են՝

1883— 5	{	Վարդան Աւետիսեան և Պողոս Էքմալեանց.
		Մովսէս Բէդ Տէր-Սարգսեանց.
1885— 7		Մովսէս Բէդ Տէր-Սարգսեանց.
1887—90		Ստեփաննոս Գիլանեանց.
1890— 3		Ղազար Ղազարեանց:

Այդ տեղը ստանալուց անմիջապէս յետոյ, այցելելով
Կարսին Երևանի թեմակալի փոխանորդ՝ Գեր. Սուքիաս
որբազան եպիսկոպոս Պարղեանցը օգոստոսի 15-ին (1877)
ուսումնարանի դահլիճում ժողով հրաւիրեց քաղաքիս
հայ-ազգաբնակութեան առաջաւոր անդամներին¹ և ա-

ԿԱՌՈՒՑԱՆԵԼԻ ԵԿԵՂԵՑԻ.

1877 թ. նոր բացուած Հոգեոր Կառավարութիւնը
կարեոր համարելով քաղաքի մի յարմարաւոր մասում,
հարթ տարածութեան վերայ, շինել հայկական մի այլ
վայելուչ եկեղեցի, յուլիսի 9-ին № 250, գրութեամբ զի-
մեց Կարսի բարեշինութեան համար սահմանուած Մաս-
սամաժողովի նախագահին և նկարագրելով արդի եկեղեց-
եաց անյարմարութիւնները՝ որ մեկը և տեղադրութեամբ
և երկրորդը՝ իւր փոքրութեամբ անկարող են բաւակա-
նութիւն տալ ժողովրդի աստուածակաշտական զգացում-
ներին՝ խնդրեց շնորհել քաղաքի կենդրոնում իւր զիր-
քով միանգամայն համապատասխան, 840 քառակուսի
սաժեն տարածութեամբ քաղաքապատկան բաց գետինը,
յանձն առնելով գնել նրա վերայ գտնուած մանր շինու-
թիւնները՝ կրպակներն ու աները:

Զինորական պ. նահանգապետը հիմուելով յիշեալ
Մասսամաժողովի յուլիսի 13-ին կայացած՝ № 30, արձա-
նագրութեան վերայ, իւր՝ օգոստոսի 20, № 327, վկայա-
կանով, քաղաքի երրորդ պողոտայում Ա Բ Վ Ր հրապա-
րակի սահմանում գտնուած վերոգրեալ 840 սաժեն հողը
յատկացրեց Հայոց եկեղեցի շինելու համար, պայման գնե-
լով՝ որ Հոգեոր իշխանութիւնը իրաւունք չունենայ օ-
տարացնել այդ գետինը, մաս առ մաս կամ ամբողջապէս
վաճառելով ուրիշն, այլ անշուշտ ծառայեցնելու է ո-
րոշուած նպատակին:

¹ Առաջ ննք բերում այստեղ այն գողտրիկ հրաւէրը՝ որով դի-
մեց նա հասարակութեան՝ ժողովի բացման ժամանակ՝ «Սկսեալ այն
«օրից՝ երբ Հայկական ազգը Բարձրեալի նախակոմութեամբ Աստ-
«ուածածանօթութեան պայծառ Լուսոյն աշակերտուելու կոչուեցաւ, նախ
«մեր առաջին կրտարոշաց՝ Թադէսու և Բարդուղիմէսու սրբազն
«առաքեալների և ապա մեծ նահատակ Տէր Սուրբ Գրիգոր Լուսա-
«ւորչի առաջնորդութեամբ, մեր երանելի նախնեաց առաջին հոգը
«եղաւ իւրեանց ամենատեսակ աշխատութիւնները և հոգացողութիւն-
«ները գործ դնել աստուածային տաճարների հաստատութեան և պայ-
«ծառութեան համար: Եթէ երանելի են նոքա, որոնք միայն որ և է
«լիշտակ ունին Սիօնում, հապա քանի պատիկ աւելի երջանիկ և
«ինկելի այն ծեռքերը մեր երանաշնորհ նախնեաց, որոնք հիմն դրին
«այնքան բազմաթիւ ըննադաշեն տաճարների և հաստատեցին այն
«հոյակապ երկնաբերձ վանքերը, որոնցից ոչ միայն կանգուն մնա-
«ցածները, այլ և նոցա դերբուկները և ամեն մի բեկորը անգամ պար-
«ծանք է բերում Հայազգի ծարտարապետութեան. այն, այն փառազարդ
«Տաճարներն են ասում, որոնք դարեւոր ժամանակներից ցալսօր մամ-
«ռապատ ծենծերուելով արեգակի կիզող ծառագյեններից, մնում են,
«որպէս կենդանի վկայ և անխօս բարողներ, մեր հարց անցեալ փա-
«ռաց, բարեպաշտութեանց և մեծագործութեանց լուսաւորեալ աշխարհի
«առաջ: Եթէ այս օրուան օրս ուրիշ մի այլ ապացոյց լ'ինի, այն
«հրաշակերտ եկեղեցիքը, որոնք իսկ առ իսկ սփոռուած են Հայա-
«տանի ամեն կողմերը, որպէս և Շիրակ գաւառի մէջ, նուիրուած
«լինելով Ամենաբարձրեալ Աստուծոյն, իրենց աւերակներով ամենից
«անելի զօրեղ ապացոյց կարող են լինել բոլոր ազգաց առաջ հայերիս
«ներկայացնելու իբրև առաջին բարեպաշտ և կրօնական ժողովուրդ:

«Երբայլական ազգը պարձենում է դեռ երկրագնդիս վերալ Մով-
«սիսի, Անարովնի, Դաւթի, Սողովմոնի, Բէսէլելի, Եզրասի և Յով-
«սէի խորանաշէն ջերմեռանդութիւններով: Հայատանի պատմութիւնը
«լիբն է ալդպիսի փառաց և գովեստի դարիններով. մենք՝ հայերս էլ

ռանձին համախօսականով ընտրել տուեց 12 անդամներից բաղկացած՝ կառուցանելի եկեղեցու հոգաբարձութիւնը, որոնք և հաստատուեցին նոյն սրբազնից իրենց պաշտօնի մէջ օգոստոսի 17, № 175, արձակած զրութեամբ: Դրանք էին՝

Գեր. Դրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանց,
Արժ. Մինաս Քահանայ Տէր-Պետրոսեանց,

«Կարող ենք առաջ բերել Տրդատ, Գրիգոր, Ներսէս, Կոմիտաս, Վահան, Սմբատ, Աշոտ, Վահրամ, Մագիստրոս, Տարսալիծ, Կաղրանիդէ, «Մարիամ, Խոսրովանոյշ և այլ բիւրաւոր տաճարաշէն իշխաններ և «իշխանութիք, Թագուրներ և Թագուրնիք և պարծենալ նոցա անմահ «լիշտակներով. բայց բաւական չէ միայն լինիլ բարեպաշտ հօր «զաւակ և պարծիլ պապերի մեծագործութեամբ, այլ պէտք է հետևել «արիութեամբ բարի հօր շաւոյին՝ «Որդի հարապատ զնմանութիւն «հօրն բերէ»:

«Մեր նախնիքը զոհեցին իւրեանց անկախութիւնը, զոհեցին «հարստութիւն, իշխանութիւն, փառք, պատիւ և ամենայն ինչ աշխարհում. այդ գեռ բաւական չէր, աւելացրին դորա վերայ և իւրեանց «Թանկագին կեանքը և որ ամենից բարձրն էր՝ ընտանեկան սրբութիւնը, բայց կանգուն պահեցին իրանց ծեռքերով հաստատուած սրբակալերը, շքեղազարդ տաճարները և մեր կրօնը իրեւ սուրբ աւանդ «մեզ հասցնելով, ան, տաճարները, որոնց յատակագիծը մեր սուրբ «հարց անդին արիւնով է նկարուած, բայց այսօր այն անբիծ սուրբ «կաթիլներով ցողուած տաճարներից շատերի դոները Հայ սերունդի «առաջ փակուած են... Այսու ամենայնիւ Հայը իրեւ հարազատ որդի «իւր սուրբ նախահարց աշխատել է և աշխատում է միշտ նոցա անմանիշխանութիւնը, եթէ ոչ բոլորը, գէթ մասամբ կործանող ժամանակի անողում ժանիքներից ապատել: Տիսուր հանգամանքները ժամանակ առ ժամանակ հայ ժողովրդի ամեն դասակարգերից զոհեր և «ամենակերպ զոհողութիւններ են պահանջման որոնց լիշտակը սուրբ «է և անմահ իւրաքանչիւր հայի համար և պիտի լինի միշտ. այժմս «էլ անհրաժեշտ հարկը պանհանջում է մեզնից նիւթական չափաւոր «զոհողութեամբ ապացուցանել համայն աշխարհին թէ՝ արժանաւոր «ժառանգ ենք մեր գերեզանիկ նախահարց, մեր այդ կարեւոյն չափ «նիւթական չափաւոր զոհողութիւնը տեսնելով միայն՝ թէ մեր տա-

Մէծ. Պետրոս աղա Զիթողցեանց,

» Մահտեսի Յարութիւն աղա Միհեանց,
» Վալերիան Նիկոլայիկիչ Շաղուբաթեան,
» բժ. Աղէքսանդր Ղաղազեանց,
» Մովսէս-բէդ Տէր-Մարգսեանց,
» Գէորգ Աղնաւուրեանց,
» Բաղդասար Զատիկեանց,
» Դաւիթ Միրիմանեանց,
» Աւետիս Մաֆարեանց,
» Մարգիս Աստոյեանց:

Նոյն ժողովի մէջ յօգուա յիշեալ եկեղեցու շինութեան Հանդանակութիւն բաց արեց, որ և նոյն ժամում մատրագրուեցին՝ 8010 բուբլի:

Երեք՝ երկար և ձիգ տարիների ընթացքում (1888—90) հազիւ թէ վերջնականապէս կազմուեց քաղ. Ճարտարապետ՝ Մալատիո-Պետրիշէի ձեռօք տաճարի յատա-

«բաբնակ եղբարիք և թէ մերձարնակ օտարազգիները կ'համոզուին «և կ'խոստովանին, որ արդարկ Հայ հասարակութիւնը նախանձաւոր «է իւր երջանկալիշատակ նախնեաց փառքին և սովոր չէ... անշուր «աղօթարանաց մէջ իւր հոգեկան մրմունջը թափել առաջի Բազմախնամ Հօրն, այլ շքեղ և զարդարուն կ'կանգնէ իւր համար, սրբութեան նորան Հայ Բէսէլիէլի և Զօրաբարէլի ծեռքերով և ապա «սաղմոսաց քաղցրանուագ ալէլուն սրբերգութեանց հետ խառն՝ յերկինս՝ 'ի վեր կ'ծօնէ Բարձրելոյն: Արդարե. երջանիկ է այն օրը և «բարեբաստ այն ժամը, կարսարնակ Մեծարգոյ ազգալինք, երբ մի «նոր հայազգի Տրդատ ծարտարապետի օրինեալ ծեռքով կ'դրուի Կարս «քաղաքի Հայոց նոր Դարբիրայի հիմնաքարը հողի խորքում և կ'տուգորուի մեր աչաց օրինութեան ցողով իրեւ վկայ կարսարնակ Հայոց «կրօնասէր զերմեռանդութեանց:

«Օրինում եմ 'ի սրտէ աստուածային օրինութեամբ բոլոր նուիքատու բարեկաչտ անձանց և խնդրում եմ Բարձրեալից պարզենել «նոցա արդար վաստակներից նուիրած տրոց փոխարէն՝ միոյն հաղարապատիկ և բիւրապատիկ: Ամէն:»

կազիքն ու ուրուագիծը, որի շինութեան համար ծախք նախատեսուած էր աւելի քան 100 հազար րուբլի. այդ երեսից տեղիս ժողովրդեան նիւթական ցիֆից, անտարակցյա, բարձր համարուելով, մանաւանդ որ յիշեալ ճարտարապետն էլ հրաժարուեց օրէնքով պահանջուած շինութեան ամրութեան մասին բացատրական թերթը տալու, ուստի զինուրական ինժիներ՝ Լացինիկօվին նոր յատակագիծ և ուրուագիծ կազմել տալով, որի կառուցման ծախք նախատեսուած էր ոչ աւելի 30 հազար րուբլուց, չոգեսր կառավարութիւնը 1891 թ. Մայիսի 7-ին ներկայացրեց Երևանի Վիճակային Կոնսիստորիային՝ ի հատատութիւն։ 1892 թ. էջմիածնի ո. Մինօդի միջնորդութեան համաձայն՝ Ներքին Գործերի պ. Նախարարից ստացուեց կառուցման թղյլտուութիւնը։

Մինչդեռ յատակագիծի և ուրուագիծի կազմելու գործը գեգերւում էր ճարտարապետների մօտ և դիւանական ատեաններում, եկեղեցաշինութեան հոգաբարձութիւնը (որի անդամների մեծամասնութիւնը զանազան պատճառներով հրաժարուած էր և զործողներն էին միմիայն՝ Յուսիկ վարդապետ Մովսիսիան, Մինաս քահանայ ՏէրՊետրոսեանց, Դաւիթ Միրիմանեանց, Մահտեսի Յարութիւն Մինասի, Բաղդասար Զատիկեանց և Սարգիս Աստղեանց) կազ ՚ի կազ առաջ էր տանում նախապատրաստութեան դործը. վիճակիս Բարձրապատիւ փոխանորդ՝ Յուսիկ վարդապետ Մովսիսիանը, արժ. Տէր-Մինաս Հօր և հոգաբարձութեան մի քանի անդամների հետ անձամբ կրպակից կրպակ շրջելով, նպաստալիքամ էր հաւաքում, որ և 2—3 ամսուայ, ընթացքում (1890 թ.) հանգանակեց 2243 ր. և միայնեղով չոգեսր կառավարութեան մէջ նոյն նպատակի համար գանձուած գումարի հետ, ծախսեցին եկեղեցաշինութեան տեղի վերայ գտնուած մի քանի կրպակներն ու տները գնելու։

Նշանաւոր քանակութեամբ քար պատրաստել տուին և վերջերում՝ 1892 թ. խօսերային համաձարակի ժամանակ յիշեալ գետինը շրջապատուեցաւ քարեղին պարապով։

Դեր. Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանցը նուիրեց իւր երկյարկանի փոքրիկ տունը, որ վաճառուեցաւ 700 բուբլու, իսկ Շեմեան Մելքոն և Պետրոս եղբայրները նուիրեցին՝ կառուցանելի եկեղեցուն յատկացուած գետնի վերայ ունեցած՝ իրենց սեպհական կրպակի տեղը. բայց այդ՝ ստորագրուել են վճարել նա և 1100 ր. զրամով։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ.

Սուրբ Աստուածածին եկեղեցու շինութեան աւարտմանից անմիջապէս յետոյ, 1865 թ. տեղական ջերմեռանդ ժողովուրդը իւր յատուկ օժանդակութեամբ՝ Նահապետեան Մեծոյ և Յակովը եղբարց նախաձեռնութեամբ նոյն եկեղեցու գաւթում վերականգնում է այժմեան՝ դպրոցական երկյարկանի շնչքը, որի կառուցման համար ծախք լինում է մօտաւորապէս՝ 40 հազար դուռուշ Օսմաննեան։

Կրթութեան այդ տաճարը նոյնպէս շարունակութիւն է լինում իւր անցեալ շինութեան, հին՝ արդէն քայքայուած՝ հմքի վերայ գրւում է նորի շարունակութիւնը նա և ըստ բարոյականին։ Հին վարժարանը կառուցուել էր 1827 թ. Նօշավանքի առաջնորդ՝ Ստեփաննոս արքեպիսկոպոս Խաժակեանցի ջանքով ու աշխատութեամբ¹։ Յիշեալ վարժարանը ծառայել է իւր կոչմանը

¹ Ժամանակակից յիշատակագրեր (ձեռագիր) և կենդանի աւանդութիւն։

մերթ նախանձելի առաջադիմութեամբ և մերթ՝ ընդհակառակը: Այդ տեղ առաջին կամ անդրանիկ դաստիարակ եղել է Յովհաննէս քահանայ Տէր-Գարբիէլեանցը, սաների թիւը, հէնց առաջին տարում, հասնելիս է եղել 90-ի: Այնուհետև 1830 թ. ընդհանուր գաղթականութեան պատճառով, ինչպէս տեսանք արդէն, զատարկուեց Կարսը: Հայ ազգաբնակութիւնը՝ 693 ընտանիքներ փոխազրուեցին Կումայրի՝ ոռւսաց նորանուած երկիրը՝ և Կարնոյ գաղթականների հետ միասին՝ հաստատեցին այժմեան Ալեքսանդրապօլ քաղաքը: Այդ ժամանակ մնացին Կարսում միմիայն 8 տուն հայեր: Ազգային ու եկեղեցական գործերը մնացին երեսի վերայ կամ իսպառ մոռացուած մինչև 1856 թ. որ ժամանակ բազմացած լինելով հայ ժողովրդեան թիւը (80 ընտանիք), զգացում է 'ի միջի այլոց և ուսման պահանջը. բացւում են ուսումնարանի դռները և սկսում է խալիֆայական դասաւանդութիւնը: Վարժարանը կառավարում է մի ուսուցչով, որ անտարակոյս ունենում է և իւր օգնական-խալիֆաները... Այդ մանկավարժները՝ որ իրենց ժամանակ փայլելիս են եղել կրթութեան հորիզոնում, որպէս վառ աստղեր՝ մեր պատմութեան մէջ կարող են տեղ բռնել հետեւել զասաւորութեամբ.

1855—7 Ղուկաս քահանայ Արծրունի.

1857—8 Տիրացու Յովհաննէս Ղօլանձեանց (այժմ Զօրաբարէլ քահանայ).

1858—63 Հաճի Մովսէս Տէր-Մելքոննէանց.

1863—5 Զօրաբարէլ քահանայ Ղօլանձեանց.

1865—8 Գրիգոր վարժապետ Սողյեանց (Բաղեշեցի).

1868—9 Բաղազի Կարապետ.

1869—72 Մամբէէ Բզնունի (յետոյ վարդապետ).

1872—4 Յովհաննէս վարժապետ Շապին - Ղարահի-սարցի.

1874—5 Զօրաբարէլ քահանայ Ղօլանձեանց.

1875—6 Մկրտիչ Ապտալեանց.

» » Սարգիս Ահարօնեանց.

1876—7 Գրիգոր վարժ. Մամիկոնեանց (Երզնկացի). Սարգիս Ահարօնեանց:

Սյն միջոցին՝ 1876 թ. բացուեցաւ նա և օրիորդական գլուոց, ուր յաճախում էին մի քանի աղջիկներ:

Տղայոց ուսումնարանում աւանդուում էր նա և տաճկաց լեզու, որի զասաւուն էր Գրիգոր վարժապետ Մամիկոնեան Երզնկացին, ստանալով ամսական 5 հարիւր զուռուշ վարձարութիւն. սա պայմանաւորուել էր գլուոցական վարչութեան հետ մինչև 1879 թ. այսինքն՝ երեք տարի ժամանակով, սակայն նկատելով քաղաքական տագնապը, որ սպառնում էր վերջանալ սոսկալի պատերազմով, 1877 թ. յունուարի 1-ին, Սարգիս վարժապետ Ահարօնեանցի հետ միասին՝ հրաժարական են տալիս և հեռանում են Կարսը: Այնուհետև զպրոցական գործը կառավարուում է զարձեալ Զօրաբարէլ քահանայի և Վահագոյ՝ Մոխրաբերդցի Գէորգ վարժապետի ձեռօք, մինչև որ սկսում է քաղաքական փոթողիկը, տեղում է ոռոմբի կարիստը և Կարսը զտնուելով համարեա պաշարուած զբութեան մէջ՝ իսպառ մոռացութեան է տրվում կրթական գործը:

1865—6 թ. Կարսի զպրոցների համար զարապլուխ պէտք է համարել որովհետև Հայագէտ՝ Գրիգոր վարժապետ Սողյեանցի դասաւանդութեամբ ու ջանքով արականաց ուսումնարանը նախանձելի բարեկարգ դրութեան մէջ է գտնուում: այնքան առաջ է զնում այստեղ աղային լեզուի զիտութիւնը, որ զպրոցական աշակերտաց շրջանում զանազան բարեգործական և բարենպատակ լնկերութիւններ կազմուեցին, «ս. Սահակ-Մեսրովեան լնթերցարանը» (զբաղարան) բացուեցաւ և այլն: Նոյն

ժամանակում կրթութիւն ստացած երիտասարդութեան ձեռօք և դպրոցական աշակերտաց աջակցութեամբ հրատարակում է՝ «Ծաղկութանք չայտանի» ձեռագիր շաբաթաթերթը...»

1878 թուին ուսումնարանի դռները բացուեցին կը կին անգամ:

Հետեւեալ 1879 թ. ազգային-քաղաքական ժողովը մտածում է «աղջկանց վարժարան մը բանալ»¹, ուստի դպրոցական շնորհի և ուսուցչաց մասին կարեւորը հոգալ՝ յանձնուում է Կարուց վիճակի դպրոցաց առաջադիմութեան և ուսման ծաւալման համար նոյն ժողովից ընթրուած և հաստատուած ուսումնական խորհրդի անդամներին՝ որոնք էին՝

Աղանիկ Նահապետեան,

Արիստակէս Մխմեան,

Գրիգոր Մամիկոնեան,

Խաչատրւի Կորխմագեան,

Խաչատրւի Ահարոնեան,

Մկրտիչ Էհրամձեան և

Սարգիս Փալանձեանց:

Բացւում է օրիորդաց ուսումնարանը «Սուրբ Շուշանիկեան» անունով և գետեղւում է ս. Աստուածածին եկեղեցու գաւթում, տղայոց ուսումնարանի շինութեան ներքին յարկի մէջ: Յիշեալ 1879—80 ուսումնական թուականին Կարսի դպրոցներում եղել են՝ 150 աշակերտ և 65 աշակերտուհի: Ուսուցիչներն էին՝

Մելքիսեդէկ քահանայ Մանուկեանց,

Միմէօն Հախումեանց,

Գրիգոր Յակովեանց,

Համբարձում Ստամբօլցեանց,

¹ Նիստ 24, յունուարի 28-ին, 1879 թ.

Պետրոս Աղուզումյեանց և
Ուսուցչի՝ օրիորդ Եսթեր Ասանեթեանց:

Աւանդում էր՝ կրօն, չայոց և ուսուց լեզու, թուաբանութիւն, ազգային պատմութիւն, աւարկայախօսութիւն, վայելչագրութիւն, ձեռագործ (աղջկանց): 1879 թ. մարտի 27-ին, Ալաշկերտի գաղթականաց օգնութեան յանձնաժողովը ուղարկում է 500 բուբլե օրիորդաց զբարոցի բացման համար սկզբնական ծախքերը հոգալու, խոստանալով ուղարկել 1500 լ. ևս դպրոցի բացումից յետոյ:
Տարեկան ծախք եղել է 3000 բուբլե:

Թէ՛ ս. Լուսաւորչեան արականաց և թէ՛ օրիորդաց ուսումնարանը սկսում է իւր բարեկարդ կամ ծաղկած գրութիւնը 1880/81 ուսումնական տարուանից: Այդ ժամանակ սովորում էին՝ 162 աշակերտներ և, արականաց ուսումնարանը, բարկանում էր չորս դասարանից (2 պատրաստական և 2 հիմնական). իսկ աղջկանցը՝ մի պատրաստականից (2 բաժանմունքով) և մի առաջին հիմնական դասարանից: Աշակերտաւուհեաց թիւն էր՝ 60:

Երկու ուսումնարաններն էլ կառավարում էին ուսուցչական խմբով, որ կազմուած էր հետեւեալ անձերից:

Բժիշկ Աղէքսանդր Ղազաղեանց (Տեսուչ),

Մելքիսեդէկ քահանայ Մանուկեանց,

Բժիշկ Գէորգ Կաձկաձեանց,

Մելքոն Գրիգորեանց,

Օրիորդ Եսթեր Ասանեթեանց,

Համբարձում Ստամբօլցեանց (այժմ Խորէն քահանց),

Հայրապետ Աղամեանց,

¹ Օրիորդաց ա. Շուշանիկեան» ուսումնարանը հանդիսաւոր կերպով բացում է 1879 թ. սեպտեմբերի 2-ին, միանոյն օրը կատարուելով եկեղեցում գեներալ Ղազարեանցի հոգեհանգիստը, դպրոցի բացման հանդիսին ներկայ է լինում նաև Զինուրական Նահանգապետ Վ. Ա. Ֆրանկինին:

Խաչատուր Դարբնեանց և

Յարութիւն Փիլոյեանց:

Բացի պ.պ. Հազարեանից և Կածկառեանից, որոնք
ձրիաբար վարել են ուսուցչական պաշտօն, մնացեալ ու-
սուցիչներին արուած է ոռամիկ՝ 3480 րուբլի:

Կարսի նախկին վարժարանը (1876 թ.) բացի 6
դիւղերի առաջնորդական հասոյթներից, արդեանց որոշ և
առանձին աղքերներ չուներ, այլ կառավարւում էր եկե-
ղեցու տուրքով. նա միանգամայն անբաժան էր եկեղեցուց՝
եթէ վերջինս ունեցել է մի տուն, դրա կէս մասը պատ-
կանելիս է եղել ուսումնարանին, նոյնպէս և դրամական
եկամոււարը: Օրինակ՝ 1876 թուին ազգային-քաղաքական
ժողովը¹ եկեղեցու և վարժարանի հաշուեկշիռ շինելու
համար, սառուցել է եկեղեցական արդեանց քանակութիւնը,
որ կազմուել է այսպէս՝ անշարժ կալուածների եկամոււա-
ր 3 հազար զուռուշ, մոմավաճառութիւնից, գանձանակնե-
րից, թաղման, ձննդեան լուսագին և պաշներից գոյա-
ցած միջին հաշուով՝ 6 հազար զուռուշ. ընդամենը՝ ինն
հազար զուռուշ. ըստ այդմ կազմել է գարոցի ու եկե-
ղեցու նախահաշելը:

Նոյն՝ 1876 թ. յիշւում է նա և յօդուտ եկեղեցու
և ուսումնարանին առնելիքներ՝ 630 լիրայ օսմանեան²

¹ Նիստ Զ և Է. տումար արձանագրութեանց քաղաքական ժողո-
վոյ:—² Ցիշեալ ղրամներով 1877 թ, մարտի 11-ին գնում են Կեսա-
րացի՝ Ցովսէփ Մահտեսի Մկրտչեանից 290 օսմ. լիրայի նրա «Ղա-
րաղալէ» կոչուած գետինը, եկեղեցու և դպրոցի անունով, սակայն
կալուածագիրը (Թափուն) կեղծ ծանաշուելով՝ 1880 թ. եկեղեցին և
ուսումնարանը գրկում են յիշեալ հողերի օգտաւէտութեան իրաւուն-
քից և եկեղեցու վարչութիւնը Մահտեսի Մկրտչեանից դէյ պահանջ
է յարուցանում դատաստանական կարգով և ստանում է կատարողական
թերթը...: 230 լիրայի գնում են Մարգար աղա Փալանժեանցից, նոյն-
պէս դպրոցի և եկեղեցու անունով, Հայոց թաղի մէջ գտնուած՝ Մահտ.
Յարումիւն Միջեանցի և տածիկ՝ Պիլատէր-օղիի՝ Համբաւ-աղալի հետ

(մօտ 6 հազար րուբլի, ընծայաբերած հանգուցեալ Յով-
հաննէս արք-եպիսկոպոս Ռշտունու, 500 ոսկի դրամա-
պութիր՝ տոկոսիքով հանդերձ), և զանազան անձանց վե-
րայ ապառիկ մնացած՝ 16,324 զուռուշ:

Ասացինք, որ գպրոցական արզեանց որպէս հաստա-
տուն աղբիւր կարելի էր համարել վեց զիւղերի՝ Ղանի-
գիւղի, Բէնկլիահմէտու, Բերնայու, Չերմալուայ, Վէզինու
և Ինձէսուի առաջնորդական բոլոր հասոյթները, որոնք
տեղական ժողովրդեան և առաջնորդական տեղապահ՝ Յա-
կոբ վարդապետի ինդրանաց համաձայն՝ կ. Պօլսի պատ-
րիարք՝ Տ. Մատթէս արք-եպիսկոպոսի՝ 1845 թ. մարտի
9-ից արձակած օրհնութեան կոնդակով յատկացուած են
եղել Կարսի ուսումնարաննեն:

Վերոգրեալ կոնդակից 22 տարի յետոյ, այն է՝ 1867
թ. մարտի 1-ին Կարսի ուսումնասէր առաջնորդ՝ հան-
գուցեալ Յովհաննէս արք-եպիսկոպոս Ռշտունին երկիւղ
կրելով՝ թէ մի՛ գուցէ իրենից յետոյ մի այլ առաջնորդ
իւրացնէ իւր փայփայած վարժարանին յատկացուած յի-
շեալ վեց զիւղերի վիճակային արդիւնքը, առանձին թըդ-
թով զիմում է «Ճշմարտախնդիր քննողաց և զիրաւա-
ցին խուզողաց և ապագայ առաջնորդացն Կարուց քա-
«ղաքիս և վիճակացն նորին» և խնդրում է «Մի՛ սեպ-
«հականել յեկամուտս առաջնորդական իրաւունց, այլ
«յանձնել զհասոյթն զիւղիցն այնց՝ ի ձեռս հոգաբար-
«ձուին՝ ի ծախս վարժարանին:»

Ընկերովի ունեցած 4 աչքանի ջրաղացի մի երրորդական մասը: Ցի-
շեալ ջրաղացի հարկաւոր լինելով Կառավարութեան՝ (այդ տեղի վրա-
յով խօսութիւն անց կացնելու համար) 1879 թ. գնուեցաւ ամբողջապէս
և տրուեցաւ դպրոցին իւր հասանելի մասը՝ 1625 րուբլի:

¹ Ալդ ժամանակ Վէզին և ինձէսու զիւղերի հայ բնակիչները
ցիր ու ցան լինելով, դպրոց օգտուելիս է եղել մնացեալ չորս զիւ-
ղերի առաջնորդական արդիւնքով:

Ուսումնարանը 31 տարի անընդհատ օգտուում է յիշեալ գիւղերի առաջնորդական հասոյթով. 1876 թ. ժամանելով Կարս՝ Վանեցի Գրիգորիս վարդապետ Աղուանեանցը առաջնորդական տեղապահի պաշտօնով վիճակային հասոյթները անբաւարար գտնելով իւր կառավարութեան համար, գիմում է քաղաքական-ժողովին և սրա որոշմամբ յիշեալ չորս գիւղերի արդիւնքը վերադարձնում է առաջնորդարանին¹:

Ուսումների նուածումից անմիջապէս յետոյ, Կարսի զպրոցական շինութիւնը մի քանի ամիս վերածում է զինւորական հիւանդանոցի: Ուսումնարանի մէջ գտնուած կաշ-կարասիքը այրում են և այդ վնասի համար պաշտօնական անձերի ձեռօք արձանագրութիւն է կազմում ու վնասի քանակութիւնը՝ 615 ր. որոշուելով՝ ներկայացւում է Նորին Կայսերական Թարձրութիւն Կազմական Կովկասիան Փոխարքային՝ ի հաստատութիւն, որ հրամայում է բաւարարել զպրոցի վարչութիւնը: Գեր. Աղուանեանցը 1878 թ. օգոստոսի 10-ին № 84, զբութեամբ դիմում է Նահանգապետ Ֆրանկինին, բայց ոչ մի տեղեկութիւն չ'ստանալով՝ 1881 թ. ապրիլ 20-ին յանձնարարում է երկսեռ ուսումնարանաց հոգաբարձու՝ Ուուրէն Մելիք-Աղամեանցին և Գարբիկլ Յարութիւնեանցին՝ «Նոյն 615 րուրլին արքունական գանձարանէն դուրս բերելու»: Սստացւում է արդեօք յիշեալ փողերը յօդուտ աղքատիկ զպրոցների թէ ոչ յայտնի չէ, որովհետեւ այդ մասին պաշտօնական գործերն ու տումարները լուսում են:

Վերջին պատերազմի ժամանակ և նրանից յետոյ չայոց ազգային գործերի կառավարող՝ սահմանադրական ժողովները զրեթէ իսպառ լուծուեցան կամ դադարեցան

¹ Տումար արձանագ. քաղաքական ժողովոյ 1876 թ: 26 սեպտեմբերի, նիստ՝ Դ. որոշում Ք:

գործելուց. Հենց այդ պատճառով էլ զպրոցական գործը մի քանի տարի բարձի թողի եղած էր մինչև որ 1882 թ. ապրիլին Գեր. Աղուանեանցը «պատգամաւորական ժողով» անունով մի առանձին վարչական մարմին է կազմակերպում, նպատակ ունենալով յիշեալ վարչութեան ձեռօք եկեղեցական և զպրոցական գործերը «անօրինել» այսինքն՝ հսկել զրանց արդիւնքի և ծախքի վերայ:

Երեք տարի ժամանակամիջոցով ընտրուել են՝

Բժիշկ Աղէքսանդր Ղազավեանց,

» Աղէքսանդր Տէր-Յարութիւնեանց,

» Գէորգ Կաձկաձեանց,

Գէորգ Աղնաւուրեանց,

Աւետիս Սաֆարեանց,

Համբարձում Քարտաշեանց,

Մատթէոս Բաղրամեանց,

Գէորգ Էշրամձեանց,

Պետրոս Շեխեանց և

Մարգար Փալանձեանց:

Մրանց անձնափոխանորդներ եղել են.

Խաչատրու Մախաթձեանց,

Մահմետի Յարութիւն Միմձեանց,

Դաւիթ Միրիմանեանց,

Կարապետ Թումոյեանց և

Մարգիս Բաղդասարեանց:

Ժողովի անընդմիջական իրաւասութեան ենթարկւում էին՝ եկեղեցու երեսփոխանութիւնը և ուսումնարանների հոգաբարձութիւնը, որպէս ընտրող մարմնի: Սակայն այդ բաղմանարդ ժողովի անդամները պահանջուած ձշտապահութեամբ չեն յաճախում ժողովատեղին և սրբագանը 1883 թ. օգոստոսի 26-ին, աչքի առաջ ունենալով յիշեալ հանգամանքը, որ անդամներն ու նըրանց անձնափոխանորդները 13 անդամ հրաւիրուել են

՚ի ժողով և նրանց մեծամասնութիւնը չի հաւաքուել,
որի պատճառով և «ազգային գործերը մնացել անկա-
տար և բարձի թողի», ուստի «արձանազրութիւն» է
կազմում և վերօդքեալ պատգամաւորական ժողովը լու-
ծուած համարելով՝ քաղաքիս հայազգի հասարակութեա-
նը հրաւիրում է ՚ի ժողով գալորդի դաշլեճում և ընտ-
քել է տալիս նոր անդամներ: Ընտրում են՝

Բժիշկ Աղէքսանդր Ղազաղեանց,
» Աղէքսանդր Տէր-Յալութիւնեանց.

Մարգար Փալանձեանց,
Յովհաննէս Ունձեանց,

Մելքոն Շեխեանց և
Գրիգոր Սբորչիկեանց:

Մրանց անձնափոխանորդներ.
Խաչատուր Մախաթձեանց,
Կարապետ Գորոյեանց,
Մտեփան Դիլանեանց,
Արքահամ Էքմալեանց,
Ուետիս Գէորգեանց և
Մինաս Ղազարեանց:

1881 թ. յունուարի 30-ին Ալաշկերտի գաղթակա-
նաց օգնութեան յանձնաժողովը (այժմ Կովկասեան Հայոց
Քարեզործական ընկերութեան խորհուրդ) ուղարկում է
սրբազն Աղուանեանցին 1650 բուրլի Կարսում Հայոց
ուսումնարանների համար անշարժ կալուածներ գնելու:
Գնում են հինգ հատ մանր կրպակներ. բացի այդ՝ յանձն
է առնում յիշեալ յանձնաժողովը վեց հազար բուրլի
և յատկացնել Կարսի գլորցներին այն պայմանով՝ որ
անշարժ կալուածներ առնուին և ուսումնարանում ձրիա-
բար սովորին 10 աշակերտ և աշակերտուհիք Ալաշկերտի
և ուրիշ տեղերի գաղթականներից՝ «Սանունք Թիֆլիզի
Գաղթականաց Յանձնաժողովցին» անունով:

Այժմ տրում է գլորցներին 5 հազար լուրջու-
տոկոսիքը, իսկ դրամազլուխը մնում է մասնաւոր բան-
կերի մէջ, որպէս գլորցապատկան անձեռնմխելի գումար
(մինչև յանձնաժողովի առանձին տնօրէնութիւնը):

1878—9 թ. Կարսի նախկին առաջնորդարանը
կամ գլորցական հին և նոր շինութիւնները ենթարկ-
ւում են կարևոր փոփոխութեան և վերանորոգման, որի
համար ծախսուել է 2755 ր. 42 կ. իսկ առաջնորդա-
րանի համար գնում է Քիւչուկհաճու տունը՝ 409 ր.
65 կուգ:¹

1885 թ. մարտի 8-ին տեղիս գլորցները յայտնի
հանգամանքների առթիւ քաղաքական իշխանութեան ձե-
ռօք գոցուելուց յետոյ, սրբ. Աղուանեանցը նոյն թուա-
կանի մայիսի 6-ին № 117, յայտարարութեամբ դիմում է
ս. Մինօղին, ինդրելով՝ միջնորդել ուր որ հարկն է Կար-
սի ուսումնարանը թեմական դպրանոց ձանաչել, գլխաւո-
րապէս եկեղեցականներ և քահանաներ պատրաստելու
նպատակով... սակայն դա մնում է առանց հետևանքի,
որովհետեւ Բարձրագոյն հոգևոր իշխանութեան միջնորդու-
թեամբ՝ երկու տարուց յետոյ Կարուց թեմը վերածւում
է փոխանորդութեան:

Հոգաբարձական պաշտօն վարել են՝

1880—3 Գէորգ Աղնաւուրեանց,
Ռուբէն Մելիք-Աղամեանց և
Գարբիէլ Յարութիւնեանց:

1883—6 Աւետիս Սավարեանց,
Գրիգոր Սբորչիկեանց,
Յովհաննէս Ունձեանց,
Դաւիթ Միլիմանեանց:

¹ Տումար իլ. ս. Աստուածածին եկեղեցու երեսփոխանութեան
և ուսումնարանաց հոգաբարձութեան, 1877—1880 թ.

1886—9 Դաւիթ Միքիմանեանց,
Աւետիս Սավարեանց,
Սարգիս Մուբաղեանց,
Մովսէս Բէդ Տէր-Մարգսեանց,
Գրիգոր Բահամբեանց:

1889 թ. Հաստատում է Հոգաբարձութեան նախա-
դահի պաշտօնի մէջ Արժ. Մինաս Քահանայ Տէր-Պետ-
րոսեանցը, սակայն հրաժարական է տալիս և նրա փոխա-
րէն ստանձնում է յիշեալ պաշտօնը Արժ. Զօրաբարէլ
Քահանայ Ղօլանձեանցը: Անդամներ ընտրում էն՝
Խտեփան Դիլանեանց (որպէս երեսփոխան),
Աւետիք Աւոյեանց,
Աշոտ Յովհաննիսեանց:

1890 թ. Ա. Աւոյեանց և Աշոտ Յովհաննիսեանցը
հրաժարում են պաշտօնավարութիւնից, որոնց փոխա-
րինում են՝ առ ժամանակեայ կերպով՝ Հոգաբարձական
անձնափոխանորդներ՝ Յարութիւն Բարսամեանց և Գրի-
գոր Ապաձեանց: Նոր Երեսփոխանի Հաստատութեամբ (ս.
Աստուածին Եկեղեցու) փոխում է նա և Խտեփան
Դիլանեանցը և դպրոցի կառավարութիւնը սկսեալ 1891
թ. ցայսօր մնում է Երեսփոխան՝ Սեղբաք Գրիգորեանցի
(որ ըստ դպրոցական կանոնադրութեան համարում է և
անդամ Հոգաբարձութեան) և Զօրաբարէլ Քահանայ Ղօ-
լանձեանցի ձեռին:

14 տարւայ ընթացքում (1878—92) Կարսի Եկե-
ղեցական Երիսեռ ուսումնարաններում ուսուցչական պաշ-
տօն վարել են՝

Բժ. Աղէքսանդր Ղազաղեանց	}	Տեսուչներ:
Գրիգոր Երզնկեանց		

Մինաս Քահ. Տէր-Պետրոսեանց	}	Աւագ ուսուցիչներ:
Խաչատուր Դիլանեանց		

Գրիգոր Բաղդասարեանց	}	Աւագ ուսուցիչներ:
Բաղդասարէլ Միքայէլ		

Ուսատուցիչներ.

Մելքիսեդեկ Քահանայ Մանուկեանց,
Բժիշկ Աղէքսանդր Տէր-Յարութիւնեանց,
» Գէորգ Կաճկաճեանց,
Խաչատուր Դարբնեանց,
Համբարձում Ստամբոլցեանց (այժմ Խորէն Քահ.),
Սեղբաք Գրիգորեանց,
Միմէօն Հախումեանց,
Գէորգ Միլիմանեանց,
Խաչատուր Զիլինկարեանց,
Հայրապետ Աղամեանց,
Արտաշէս Յակովլեանց,
Պետրոս Աղուզումցեանց,
Սարգիս Մուբայաձեանց,
Մարտիրոս Պօղոսեանց,
Շմաւօն Քահանայ Տէր-Մարուքեանց,
Կարապետ Տէր-Մարգսեանց,
Յարութիւն Փիլոյեանց,
Գրիգոր Յակովլեանց,
Սարգիս Քօթանջեանց,
Արգամ Տէր-Յակովլեանց,
Սարիբէդ Տէր-Մելքիսեդեկեանց,
Ղազար Ղազարեանց,
Արամ Տէր-Գրիգորեանց (այժմ Մկրտիչ Քահ.),
Երուանդ Ղազարեանց,
Խաչատուր Մառանկողեանց,
Կարապետ Յովհանջանեանց,
Բագրատ Սովոմնեանց,
Գեղամ Խաչատրեանց,
Միքայէլ Մնացականեանց,
Աղէքսանդր Պետրոսեանց,

Մկրտիչ Ղազարեանց,
Մարտիրոս Շաթիրեանց,
Յովհաննէս Մուսաբէգեանց,
Սիմէօն Միմիթարեանց,
Յովսէփ Արարատեանց,
Միքայէլ Տէր-Մտեփանեանց,
Աղէքսանդր Տէր-Եսայէհանց,
Համազասպ Նոհրատեանց,
Արշակ Փորսուղեանց,
Զոհրաբ Զամբաղեանց:

Վարժուհիներ.

Օրիորդ՝ Եսթեր Ասանեթեանց,
» Նեկտարինէ Զիլինկարեանց,
» Նատալիա Տէր-Յարութիւնեանց,
» Եփեմիա Սանցիանց,
» Փառանձել Մատոյեանց,
» Աննա Տէր-Պետրոսեանց,
» Վարսենիկ Յովհաննիսեանց,
» Մազթաղինէ Բոստանձիանց,
» Վարվառէ Մնացականեանց,
Տիկին՝ Փեփրոնիա Տէր-Մելքիսեդեկեանց,
» Շուշանիկ Արարատեանց,
» Գայիննէ Ստամբոլցեանց,
» Հոհիսիմէ Բաղդասարեանց:

Այժմեան արդեանց աղբիւրներ համարւում են՝

Վերեւում յիշուած 5 հազար րուբլու տոկոսիքը՝
տարեկան 250 ր.
Երեք նորաշէն կրտակներից տարեկան վարձա-
դլամ 375 »

ա. Աստուածածին	և կեղեցիներից նպաստավրամ	400 ր.
» Նշան		200 »
Թատրոնական ներկայացումներից՝ մօտաւորապէս՝	400 »	
«Աւետիս» շրջելուց և այլն, մօտաւորապէս . . .	300 »	
Թոշակավրամ	2600 »	
Բարեգործ. Ընկ. տեղական ձիւղից	400 »	
Մետրիքական քաղուածներից (Տող. Կառավա- րութեան միջոցաւ)	25 »	
		4950 ր.
Ընդամենը . .		4950 ր.

Մախք լինում է տարեկան առ նուազը՝ 5000 »
Փակագծի մէջ պէտք է տաենք, որ 1891 թ. եղել
է մուտք. 4953 ր. 31 կ.
Ճախք 6876 » 29 »
Այժմ (189²₃ ուսումն. թ.) սովորում են՝ տղայք՝ 339.
աղջիկներ՝ 192.

Ուսուցիչներ՝ 9 և վարժուհիներ՝ 2:

Նշանակում է նաև «Գործակատար»՝ Խաչատուր Դարբնեանցը ամսական 20 թ. ոռջիկով, որի պարտաւորութիւնն է լինում գրադարանը բաց պահել առ օրեայ վեց ժամ, որոշեալ ժամերին:

Գրադարանի բացումից անմիջապէս յետոյ՝ Տփխիսի Հայերէն թերթերի միջոցով՝ նուիրատութեան համար հրաւեր է կարգացում: Գրքեր են խնդրում նաև ո. Էջմիածնի Սինօդից: Հաւաքում են բաժանորդագծարները և աւելորդ համարուած գրքերը վիճակահանութեան են գնում:

1879 թ. ընթացքում գրադարանը ունեցել է՝ 76 ընկերական բաժանորդ, իւրաքանչիւրը տարեկան 6 թ. կամ ամսական՝ 50 կոպ. վճարելու պայմանով: Դրանցից վճարել են՝ ամբողջ տարեկանը՝ 30 բաժանորդ, կէս տարուան՝ 11 անձեր, 2 ամսական՝ 28 անձեր, մի ամսական՝ 5 և ոչ ինչ չ'վճարող՝ 2 բաժանորդներ: Նուէրներ են տուել գրամով՝ 29 անձեր, գրքեր են նուիրել 101 անձեր 2354 կտոր քանակութեամբ: Գործավար ժողովի ձեռօք գնուած են գրքեր՝ 371 կտոր: Հին գրադարանից եղել է մնացած՝ 19 կտոր: Յիշեալ գրքերից՝ 80 հատը եղել է ոռու և այլ լեզուներով, մնացեալը հայերէն. բոլոր գրքերը եղել են 500 տեսակ:

Պահելով գրադարանում 512 կտոր գիրք, մնացածներից գաճառել են՝ 679 կտոր, վիճակահանութեան են գրել՝ 278 կտոր, նուիրել են Ելրակաւանի ուսումնարանի՝ 12 կտոր:

Ստացւում էր գրադարանում 6 հայերէն և մի ոռուսաց պարբերական հրատարակութիւն:

Գրադարանից գուրս, կարգացողներ եղել են՝ 7 ամսուաց ընթացքում (մայիս—գեկտեմբեր) 300 հոգի:

Ապրիլի 25-ից (1879) մինչև տարւայ վերջը ժողովը ունեցել է՝ 28 նիստ: Լուծուած է եղել 100-ից

ՍՈՒՐԲ ՀՈՒՍՍԻՈՐՁԵԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ.

Գրադարանը բացուած է այստեղ 1868 թ. ս. Սահակի և ս. Մեսրոպի անունով, Բաղկշեցի Գրիգոր վարժապետ Սողյեանցի նախաձեռնութեամբ: Դա խկապէս մի աղքատիկ Ընթերցարան է լինում, ուր սակաւաթիւ անդամներից բազկացած՝ ընկերութեան վճարով գրքեր ու պարբերական թերթեր են բերել արւում: Ընթերցարանը կաղ՚ի կաղ պահպանում է իւր գյութիւնը մինչև 1877 թ. այնուհետեւ պատերազմի պատճառով մի ամբողջ տարի գաղարում է և 1878 թ. վերստին սկսում է իւր գյութիւնը, այս անգամ՝ «տուն զուխ գիրք մը առնելով յօդուա գրանոցի»:

1879 թ. բարեփոխւում է՝ «ս. Լուսաւորչեան վարժարանի գրադարան» անունով, և սկսում է իւր՝ եթէ կարելի է այդպէս ասել՝ փայլուն գործունէութիւնը. հաստատում է «Գործավար ժողով» անունով գրադարանի վարչութիւն, որին անդամներ ընտրուում են՝

Նշան էֆէնդի Պլէսիանեանց,
Առաքել Սաղաթիկեանց,
Կարապետ Տէր-Մարգարեանց,
Յովհաննէս Էլբէյեանց և
Համբարձում Սստամբօլցեանց:

աւելի խնդիրներ և, գրադարանի վերաբերութեամբ, դըս-	
ուած է եղել զանազան անձանց՝ 40 նամակներ...	
Միտարուայ շոջանում, այն է՝ 1879 թ. յունուա-	
րի 1-ից մինչև 1880 թ. յունուարի 1-ը, եղել է մուտք՝	
680 ր. 92 կ. հաշուելով այսպէս՝	
ա, Բաժանորդներից	249 ր. — կ.
բ, Նուէրներ	69 » 65 »
գ, Յաճախորդներից	7 » 29 »
դ, Վաճառած գլքերից	149 » 60 »
ե, Տուգանալրամբ (գլքերը պայմանա-	
ժամին չ'վերաբարձնելու համար) .	13 » 50 »
ւ Վիճակահանութիւնից	182 » 35 »
է, Դրամագլւխի տոկոսիք	9 » 53 »
	680 ր. 92 կ.

Ծախք նոյնքան ժամանակամիջոյում եղել է՝ 566 ր.	
97 կ. հաշուելով այսպէս՝	
ա, Գրադարանի կահկարասեաց և կար-	
գագրութեանց համար	153 ր. 97 կ.
բ, Տումարի, թղթի, թանաքի և այլն	11 » 18 »
գ, Ծախք փոստայի, գլքերի փոխադրու-	
թեան, նամակն. և ծրաների համար .	32 » 62 »
դ, Գործակատարի ռոճիկ	132 » 50 »
ե, Հեռագրի ծախք	4 » 10 »
ւ Լրագրների վճար	20 » 50 »
է, Ծախու առնուած գլքերի դին . . .	212 » 10 »
	566 ր. 97 կ.

Կ'մնար առ 1 յունուարի 1880 թ. պատրաստի
պրամբ 113 ր. 95 կ.:

1880 թ. ընտրում են Գործավար ժողովի ան-

դամներ՝
Նշան էֆենդի Պլէսիանեանց,

Մելիտոս Պահլաւունի,
Սարգիս Արաբաջեանց,
Սիմեոն Հախումեանց,
Գէորգ Միրիմանեանց,
Յովհաննէս Էլբէյեանց,
Գրիգոր Յակովեանց,
Համբարձում Ստամբօլցիանց և
Խաչատրուր Դարբինեանց:

Փետրվարի 9-ի նիստում, ժողովը որոշում է՝ նոր
բաժանորդներ գտնելու և ընթերցանութեան տարածումը
ևս առաւել գիւրացնելու համար «Մի սրճանոց (կօֆե-
րեստօրան)» բանալյ; որ և բացւում է, ամենակարծ
ժամանակից յետոյ փակուելու համար. . .

Հազուագիւտ ջերմեռանդութեամբ սկսուած գրա-
րանի գործը հետպհետէ սկսում է սառնանալ և վերջ 'ի
վերջոյ՝ 1882 թ. իսպառ դադարում է գործունէութիւնից:
1883 թ. հայագի ժողովուրդը խնդրամատոյց է լի-
նում քաղաքական իշխանութեան թոյլատրել հասարա-
կական գրադարան հիմնել Կարսում: յուսացուած բա-
ւարարութիւնը չի ստացւում և պատգամաւորական
ժողովը մի այլ հնար չունենալով՝ իւր, սեպտեմբ. 28-ի
(1883) նիստում, 'ի միջի այլոց որոշում է գրադարանը
ամբողջապէս, առ ժամանակեայ կերպով, յանձնել ու-
սուցչական ժողովի հովանաւորութեանը: Հայր նախագա-
հի միջոցաւ անմիջապէս յանձնւում է գրադարանը ման-
կավարժական ժողովին, որի ձեռ գտնւում է և այսօր:

- 1139 Սահմակ.
 Աբրահամ. նախ քան՝ 1167 թ.
 1165—73 Խաչատուր, Շնորհալուց ձեռնադրուած.
 1209 Յովհաննէս.
 1246 Յակոբ.
 1307 Մարկոս.
 1441 Տիրացու վարդապետ, որը եղել է Էջմիածնի նարոգութեան ժողովում.
 1670 Ստեփաննոս Վերատեսուչ¹:

Այնուշեակ Պարսից և Օսմանցոց տիրապետութեան միջոցին առաջնորդական աթոռը գրեթէ մինչև 1878 թ. որպէս ապահով և անվտանգ տեղ բարբարոսների հաշվածանքներից՝ փոխադրում է արևմտեան Շիրակի Ղօշավանքներից (Հոռոմոնսի վանք), թէև գարիս առաջին քառորդից սկսած, յարմարութիւնը՝ ի նկատի ունենալով, Ղօշավանքի առաջնորդները բնակուելիս են եղել աւելի կարսում, քան Հոռոմոնսի մէջ:

Բացառապէս Օսմանցոց տիրապետութեան ժամանակ, մինչև 1765 թ. այդ եպիսկոպոսութիւնը ենթարկւում էր Կ. Պոլսի Պատրիարքարանին. իսկ յիշեալ թուականից Սիմէօն կաթողիկոսի միջնորդութեան համաձայն, Տաճկաց Սուլթան Մուստաֆան առանձին հրովարտակով Ղօշավանից վիճակի հոգեւոր տեսչութիւնը յանձնել է Էջմիածնի Վեհապետին, որը և քսան տարիների չափ աւեր զրութեան մէջ եղած՝ Հոռոմոնսի մենաստանը նորոգել տալով՝ Մայր Աթոռի միտրանութիւնից Պետրոս վարդապետին առաջնորդ է նշանակում և վանքը սկսում է վերստին բարեկարգուել²:

ՅԱԶՈՐԴՈՒԹԻՒՆ ԿԱՐՈՒԵՑ.

Կարուց վիճակը ըստ հոգեւորին հնումը՝ այն է՝ բազրատունի թագակիրների ժամանակ կառավարուելիս է եղել ձեռօք, որոնք, ըստ վաղնջականին՝ կոչում էին «Արքեպիսկոպոսունք» կամ՝ «Եպիսկոպոսունք Կարուց»։ Երկար տարիներ այստեղ եղել է Վանանդայ աշխարհի եպիսկոպոսական Աթոռը. (սկսեալ Դից մինչև և դարձ)։ Դ-դ գարում որպէս եպիսկոպոսներ Վանանդայ՝ յիշւում են։

... Զորթուազ¹.

- 450 Գաղ².
 495 Բարգէն (յետոյ կաթողիկոս).
 527—54 Յովհան, որ յիշւում է Դունայ ժողովում.
 572 Գիտ.
 607 Ներսէս.
 665 Իսրայէլ.

Իսկ որպէս եպիսկոպոսներ կարուց՝ յիշւում են՝ 1091—5 յայտնի՝ է առանց անուան մի եպիսկոպոս, որին Կարսի Սուքման ամիրան ուրացրեց հաւատից։

¹ «Եւ Զորթուազ Եպիսկոպոս Վանանդայ գաւառին, այր սուրբ «պարկեցտ արժանի Սատուծոյ, արքեալ Ոգտվ սրբով. քրիստոնէութեամբ գնայր գործէր, առաջնորդէր իւրում ժողովրդեանն ըստ կամացն Սատուծոյ»։ Փաստոս Բիւզանդացի (Երես՝ 278):

² Եղիշէ (Երես՝ 22):

¹ «Ալբարատ» Հ. Ղ. վ. Ալիշան (Երես՝ 76): — ² «Զամբո» (Երես՝ 248):

Ղօշա-վանքի առաջնորդութեան իրաւասութեան են-
թարկում էր Կարուց ամբողջ փաշալիկութիւնը Թիւր-
քաց տիրապետութեան՝ և Կարուց նահանգը (Կարսկայ
область) Ռուսաց տիրապետութեան ժամանակ:

Ղօշա-վանքի առաջնորդներ յայտնի են՝

- 1680 Կիրակոս վարդապետ.
- 1685—1704 Դանիէլ վարդապետ Տիգրանակերացի¹.
- 1713 Մաղաքիս, Աստուածաբան վարդապետ(?) .
- 1751—5 Եղիա վարդապետ Ալաշկերտցի. սորտ մա-
սին գրում է Յակովը պատրիարք Նալեանը՝ «Լուսաւոր-
« եալ հոգի Եղիա վարդապետն Ալաշկերացի՝ լաւապէս
« նորոգեալ (Հոռոմոսի վանքը) բայց անբազին՝ ի լեզկուոց
« հրայանիւ հարեալ վախճանեցաւ 'ի մօտակայս ՌՄԴ
« (1755) թուին, զի էր այր ձիավարժ և տիգաւոր, որ
« զերեք հարիւրս 'ի նոյանէ միով մզրախիւ խաթ-
« օյուն արարեալ էր, և նոքա թիւֆենքի բերեալ, սպա-
« նեալ էին, և յետոյ զզջացեալ վասն անդիտութեամբ
« հարկանելցին, զի շատ հաց կերեալ էին 'ի ձեռացն, զի
« էր այր հիւրընկալ քաղցրաբան, շախաձի:»
- 1765 Պետրոս վարդապետ.
- 1766 Բաղդասար վարդապետ.
- 1767 Մինաս վարդապետ.
- 1788 Յովհաննէս եպիսկոպոս Շամբեցի.
- 1810 Ստեփան վարդապետ Կարնեցի.
- 1816 Ղազար Արք-եպիսկոպոս.

¹ 1685 թ. ալս իսկ Դանիէլ վարդապետը լիշտում է Հոռոմոսի վանքի արձանակրութեանների մէջ, որպէս նոյն վանքի նորոգող. իսկ 1704 թ. լիշտում է սրա անունը նա և Ալեքսանդրապոլ քաղաքի ս. Աստուածածին եկեղեցու խորանում գտնող՝ «Մեռել յարոյց» գր-
չագիր աւետարանի լիշտակարաններից մինում, այսպէս՝ «... 'ի
« Հայրապետութեան Տէր Նահապետ Կաթողիկոսին և առաջնորդին
« մեր՝ Դանիէլ վարդապետին:»

- 1818 Յովհաննէս եպիսկոպոս { Թաղուած Են Հռոմո-
1821 Աւետիք Արք-եպիսկոպոս { սի վանքի Նշանաւան
- 1825—30 Ստեփաննոս Արք-եպիսկոպոս Խաժակեան¹.
- 1830 թ. գաղթականութիւնից անմիջապէս յետոյ,
Կարուց կամ Ղօշա-վանքի առաջնորդութիւնը վերստին

¹ Ստեփաննոս Արք-եպիսկոպոս Խաժակեանը (Զախալեանց) ծնունդ էր 1770-ական թուականներին, Բարձր-Հայոց՝ Կարին քաղաքում. նրա սկզբնական անունը Նասիբ էր, մի նշանաւոր և բաւականին ունենոր վածառականի որդի. ծնողը կոչում էր Ցակոբան-աղա: Նասիբը որքան գեղեցիկ և կայտառ, նոյնքան էլ չար, վստահ և աներկիղ մանուկ է լինում. այս երեսով աչքի առաջ ունենալով՝ հայրը սրկնում է թէ մի գուցէ վնասեն նրան տածիկ երեխանները կամ իսպառ աներեսութացնեն նենգամիտ, հասակաւոր դուռանականները, ուստի և 10—12 տարեկան հասակում յանձնում է նրան կրօնական արարողութիւնները՝ Հայ լեզուի և դպրութեան հետ՝ առվորելու և ապագայում եկեղեցու սպասաւոր դառնալու յատով դիտաւորութեամբ, Մշու և Կարնոյ առաջնորդ՝ Ցակոբոս Արք-եպիսկոպոսին («Աղիս-պէլիւխ» մականուանած), որ փոխադրելով նրան Տարօնի ս. Կարապետ վանքը, դաստիարակում է առանձին իննամքով: Մրամիտ մանուկը ոչ միայն առաջադիմութիւն է ցոյց տալիս հայոց լեզուի, գրականութեան և եկեղեցական արարողութեանների մէջ, այլ և հետզհետէ սկսում է նմանուն իւր դաստիարակ եպիսկոպոսին—շնորհ և ընդունակութիւն է ցոյց տալիս քարոզութեան և բնեմբասցութեան, որի հետևանքը լինում է ալս՝ որ իւր 25 տարեկան հասակում մի և նոյն վանքի մէջ, նոյն եպիսկոպոսից ձեռնադրում է աքեղայ՝ Ստեփաննոս անունով և իրեկ միաբան՝ մնում է նոյն վանքում: 10 տարուց յետով, նա իւր գովելի վարքի, բարքի, ընդունակութեան և օրինակելի պարտածանաշութեան համար, նոյն սրբազնի ծեռօք արժանանում է ծայրագոյն վարդապետական աստիծանի՝ «Ամոռ Նստիլ, խալիչայ ծգել և գաւազան առնուլ:»

1811 Թուին հրամիրուելով Էջմիածին, Կարապետ ծ. վարդապետ Բագրատունու (Հոռոտցու) հետ միասին, երջանկալիշատակ Տ. Եփրեմ կանողիկոսից ծեռնադրում է եպիսկոպոս (նոյնմբերի 2-ին), և ստանում օրինութիւն ու գիր Արք-եպիսկոպոսութեան: Ստեփաննոս սրբազնը դարձեալ վերադառնում է իւր պաշտօնատեղին՝ ս. Կարապետի վանքը և այնտեղից իւր բազմերախտ հոգնոր ծնողի սպանու-

դառնում է Կ. Պօլսի պատրիարքական թեմ և առաջնորդները նշանակում էին այնտեղից, որպէս Օսմաննեան կայսերութեան երկիր:

- 1842—5 Առաքել վարդապետ.
1845 Յակով վարդապետ.

Թեան պատճառով (Յակոբոս Արք-Եպիսկոպոսը սպանուել է Քիւրդիրից) իբրև վրէժինդիր Բ. զրան բողոքելու և ոծրագործներին ըստ արժանույն պատժել տալու համար, ուղևորում է Կ. Պօլսի, ուր լուսացած լաջորութիւնը չ'գտնելով՝ ծանապարհուում է Երուսաղէմ՝ սրբազն տեղերին Երկրագրութեան: Ամենակարծ ժամանակից յետով, վերադառնուով Կ. Պօլսի, տեղական Պօլոս պատրիարքի կոնդակով կարգում է Մշու առաջնորդ: (Այդ միջոցին Կարնոյ առաջնորդութիւնը բաժանուած էր Տարօնից և այնտեղի՝ Կարնոյ՝ դէտն ու առաջնորդն էր՝ Կարապետ Արք-Եպիսկոպոս Բագրատունին): Ստեփանոս սրբազնի արդարացի վրէժինդրութիւնը «Աղխ-պէյիի» սպանման նկատմամբ, գրգում է իւր դէմ քիւրդ Դենպետների (Ծէխ) և առհասարակ շրջապատող քիւրդ ազգաբնակութեան կատաղի թշնամութիւնը և դա հասնում է մինչև այն աստիճանի՝ որ նա հարկադրուած է լինում իւր ընկերոջ՝ Կարապետ սրբազնի միջնորդութեամբ տեղական փաշալից ուղարկուած պահնակների խմբով հազիւ թէ անվտանգ ժամանել Կարին, միանգամայն թողլով Մշու (Տարօնոյ) առաջնորդական աթոռը:

Կարապետ Արք-Եպիսկոպոսը կամենալով մի բարիք անել և ազատել իւր օճակցին թէ անգործութիւնից և թէ վտանգաւոր դրութիւնից, գրում է այդ մասին Տփիսու թեմակալ առաջնորդ՝ Աշտարակեցի Ներսէս Եպիսկոպոսին (յետոյ կամողիկոս), որը, իւր հերթում, պատրաստականութիւն է յալտառում պահել շնորհալի քարոզչին Տփիսում: Ստեփանոս սրբազնը Երկար ժամանակ չ'մնում Ներսէսի մօտ, մի քանի տարուց յետոյ նշանակուելով Կարսի առաջնորդ՝ գալիս է Շիրակ գաւառի Հոռոմոսի վանքը: 1827 թ. յուլիսի 9-ին աւարտելով Կարս քաղաքում դպրոցական շինութիւնը, նշանակում է ուսուցիչ հայ-մանկտին դաստիարակելու և ինքը ինչ-ինչ քաղաքական գործերով վերադառնում է իւր հայրենի Կարին քաղաքը: Այդ իսկ ժամանակ Կարսի փաշալից յատուկ հրաւիրանօք ուղևորում է նաև Տփիսի, Ռուսաց կառավարութեան հետ բանակցելու... .

1828 թ. Կարնոյ պաշարման ժամանակ, նա է լինում Հայոց

- 1846 Պօլոս վարդապետ (Վիզիքոս).
1847 Կարապետ վարդապետ (յետոյ եպիսկոպոս)
Կեսարացի.
18.. Մկրտիչ վարդ. (առաջնորդական տեղապահ).
18.. Պետրոս վարդապետ. »
1853 Վարդան վարդապետ Օձնեցի (այժմ արք-

հոգեկոր վարչութեան ներկալացուցիչ կոմս-Պասկալիչի բանակում և յայտարարող ժողովրդեան բուռն ցանկութիւնը—հպատակուել Քրիստոնեայ ինքնակալին, նպաստել պայծառափալլ հրամանատարի նպատակներին՝ փշելու այնքան գոռոզացած կիսալուսնի եղջեւները... մինչև Երզրումի նուածելը սրբազնը անբաժան է մնում ուսական բանակից, անտարակոյս վերապահներով Կարուց առաջնորդական կոչումը: Արք Ստեփաննոսի արդինաւոր ծառայութիւնը, կոմս-Պասկալիչի միջնորդութեամբ, վարձատրում է Ռուսաց Մեծ ինքնական կոչումը: Արք Ստեփաննոսի արդինաւոր ծառայութիւնը, կոմս-Պասկալիչի միջնորդութեամբ, վարձատրում է Ռուսաց Մեծ ինքնական կոչումը համապատասխանող մի քանի շքանշաններից, նա ստացել է և մի շողակնեալ մանկագին մատանի... .

Ինչպէս յիշեցինք իւր տեղում, սրբազնը առաջնորդեց Կարսի գաղթականներին և անդրանիկ առաջնորդն եղաւ Կումայրի աւանում (յետոյ Ալէքսանդրապոլ քաղաք): 1837 թ. Յովհաննէս կամողիկոսի կոնդակով (27 մարտի № 196), նշանակուեցաւ նա Շամախու թեմակալ առաջնորդ, ուր 5 տարի մնալուց յետոյ, 1842 թ. ծանր տենդով բռնուած՝ վերադարձա Ալէքսանդրապոլի և իւր հարազատների շրջանում աւանդեց Երկրացինը:

Ստեփաննոս սրբազնի դամբարանը Ալէքսանդրապոլի հին գերեզմանոցումն է, «սկ մարտկոցի» հանրէց, բլուրի գագամին: Նախապաշարուած ժողովուրդը դրա նշիւարների հրաշագործութեան մասին շատ պատմութիւններ է անում. ոմանք՝ որպէս ականատես՝ վկայում են թէ ինչպէս լոյսը կանաչ ու կարմիր բոցավառ, իջել է Երկնալին կամարներից նրա գերեզմանի վերայ. թէ բժշկում է ախտաժետներին, բորոտներին և այլն: Հայ կանայք սրբազնի շիրմի վերայ բարեխառն ջրով լողացնում են իրենց հիւանդ երեխաներին, այդ տեղ էլ փշելով այն խեցեղէն կամ ապակեալ ամանը, որով ջուրն էին բերել... : Դագաղածն տապանաքարի վերայ քանդակուած է եպիսկոպոսական խոյր և գաւագան, և արձանագիրն է «Այս է տապան հանգստեան Ստեփաննոս արք Եպիսկոպոսի Խաժակեան. Թվին 1842 մայիսի 5-ին»:

եպիսկոպոս և վանահայր Սանահնի վանքում): Սա վերանորոգել է Ղօշա-վանքի առաջնորդարանն ու միաբանութեան սենեակները, ինչպէս որ վկայում է՝ տակաւին ոչ մի տեղ չընդօրինակուած՝ ո. Յովհաննէս վանքի հարաւային որմի վերայ քանդակուած յիշատակարանը.

«ԹՎՆ ՀԱՅՈՑ ՌՅԲ ԵՒ ՑԱՄԻ ՓՐԿՉԻՆ 1853, ՈՂՈՐՄՈՒ-
«ԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՍ ՎԱՐԴԱԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՕԶՆԵՑԻ
«Ի ՀԻՄԱՆԿ ՇԻՆԵՑԻ ԶԱՐՆՉՆՈՐԴԱՐԱՆ ԵՒ ՄԻԱԲԱՆԻՑ
«ԶՈՒԹՆ ՍԵՆԵԱԿ ԶՄԻ ՏՆՏԵՍԱՏՈՒՆ ԻՒՐ ՄԻ ՀԱՄ-
«ԲԱՐԱՆՈՑԱԻ ՑԱԼՈՒՐՍ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԻՄՈՑ
«ՖՎԱՆ ՀՈՌՈՄՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԱՐԴԵԱՄԲ
«ԹԵՄԻՍ ԿԱՐՍԱՅ Ի ՑԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՑ ԻՄՈՑ ԵՒ ԱԶԳԻՄ
«ՀԱՅՈՑ ԱՐԴ ԱՂԱՋԵՄ ՑԻՇԵԼ ԶԻՍ ԵՒ ԶԱԶԳՆ
«ԻՄ ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՐՈՑ ՄԻՇՅ ՊԱՐՏԱՒՐ
«ՀԱՄԱՐԻՄ ԶԱՆՉՆ ԻՄ ԵՒ ԽՆԴՐԵՄ Ի ՑԱԶՈՐԴԱՑԴ
«ԻՄՈՑ ՇԵՆ ՊԱՇԵԼ ԶՎԱՆՍ ՈՐՊԵՍ ՑԱՆԿԱՅ ԱԶԳՆ ՀԱՅՈՑ».

1854— 6 Իսրայէլ վարդապետ.

1857 Միքայէլ քահ. Կարնեցի (առաջ. տեղապահ).

1867—73 Յովհաննէս արք-եպիսկոպոս Ռշտունի¹.

1873 Գրիգոր վարդապետ Յովհաննիսեան (այժմ արք-եպիսկոպոս)։

1873— 5 Տիմոթէոս վարդապետ Սափրիչեան (առաջ. նորդական տեղապահ)։

1876—87 Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց (առաջ. տեղապահ). 1879 թ. հոգևոր գործոց կառավարիչ Կարս և Բաթում նահանգաց, 1887 թ.—մայիսից-դեկտեմբեր — Յաջորդ կամ փոխանորդ Վիճակին հայոց Կարուց):

¹ Վախճանել է Կարսում մարտի 23-ին 1873 թ. և Թաղում է ու Աստուածածին եկեղեցու գաւթում, հիւսիսային պատի մօտ:

Յաջորդներ կամ պատրիարքական փոխանորդներ
Կարուց:

1880—90 Յուսիկ վարդապետ Մովսիսեան.

1891 Նահապետ աբեղզայ Նահապետեան:

Կարսի յաջորդական վիճակն ունի՝ մի քաղաք, 3 գեւղագապաքներ (Կաղգուան, Արդաշան և 0լթի) և 82 հայաբնակ զիւղեր, բաժանուած 10 առանձին գործակալութիւնների, որոց ընդհանուր (հայ աղջաբնակութեան) թիւն է 5174 տուն կտմ 40748 հոգի. գրանցից՝ 21211 արական և 19537 իգական սեռից: Ունի 70 եկեղեցի 80 քահանաներով և 3 հատ շեն կամ մարդաբնակ վանքեր՝ Սնի, Ղօշավանք և Խծկոնք, 4 վարդապետներով, 2 նշանաւոր ուխտատեղիներ՝ Վարդիկհայր (ու Թաթուլ և ո. Վարոս) և ո. Գէորգի Բագարան աւանում: Դպրոցների թիւն է՝ (189²₃ ուսումն. թ.) 9, որոց մէջ սովորում են՝ 835 աշակերտներ, 251 աշակերտուհիներ. ուսուցիչներն են՝ 23 և վարժուհիք՝ 3:

Կարսի վիճակը ենթարկում է ներկայումս Երևանի թեմին և համարւում է պատրիարքական (կաթողիկոսական) փոխանորդութիւն: 1886 թ. ղեկտեմբերի 23-ի, Բարձրագոյն Հածութեան համաձայն՝ բացուեցաւ այս տեղ հոգևոր Կառավարութիւն մայիսի 10-ին 1887 թ. որի (բացման) համար յատկապէս ժամանեց Կարս, Սինողի նախկին անդամ՝ Տ. Մեսրովը սրբազն Արք-եպիսկոպոս Սմբատեանցը:

Անդամութեան պաշտօն վարել են՝

Ղուկաս աւագ քահանայ Արծրունի,

Միհաս քահանայ Տէր-Պետրոսեանց,

Մելքիսեդեկ քահանայ Մանուկեանց,

Զօրաբարէլ քահանայ Ղօլանձեանց,

Յակովը քահանայ Կիրակոսեանց:

կանութիւնը «սնանկացած» գրութեան մէջ է լինում
Կարսում, իսկ վիճակի գիւղերը՝ «ամենադառն չք ա-
ռութեան» ենթակայ, «որովհետեւ լցուել են նորեկ
գաղթականներով»...

1879 թ. յոյց է տալիս ո. Սինօդին¹ որ «յանձկու-
թենէ և յանբերութենէ տարւոյն» ոչ ինչ վիճակային
արդիւնք չի գոյացել:

1880 թ. Շիրակի 34 գիւղերը բաժանելով Կարսի
առաջնորդութիւնից, (մինչեւ յունուարի 1-ը 1883 թ.)
Սինօդը անտարակոյս նուազեցնում է սրբազնի արդիւն-
քը, որի առթիւ և սկսում է բաւական սուր բանակ-
ցութիւն ո. Սինօդի և Գեր. Աղուանիանցի միջև. ահա
թէ ՚ի միջի այլոց ինչ է ասում իւր՝ յունիսի 6-ի,
1881 թ. № 56 յայտարարութեան մէջ՝ «՚ի սկզբանէ
«յունուար ամսոյ 1881 ամի մինչեւ ցարդ ծախքն ա-
«ոաջնորդարանին լեալ են 552 ր. 63 կ. չնայելով ամե-
«նակերպ անվայելու ինայողական վարմանց մերոց, և
«զայդոսիկ ևս լրացնեալ եմք փոխառութեամբ միայն՝
«իսկ արդիւնքն նոյն թուականին գոյացեալ է՝ (ց 6-ն
«յունիսի) 75 ր. 70 կ. միայն: Ուրեմն առաջնորդարանն
«հետպշեաէ ընդ լծով պարտուց անկանի»:

Իսկ ընդհանուր ծախք և մուտք նոյն՝ 1881 թ.
որպէս ինքը հաղըրդում է ո. Սինօդին, յայտարարու-
թեամբ 17 յունիսի 1882 թ. եղել է՝ «2040 ր. 33 կ.
«ընդհանուր եկամուտն նոյն ամի՝ ընդամենը՝ 917 ր. 65
«կ. ուրեմն զեղջելով զեկամուտն ՚ի ծախուց՝ 1122 ր.
«68 կ. պակասի... ուստի ինզրեմք առնել փութանակի
«անօրէնութիւն ՚ի վճարել զպակասորդն ծախուց 1881
«ամի, նոյնպէս և մի տնօրէնութիւն վասն կառավարու-
«թեան 1882 ամի, գոնէ հաւասարեսցեն ծախք և եկա-

ՎԻՃԱԿԱՅԻՆ ԱՐԴԻՒՆՔ.

Ինչպէս ամենուրեք Տաճկահայաստանում, նոյնպէս
և Կարսի առաջնորդարանը պահպանում էր վիճակային
արդիւնքով, որոնք էին՝ պատահարամ, հոգեբաժին, մլր-
տութեան «Լուսադին» և այլն: Իսկ պտղի՝ ցորեան, գարի,
իւղ, պանիր և ուրիշ հասցեները մինչև 1876 թ. ստա-
նում էր հոռոմոսի մենաստանը:

Օսմանցոց տիրապետութեան ժամանակ, 1830 թ.
յետոյ, Կ. Պոլսի պատրիարքարանին տրւում էր միմիայն
վանքերից և եկեղեցիներից ստացուած «Մուխատայ» ա-
նունով տուրքը (1870-ական թուականներին՝ 4 հազար
զուռուշ քանակութեամբ իւրաքանչիւր տարին), որ եկե-
ղեցական եկամուտների մի տեսակ տասանորդ էր համար-
ւում: Իսկ նախ քան յիշեալ 1830 թուականը, սկսեալ
1765 թ. լինելով տէրունի վիճակ ո. էջմիածնի, որոշ
քանակութեամբ կամ չափով ցորեան, գարի, իւղ և
պանիր «պտուղ» էր տալիս Մայր Աթոռին¹:

1876—87 թ. թէեւ յիշեալ բոլոր հասցեները,
նաև Բաթում նահանգի, ստանալիս է եղել Գրիգորիս
հալիսկոպոս Յղուանիանցը, սակայն ինչպէս ցոյց են տա-
լիս պաշտօնական գրութիւնները (ո. Սինօդի և Վեհ.
կաթողիկոսի հետ ունեցած), անկարող է եղել իւր առաջ-
նորդարանը (ինքը, մի գրադիր և մի սպասաւոր) պահ-
պանել: Բացարելով այսպէս՝ 1877—81 թ. վաճառա-

¹ «Զամբռ» (Երես՝ 50 և 248):

¹ Յայտարարութիւն 13 փետրվարի 1879 թ. № 15.

« մուտն միմեանց, զի կարասցուք մեք կատարել դպար-
« տառը ութիւն պաշտօնավարութեան մերում, քանզի
« անհնարին է մեղ այդ չափ եկամաիւ կառավարիլ վասն
« անհրաժեշտ ծախուց և յազագս զանազան հանգամա-
« նայ տեղւոյս՝ զի այնքան անձուկ և այնքան թշուառ
« է առաջնորդական վիճակ տեղւոյս, որ երբէք ոչ կարէ
« համեմատիլ ընդ այլ առաջնորդական վիճակս: Աստա-
« նօր բացի վիճակային արդեանց, 'ի պսակահարկաց, հո-
« գեքաժնից և 'ի պատղոց այլ կողմանի արդինք իսպառ
« ոչ գոն, որպէս այլ առաջնորդաց, օրինակ՝ աջահամ-
« բոյր, նուեր և այլն:

Եյսպէս ուրեմն, բայցի այն՝ որ Գրիգորիս եպիսկոպո-
սի առաջնորդութեան ժամանակ Մայր Աթոռը Կարսի
նահանգից, որպէս Հայրապետական թեմից (առաջնորդու-
թիւն Այրարատայ) ոչ ինչ արդիւնք չի ունեցել այլ և
Բաթումի նահագի հետ միասին, Կարսի ընդարձակ վի-
ճակը չի կարողացել առաջնորդարանի տնաեստական պի-
տուքը հայթհայթել, որ և սրբազան առաջնորդը եղել է
«ընդ լծով պարտուց»...

Աղուանեանց եպիսկոպոսի ցոյց տուած հաշուով
աթոռային արդեանց մուտք եղել է¹.

	Մ ո ւ տ ք		Ելք ԿԱՄ ՇԱԽԹ		Պակասորդ	
	Բուրլի	Կոպ.	Բուրլի	Կոպ.	Բուրլի	Կոպ.
1881 թուին . .	917	65	2040	33	1122	68
1882 » . .	1026	10	1367	33	341	23
1883 » . .	867	15	1227	4	359	89
Ա.մենը . .	2810	90	4634	70	1823	80 ²

¹ Տումար պատճէնի նամակաց առաջնորդարանին 1884—5 թ.
երես 28, յայտ. 'ի Սինողն № 101, 1 մալիսի 1884 թ.

² Վերև յիշուած՝ № 101, յայտարարութեամբ Գրիգորիս եպիս-

իսկ համեմատական հաշուով պիտի գտնենք, որ
վերջին երեք տարւայ ընթացքում, Հոգեւոր Կառավարու-
թեան մեջ գոյացել է զուտ վիճակային արդիւնք՝

Մ Ո Ւ Տ Ք			Բուրլի	Կոպ.
1890 թուին	4012	82
1891 »	3607	35
1892 »	4147	78
Ա.մենը . .			11767	95

կոպուր ինդրում է ս. Սինողից՝ «...Կարգադրութիւնս առնել հատու-
« ցանելոյ զավականեալ գոմարն վերոյիշեալ երից ամաց... ծախք մէկ
« չնեն ինչ ծանունք վասն միոյ առաջնորդարանի, այլ սակայն անհնա-
« րին ևս է ծշտել, զի մեր յոյժ տնտեսութեամբ և բաւականասիրու-
« թեամբ վարեալ է, որպէս յայտնի է 'ի մատենից, որպիսօք կարեմք
« պատահաբար ասել, ոչ ոք պաշտօնեայ կարէ վարիլ» 'ի դէպ՝ պէտք
է նկատել և այն որ՝ նոյն սրբազան Գրիգորիս եպիսկոպոս Աղուա-
նեանցը իւր՝ մալիսի 23-ի, 1884 թ. № 107, յայտարարութեամբ ոչ
միայն հրաժարում է իւր դրամական պահանջից, այլ և պարտաւոր-
« ւում է՝ ժխստանամ և պարտաւորիմ ամի ամի առաքել շարունակ
« յարդեանց վիճակին զիինդ հարիւր բուրլի յօպուտ ծեմարանի Աթո-
« ռոլդ ցորչափ ժամանակ կամ 'ի պաշտաման առաջնորդութեան անր
« (Կարուց) վիճակի. . .»:

և փոյթ ունենալ, իւր տեսչութեան ներքեւ գտնուող խորհրդոց կողմից մատուցած ազգօգուտ առաջարկութիւնները ուշադրութեամբ քննել հաստատել և այլն¹: Այս ժողովը ունէր և իւր «խորհուրդը» մի ատենապետից և մի ատենապարից բաղկացած, որոնք կառավարում էին «նիստերը»:

3. Ուսումնական խորհուրդ, որ կազմում էր քաղաքական ժողովի կողմից և բաղկանում էր 7 ուսումնական աշխարհականներից, 2 տարի ժամանակով՝ պաշտօնն էր՝ վարել վիճակի դաստիարակութեան և կրթութեան ընդհանուր տեսչութիւնը: Պարտաւորութիւնն էր՝ ազգային ուսումնարանների բարեկարգութեանը հսկել. մանուկ սերնդեան (թէ՛ աղայոց և թէ՛ աղջկանց) դաստիարակութեանը հոգ տանելու նպատակով՝ հաստատուած ընկերութիւններին խրախոյս առաջ և ձեռնտու լինել, ուսուցչոց կայութիւնը բարւոքել և ապագան անդորրելու խնամ տանել²:

4. Թաղական-խորհուրդ, պաշտօնն էր՝ եկեղեցու և զպրոցների հոգաբարձութիւնը, աղքատաց խնամակալութիւնը և ազգայնոց մէջ պատահած վէճերի քննութիւնն ու խաղաղասիրութիւնը: Կազմում էր ժողովրդեան ընտրութեամբ և խառն՝ կրօնական ու քաղաքական ժողովների հաստատութեամբ և տարի ժամանակով. թաղական խորհրդի տրամադրութեան տակ գտնուում էր եկեղեցու և ուսումնարանի գանձարանը՝ «սրնդուկը»³:

Բացի յիշեալ ժողովները, Օսմանեան կայսերութեան զանազան ատեաններում, ինչպէս օրինակ՝ «Խտարէ-Մէջլիսի», «Պէլիտիէ-Մէջլիսի» և այլն, գտնուում էին նաև

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ.

Եկեղեցական կամ ազգային գործերը, ինչպէս ամենուրեք Օսմանեան կայսերութեան մէջ, նոյնպէս և Կարսի առաջնորդական թեմում սկսեալ 1863 թ. այն է՝ «Սահմանադրութեան» գործադրութեան ժամանակից կառավարուելիս են եղել հետեւեալ վարչութեանց կամ մարմինների ձևոօք, տեղական առաջնորդի՝ որպէս պատրիարքական փոխանորդի՝ նախագահութեամբ. 1, ազգային-կրօնական ժողով. կրօնական գործերի համար, որ բաղկանում էր բանիբուն եկեղեցականներից. ընտրում էր ընդհանուր ժողով՝ 2 տարի ժամանակով և պարտաւոր էր ազգի մէջ կրօնական զգացումը զարգացնել հայաստանացու դաւանութիւնները անխախտ պահել և այլն, որպէս որ տրամադրում է «ազգային Սահմանադրութիւնը»¹:

2. Ազգային-քաղաքական ժողով. քաղաքական գործերի համար, բաղկացած էր ազգային գործոց և աէրութեան օրինաց փոքր՚ի շատէ տեղեակ մարդկանցից. ընտրում էր նոյնպէս ընդհանուր ժողովից 2 տարի ժամանակով. պարտաւորութիւնն էր՝ ազգային-քաղաքական (համայնական) գործերի ընդհանուր տեսչութիւնը. ազգի բարեկարգութեան ու առաջադիմութեան մտավորութիւն

¹ Յօդ. 24—35 աղդ. Սահմանադր. Հայոց, հրատ. 1863 թ.:

¹ Յօդ. 36—43 աղդ. Սահմանադր. Հայոց:—² Յօդ. 45 նոյն Սահմանադր. Հայոց հրատարակ. 1863 թ.:—³ Յօդ. 52—56 նոյն Սահմանադրութեան:

Հայ ազգի ներկայացուցիչները. իսկ առաջնորդը համար-
ւում էր անդամ «Խոտարէ-Մէջլիսի» (նահանգական կա-
ռավարութեան), ուր նրանք պաշտպանում էին հայ ժո-
ղովրդեան դատն ու իրաւունքը:

Ենթարկուելով Կարուց նահանգը Ռուսաց ինքնա-
կալութեան, անտարակցու բատ հոգեորին էլ կառավա-
րուելու էր Ռուսաստանում ընդունուած օրէնքներով,
սակայն Գէորգ Դ. կաթողիկոսը կոնդակով, մարտի 14
1879թ. № 99, հրամայել էր Գրիգորիս Եպիսկոպոս Ա-
զուանեանցին, կառավարչական գործերը վարել Տաճկա-
կան ժամանակի ձեռվ ու եղանակով, որ տեսեց համարեա
մինչև 1887թ.:

Բացի թաղական և ուսումնական խորհրդի անդամ-
ներից, որոց մասին խօսեցինք իւր տեղում, յիշուում են
աղջային-քաղաքական ժողովի անդամներ՝

1876թ. Մահտեսի Յարութիւն Միաձեանց,
Գէորգ Էլյամձեանց,
Մարգար Փալանձեանց,
Մէլքոն Շեխեանց,
Յովսէփ Մահտեսի Մկրտչեանց:

1880—3թ. յիշեալ ժողովի որպէս անդամներ՝ հաս-
տատուել են նաև եկեղոր ժողովրդի կողմից՝

1874—6	Յովհաննէս Ունջեանց, Արքահամ Շահպաղեանց, { Ատենապետ՝ Մահտեսի Յարութիւն Միաձեանց, Ատենապիր՝ Գէորգ Էլյամձեանց:
1876	{ Ատենապետ՝ Յովսէփ Մահտեսի Մկրտչեանց, Ատենապիր՝ Գէորգ Էլյամձեանց:

1883թ. (օգոստոսի 26 ընտրութեամբ յիշումնեն).

Բժ. Աղէքսանդր Ղաղաղեանց,

Յովհաննէս Ունջեանց,
Մարգար Փալանձեանց,
Մէլքոն Յարութիւնեանց (Շեխեանց),
Գրիգոր Սբորչիկեանց:

Կրօնական ժողովի անդամներ.

1876—87 Ղուկաս աւագ Քահանայ Արծրունի,
Զօրպարէլ Քահանայ Ղուանձեանց,
Սաղաթիէլ Քահանայ Տէր. Դաւթեանց,
Մէլքիսեդէկ Քահանայ Մանուկեանց,
Պողոս Քահանայ Տէր. Միքայէլեանց (Ղանի
գիւղացի),
Յակով Քահանայ Կիրակոսեանց,
Շմաւօն Քահանայ Տէր. Մարուքեանց,
Աղէքսանդր Քահանայ Յովսէփեանց,
Մարգիս Քահանայ Բղնունի,
Մինաս Քահանայ Տէր. Պետրոսեանց:

ԱՐԱՏՈՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԾՍՆԱԺՈՂՈՎ.

Բացի վերևում յիշուած վարչական մարմինները՝
Կարսում եղել է նաև մի առանձին մասնաժողով՝ «Յօ-
գուտ աղքատաց հանգանակութեան փողերի», որ շուկայի
և եկեղեցիների մէջ զրամ հանգանակելով՝ բաժանելիս է
Եղել չքաւորներին, ծխատէր քահանաների վկայութեան
համաձայն (չքաւորութեան մասին):

Այդ մասնաժողովի գոյութիւնը տեղել է մինչև 1881
թ. որ ժամանակ ազգային-քաղաքական ժողովի որոշ-
մամբ անցել է երեսփոխանութեան իրաւասութեան ներ-
քե: Անդամներ յիշուում են՝

1879—81 Գէորգ Էշրամճեանց,
Մելքոն Շեխեանց,
Թորոս Զմշկեանց,
Աւետիս Փափաղեանց,
Մկրտիչ Կարնեցի:

ՈՒԽՏԱՑԵՂԵՐ.

Քաղաքի «Զուխում» թաղի բարձրում, Ախուրեան
գետի ձախակողմը, քարքարոտ զառիվայրի լանջով տա-
րածուած են Հայկական, մամուապատ գերեզմանները, խառն՝
կարծր վիմից պատրաստուած՝ սեան կոփածոյ խոյակների,
խարիսխների, բոլորչի սիւնեակների, քանդակած կամար-
ների, գողտրիկ խաչերի և ուրիշ՝ եկեղեցու համար յատ-
կապէս շինուած ու կոփուած, բայց ցարդ երեսի վերայ
անդործազրելի թողուած, հնագոյն զարերի յիշատակու-
թեանց հետ... Կենդանի պատմութիւնը այդ մահարձան-
ների մասին շատ սակաւ տեղեկութիւն ունի. գիտէ միայն,
որ Աբասեան օրերից գոյութիւն ունի նա. այդ տեղ են
ամփոփուել հերոսների ու սրբերի աճիւնները, այդ տեղ
շատ անգամ ծածկուել է հայ մարդի ունեցուածքը օտա-
րի յափշտակութիւնից զերծ մնալու համար:

Կարսեցի ջերմեռանդ հայը, ըստ վաղեմի սովորու-
թեան, երբեմն այցելում է այդ հին սրբավայրը և պարագ
է համարում իրեն առանձին յարգանօք մերձենալ համ-
բուրելու մի յայտնի զամբարան. խեցեղէն ամանի՝ բուր-
վառի՝ մէջ նա խունկ է ծխեցնում և մոմեր վառում
նրա առջե... .

Հայ կինը այդ գերեզմանի շուրջը պատեյնում, զրա
վերայ, տարուայ որ եղանակին և լինի, լողացնում է իւր

տկար մանկանը և առողջութիւն է հայցում... Դա «ՆՈ-
ՇԱ.ՑԱ.ԿՆ» է՝ Տէր-Սարգսի դամբարանը՝ մի անշուք քա-
րակյտ, որի վերայ, որպէս մշտնջենական անթառամ
պսակ, տարածուած է մի հին, քանդակուն խաչարձան,
շրջապատուած վարդենիներով ու ցածրիկ թփերով. իսկ
գործնան վերջին՝ նաև կանաչ սէզով ու անուշհոտ ծա-
ղիկներով... և եթէ լեզու ստանան դրանք, անտարակցոյս
պիտի վկայեն ինչ որ խօսում է այսօր կենդանի աւան-
դութիւնը, ինչ որ զլում են ժամանակակից յիշատակա-
զիրներ «Նահատակի» մասին:

Սրանից գրեթէ մի գար առաջ, այն է՝ 1796 թ.
յուլիսի 25-ին, Վարդավառի պահոց ուրբաթ օրը, կա-
տարւում է խղճոյկ Տէր-Սարգսի քահանայի նահատակու-
թեան քստմնելի զործը, որ Վարդավառի տօնին պատա-
րագիչ լինելով, գնում է բաղանիք լողանալու. հազիւ-
թէ սկսում է լողանալ երբ մտնում է մի տաճիկ կղերա-
կան՝ մի ֆանատիկ մօլլա¹: Տէր-Սարգիսը անտարակցոյս
չկարողանալով ձանաչել մերկ մարդին իւր կոչումնին ու
պաշտօնովը, չե՛ մատուցանում նրան պատշաճաւոր յար-
գանքը:

— Միթէ գեաւուրը (անհաւատ) այնքան մեծացաւ,
որ էլ չի զեցանում ոտի կանգնել ողջունելու իսլամ
կղերականին... — այդպիսի խօսքերով է զիմում մօլլան՝ Տէր
Սարգսին և անցապաղ զժոխային ձիչով ու աղաղակով
դուրս է ընկնում փողոց և յանուն Մեծ-Սարգարէի,
հրաւիրում է զուռանականներին վրէժխնդիր լինել մի
անհաւատի դէմ, որ համարձակուել էր՝ «կրօն և զաւան-
մունք» հայհցել իրեն. . .

¹ Կենդանի աւանդութիւնը հաւաստիացնում է որ դա եղել է՝
«Ղարա-Ղաղի» անուանուած, ապստամբ չարագործը. որ փաղիշահի
հրամանով գլխատուեց «Խշ-զալէյում» (միջնաբերդում):

Ֆանատիկ ամբոխը սոսկալի կատաղութեամբ ար-
ձակւում է քահանայի վերայ և անտանելի գանահարու-
թեամբ ներկայացնում է նրան փաշայի դատաստանին:
Սւելորդ է ասել երկրի պետն էլ իւր զարգացմամբ խա-
ժամուժից այնքան բարձր չ'լինելով, արգարացնում է նրա
(ժողովրդի) տաճած յոյսը և որոշում է՝ «կամ ընդու-
նել ճշմարիտ հաւատը՝ կամ մահանալ»: Տէր-Սարգիսը
դերադասում է մահը ուրացութիւնից... .

Տեղական հայ ազգաբնակութիւնը անմիջապէս դի-
մում է փաշային, զրամով մեզմացնելու իսլամ իշխա-
նաւորի զայրցյմը և առաջարկում է փրկանքի համար՝
50 հազար զուռուշ. փաշան հրաժարում է ընդունել
ոսկիները և հրամայում է զլիսատել նրան: Տէր-Սարգսի
արիւնոտ զին տաճիկ է տալիս միջին կամրջի վերայ,
որ իսլամ երթեւեներից անարգուելով՝ զգաստութեան
օրինակ և խրատ լինի գեաւուրներին... Այնուհետև աղ-
քատիկ երիցակնոջից մի և կէս լիտր սուրձ տունելով
թոյլատրում են զին հողեն յանձնել¹: Այս վերջի կտորը
զրուատում է հայ ժողովուրդը այսպիսի պատմութեամբ.
Նահատակի զին երկու զօր և երկու գիշեր անարգուած
ֆնալով, երրորդ զիշերին երեսում է նրա վերայ լուսեղին
սիւնը, որ կանաչ ու կարմիր գոյներով իջնելիս է եղել
երկնային կամարներից... . Թուրքը տեսնելով այդ՝ ըն-
գունում է Քրիստոնէական հաւատի սրբութիւնը և հրա-
ւիրում է հայ համայնքին վայելուչ հանդէսով թաղել
սուրբի մարմինը. . .

Տէր-Սարգիսը իւր սրբակեցութեամբ, առաքինի վարք
ու բարքով մի փայլուն աստղ է լինում ժամանակակից
հայ հոգեսրականութեան մթնոլորտաւում. հազուագիւտ՝

¹ Կարսեցի Մեծ Տէր-Աւետիք և Յովհաննէս քահանայք (ծեռա-
գիր լիշատակագրութիւններ):

որպէս անձնուրաց հովիւ իւր բանաւոր հօտի համար, յայտնի՝ որպէս մարմնացած քրիստոնէութիւն. . .

Նախ քան Սարգիս քահանայի նահատակութիւնը, ուխտատեղի է եղել նաև այժմեան յունաց նորաշէն եկեղեցու տեղում, հին վանքի բեկորների մօտ գտնուող վարդապետի դամբարանը, ուր ջոլիր-ծոլիր յաճախելիս են եղել՝ զիւղական ժողովուրդը և քաղաքի քրիստոնեայ աղջաբնակութիւնը:

Ո՛չ պակաս նշանակութիւն է ունեցել իսլամ և քրիստոնեայ ժողովրդեան աչքում նաև այժմեան՝ «Էվլիա-ջամիի» մէջ գտնուող՝ «սուրբ Մինաս» անունով նահատակի հրաշագործ գերեզմանը, որ տակաւին պահպանում է Օսմանյոց ձեռքում պատշաճաւոր ակնածութեամբ ու յարգանքով:

Հաւատի համար այստեղ նահատակների թւում յիշւում են նաև Բէնկլիահմէտ զիւղի ծխատէր՝ Մկրտիչ քահանան և Գալօ-քեահան, որոնք թաղուած են Տէր-Սարգսի գերեզմանի մօտ: Այդ երկու պաշտօնական անձանց նահատակութեան գործը պատմում են այսպէս՝

18.. Թուականին, երբ առաջին անգամ գալով կարս, նոր հաստատուած փաշան (նահանգապետ) ճանապարհի վրայ, Բէնկլիահմէտ զիւղում, իջեանում է Գալօ-քեահայի տանը. առատասեղան տանուտէրը ոչ միայն համադամ կերակուրներով հիւրասիրում է նրան, այլ և հազուադիւտ և թանգագին ընծաներով ողջունում է նորեկ փաշայի այցը. ընծաներ է տալիս նաև փաշայի ամբողջ ուղեկից խմբին: Քահանան մի ընտիր, արաբական նժոյդ է ընծայում փաշային և այլն: Քրիստոնեայ աղդաքնակութեան այս օրինակ հարուստ և փարթամ դրութիւնը այն աստիճան շարժում է չարամիտ և մոլեռանդ դուռանականի սրտմտութիւնը, որ անմիջապէս կոչում է այդ երկու աղդեցիկ՝ հոգեոր և մարմնաւոր ներկայացուցիչներ:

րին կարս և քարաշէն կամրջի աջ ափին, հրապարակի վրայ (այժմեան թովս. Կիւրեղանի տան աեղը) երկուսին էլ միասին զլիսատել է տալիս¹: Նշանակում է տիրող տարրի կամ իշխանաւորի կողմից հայր հաղածուել է և յարգելիս, և՝ անարգելիս, և՝ հարստութեան, և՝ չքաւութեան համար. . .

Ուխտատեղի է եղել նաև հՀ-գալէի (Միջնաբերդ) սուրբ Սարգսի մատուռը, որ թուրքերը իսպառ քայքայեցին 1873 թուին:

Գլխաւոր ուխտատեղերից մէկը եղել է և է՛ այսօր «Միանձուկը», որ գտնուում է քաղաքից մի վերստացափ հեռաւորութեամբ զէպի հարաւ-արևմատ, բերդական խճուղու բարձրում: Դա իսկապէս մի նեղ քարանձաւ է, մի մթին ծերպ սեպացած ժայռերի մէջ ասում են որ այդ տեղ սրանից շատ զարեր առաջ, ձզնելիս է եղել աստուածահածոյ մի անձն. խստաձարակ և զուրկ մարդկային տեսութիւնից... չերմեռանդ հայր խունկ ու մոմով զիմում է սեպացած ժայռերին և ս. Միանձուկի բարեխօսութիւնը հայցում: թէև սրբութեան այդ վայրը բացի ուխտատեղի լինելուց, նաև զուարձութեան տեղերից ու զքօսավայրերից մէկն է, նրա մօտ բղխում է սառնորակ, մաքուր ջուր, որ բորոտութեան և ուրիշ ախտերի զէմ: բժշկող նշանակութիւն ունի... վատ չէ նաև մարտողութեան համար. . .

Այս քարաժայռերի մօտ մի ժամանակ (մինչև 1881 թ.) գյուլթիւն ունէր նաև հին-կարսեցոց նկատմամբ, պատմական նշանակութիւն ստացած՝ «Պլստան-քարը», որ մի կարծր վէմ էր, հարթ կամ յղկուած մակերեւութով. այդ տեղ յաճախում էին ամուլի (չ'բեր) կանայք, որ գեծնութեան համար. . .

¹ Կենդանի աւանդութիւն:

1830 թ. Կարսից գաղթող հայ ժողովրդեան թիւը համուռմ էր 5—5500 հոգու, կամ՝ ըստ ժամանակակից յիշատակազիրների՝ 693 տուն¹:

Յիշեալ գաղթականութեան պատճառ կամ պարագուխ էին համարւում տեղական առաջնորդ՝ Ստեփաննոս Արքեպիսկոպոս Խաժակեանցի հետ նաև հետեւալ ազգեցիկ աղաները. Մահտեսի-Աւո, Մեծ Յակոբ, Փոքր Յակոբ, Նազարէթ և Սարգիս Դիլանեանցներ² և Մկրտիչ Յարութիւնեանց³: Կարուց նահանգի ժողովուրդը խառնուած Կարնոյ գաղթականների մի մասի հետ, 1830 թ. յունիսի 14-ին անցնելով նոր նուածած ռուս-օսմաննեան սահմանագլխով Արքաչայ գետից՝ աննշան բացառութեամբ⁴ հաստատում են իրենց բնակութեան մշտական տեղին նախկին Կումայրի (Գիւմրի) կամ այժմեան Ալքսանդրապոլ քաղաքում:

Կարսի ժողովուրդը իւր հետ փոխազրեց այդ նոր հայրենիքում ոչ միայն քահանաներին ու եկեղեցական հարստութիւնը՝ այլ և սրբոց բոլոր մասունքներն ու թանկագին ձեռագրերը, որոնք կրուած են այժմ, զիսաւորապէս, և Աստուածածին եկեղեցու խորանում և նոյն եկեղեցու մէջ: Դրանց թւում իւր գեղեցիկ զբչութեամբ և ոսկեխառն սկարներով նշանաւոր կամ հազուազիւա կարող է համարուել «Մեռել յարուց» հրաշագործ ա-

¹ Արժ. Գիւտ քահանայ Աղանեանց իւր՝ «Կարնոյ գաղթը» նկարագրութեան մէջ հաշուում է մօտ՝ 600 տուն:—² Այժմ Տիգրանեանցներ:—³ Հայթա-Մկօ:—⁴ Մի քանի ընտանիքներ անցել են դէպի Տաշշիր և Մեծ Ղարաքիլիսա գիւղում հաստատել իրանց բնակութեան տեղին:

Կրօնական դանագան պատկերներով, տակաւին գտնուում են՝ Տիկոռու սուրբ Երրորդութիւն քանքի, Ալէքսանդրապոլ քաղաքի և Աստուածածին եկեղեցու և վիճակի մի քանի եկեղեցիների մէջ: Դրանցից մի քանիսը տպուած են Ժի-դ դարի երկրորդ քառորդում:

Վերջին ժամանակներում (1885) լոյս ընկաւ նաև ուրիշ ուխտատեղի՝ «Նոր ամանուկ» անունով, որ յայտնուել է երազի թելագրութեամբ, գերձակ Սարգսի բնակարանում, «Չուխուր» թաղի մէջ: Դա մի հին գերեզմանն է (հասակաւոր մարդի). տապանաքարը արձանագրութիւն կամ մի այլ քանդակ չունի: Մեծ է յածախող ուխտաւորների թիւը. այդ տեղ գնում են՝ առանց կրօնի խրութեան՝ և՛ հայեր, և՛ թուրքեր, և՛ յօյներ. . .

ԿԱՐՍԵՑՈՅ ԳԱՂԹԸ ԵՒ ԲՆԱԿՉԱՅ ԹԻՒԾ.

1807 թ. Ռուս-Տաճկական պատերազմի ժամանակ Կարսում յիշւում է 17 թաղ (մահի) կամ ալուարձան իրենց 30-ի չափ առանձին մզկիթներով: Այդ թաղերը կոչւում էին՝ Վարդան-օղլու, կամ, ըստ առաջաց՝ Գեօնջ-օղլի, Թէզ-խարաբա, Սու-գարի, Խւսուֆ-փաշա, Զամիի-ջարիդ, Զամիի-աթըղ (այժմ Բայրամ-փաշա), Օրթա-գարբու, Տաշ-բաշի, Ղալա-իչի, Հաճի-Սէյիդ, Զաբրդարսի, Չուխուր կամ՝ Խալիֆ-օղլի, Ժամանակակից կամ՝ ըստ տաճկաց՝ Աշմադ-փաշա, Հաճի-Շարիֆ, Մստավա-աղա և Շէրամակօլ (Շարամբա), վերջինս հրապարակ կամ վաճառուաց, ուր և լինում էր տօնավաճառ մայիս ամիսներին:

Այստեղ եղել է՝ 450 կրպակ. 4 բաղանիք (Ելբակի, Մազլումի, Վազ-օղլու և Զումայ-Համամի), 1 Հայկական եկեղեցի, 4 կարաւանատուն, 1 ջրաղաց, 17 հատ ոստայնանկի գործարաններ¹ և 3200 տուն բնակիչ, որոց 600 տունը հայեր, իսկ մնացեալ՝ 2600-ը Օսմանցիներ:

¹ Ժէ և Ժը դարերում Կարսը նշանաւոր է եղել իւր արտադրած ընտիր կտաւով ու ծաղկանկար՝ գունաւոր չթով: Կարսում պատրաստուած եկեղեցական ընդարձակ վարագոյրներից (աւագ սեղանի),

ւետարանը: Գրուած է դա թանձր, գեղնագոյն, մոմած թղթի վերայ. բոլորագիր. ունի 33 հատ սակէզօծ ու գունաւոր ամենաընափառ պատկերներ. (բացի լուսանցներինը): Կազմը արծաթապատ է և ականակուռ, աւետարանիների ու Տիրամօր ուսուցիկ, արծաթեայ արձաններով զարդարուած: Գրուած է՝ «Ի Մեծ թուականիս Պ.Զ.Զ.» (1437) 'ի կաթողիկոսութեան հայկազեան Տեսան Տ. «Կոստանզեայ Կիլիկեցւոյ... 'ի վաճքս որ Փամաղեկլ կոչի, «ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Փամաղեկլի. . . 'ի դառն և 'ի նեղ ժամանակի յիշատակ աստուածաւը «և հաւատարիմ Տանուարոջն Թումային և իւր կողակ- «ցին Հռիփսիմէին և դեռաբոյս զաւակացն Աբրահամու, «Գրիգորին և Յակոբին և քուերն Թանկ Խաթունին և «եղբարյն Թաղէսս քահանային, Մարտիրոսին և Յովա- «նէսին, Անտոնին և Մխիթարին: Քուերն Մարգարիտին: «Եւ Ճնողացն Գորգուն և Թանկ Խաթունին... զրեցաւ «Ճեռամբ յողնամեղ Յովիաննէս վարդապետի (որդւոյ «Վարդանի):

Ցիշատակարաններից մէկը պատմում է որ՝ Զժէ (1478) թուականին գողանալով յիշեալ աւետարանը, տարած են եղել Երզնկայ, ուր դնայել է «բարեխորհ» Առաքել քահանան և դարձրել է Աւետարանը գերութիւնից իւր բնիկ «Թայու զիւզը». «Ե (5) տարի յայ- «լոց եկաց շատ լալով և դառնութեամբ շուրջ եկի հետ «աւետարանիս. Ե (7) տմիս 'ի գուս կացի: ապա գտի. «Մ. (200) կարմիր զին տոի¹:»

